


ՀԱՅԿ ՍՍՈՒ-Ի ԱՆԱՍՆԱՊԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՒՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

ԻՇԳԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ

ՀԵՄԵԹՈՏ ԶԵՄՆԱՐԿ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ
ՀԱՄԱՐ

Կազմեց՝ գոցենս Ն. Ա. Մալարյան



636.4

15-14

ՀԱՅԱ. ՍԱՐ-Ի ԱՎԱԽԱՊՈՅՈՒԹՅԱՆ ՄԻՒՏԱՐՈՒՔՑՈՒՆ

Կազմեց դոցենտ Ե. Ա. ՄԱԼԱԹՅԱՆ

Ապրիլի 1 1961 թ.

ԿՈԶՄՈՆԻԴՈՒԹՅՈՒՆ ՀԵՄԵՐԱ
ՏԵՇՆԵՐԿ ԿՈԼԻՉՈՂՆԵՐԻ ՀԵՄԵՐ

~~2758~~

A 19094



Доц. Н. А. МАЛАТЯН

Краткое руководство по сельско-
хозяйственному производству для колхозов

(На армянском языке)
Армгиз, Ереван, 1947

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Խոզաբուծությունը անասնապահության կարևոր ճյուղերից
մեկն է:

Խոզաբուծության լայն դարգացումը հնարավորություն
կտա արագ թափով ավելացնելու երկրի մթերային ռեսուրս-
ները՝ ի հաշիվ խոզաբուծությունից ստացվելիք ճարպի և մսի:

Ելնելով այդ հնարավորություններից, Ստալինյան չորրորդ
հնգամյակում խոզաբուծությունը ստանալու է զարգացման ու-
ժեղ թափ:

Խոզաբուծության դարգացումը ընթանալու է գլխաքանակի
ավելացման, մետաղացիայի միջոցով տեղական ցածր մթերա-
տվություն ունեցող խոզերի որակի բարձրացման, ինչպես նաև
խոզերի բաման գործի կարգավորման ուղիով:

«Խոզաբուծության համառոտ ձեռնարկ կոլխոզների համար»
վերնագրով այս գիրքը կօգնի կոլխոզներին և խոզաբուծական
ապրանքային ֆերմաների աշխատողներին՝ ճիշտ կազմակեր-
պելու խոզերի բուծման, խնամքի, մատղաշների աճեցման, կե-
րակրման և բաման գործը, որը կբարձրացնի խոզաբուծության
եկամուտը և խոշոր չափով կնպաստի անասնապահության այդ
կարեւոր ճյուղի հետագա զարգացմանը:

ԽՈՉԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Խողաբուծությունն անասնապահության ամենաակտը ճյուղերից մեկն է: Կոլխոզներում և սովխոզներում խողաբուծության լայն զարգացման միջոցով մենք կկարողանանք մասմթերքներով արագ բավարարել Սովետական Բանակին, բնակչությանը և արդյունաբերական կենտրոնները:

Խողը որպես մսի աղբյուր, ունի մի շարք առավելություններ՝ համեմատած մյուս գյուղատնտեսական կենդանիների հետ: Այդ առավելությունները հիմնականում հետեւյալներն են.

1. Խողը գյուղատնտեսական կենդանիներից ամենապողառատն է: Ճիշտ կերակրման ու խնամքի դեպքում խողը մեկ ծնին տալիս է միջին հաշվով 10—12 գոշի, երբեմն էլ՝ 16—18 գոշի:

Ստեփանավանի շրջանի՝ Ստալինի անվան կոլխոզի խողապահ ընկ. Խամբեկյան Մացակը միջին թվով մեկ խողամայրից ստացել է 13 գոշի:

2. Խողը շատ վաղահաս կենդանի է: Արդեն 8—10 ամսական հասակում խողը կարող է ծածկվել (բեղմնավորվել), իսկ 12—14 ամսական հասակում տալիս է գոշիների առաջին սերունդը: Նրանք աճում են շատ արագ և ունենում են բավականի բարձր կենդանի քաշ:

Այսպես օրինակ, 1939 թ. Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում ցուցադրված էր խոշոր, սպիտակ ցեղի 2 տարեկան 3 ամսական մի վարագ, որը կշռում էր 408 կգ:

3. Խողն ունենում է ամենաբարձր սպանդային քաշ: Այսպես օրինակ, լավ բաված խողի սպանդային քաշը

9—10 ամսական հասակում կազմում է 80—82%, մինչդեռ լավ բաված տավարինը՝ 50—56%, իսկ ոչխարինը՝ 44—52%:

4. Խոզի ավելի լավ և լրիվ է օգտագործում կերի անդամյութերը: Միևնույն քանակի կերից նա 2—5 անգամ ավելի շատ միտ ու ճարպ է տալիս, քան եղը, կովը կամ ոչխարը:

5. Խոզը տալիս է բարձրորակ մասմթերքներ: Խոզի միսը, համեմատած տավարի կամ ոչխարի մսի հետ, ավելի շատ սննդանյութեր է պարունակում: Նա համեմատարար ավելի քիչ ջուր է պարունակում (50—55%), այդ պատճառով էլ խոզի միսը առանց փշանալու կարող է պահպել երկար ժամանակ, մանավանդ պահածող վիճակում:

6. Խոզը տարվա ընթացքում տալիս է ամենաշատ քանակի միս և նարպ՝ տարվա մեջ նրանից երկու ծին պահպանութեապեամբ: Առաջին ծնի գոջիները բուելիս տարվա վերջում կարելի է ստանալ 1000—1400 կգ. խոզամիս: Երկրորդ ծնի գոջիները տարվա վերջում 3—5 ամսական հասակում կունենան 300—700 կգ. կենդանի քաշ: Այսպիսով մեկ մերունից տարվա ընթացքում կարելի է ստանալ 1300—2100 կգ. արտադրանք:

7. Խոզը ամենակեր կենդանի է: Նա շատ լավ օգտագործում է բազմատեսակ կերեր: Խոզը կարող է լավ բազմանալ ոչ միայն գյուղական վայրերում, այլ և քաղաքամերձ տնտեսություններում, հիանալի կերպով օգտագործելով ճաշարանների և այլ թափթափուկները:

Խոզը կլիմայի նկատմամբ առանձնապես պահանջնություն չի ունի: Նա կարող է հաջողությամբ բաղմանալ թե հեռավոր հյուսիսի պայմաններում և թե հարավում:

Այս արժեքավոր հատկությունների շնորհիվ խոզը աչքի ընկնող տեղ է գրավում մյուս գյուղատնտեսական կենդանիների շարքում: Աշխատանքը լավ կազմակերպելու գեպքում խողաբուծությունը կարող է խոչընկամուտ տալ տնտեսությանը:

Գոյություն ունեն խողերի բազմաթիվ ցեղեր, որոնք իրարից տարբերվում են իրենց էկստերյերով (արտաքին տեսք), քաշով, պտղառատությամբ, վաղահասությամբ, կաթնոտությամբ և այլ հատկություններով։ Մենք այստեղ կծանոթանանք միայն այն կուլտուրական ցեղերի հետ, որոնք ամենից ավելի շատ տարածված են մեր Միության մեջ և հանդիսանում են որպես պլանային ցեղեր։

1. Խոչոր, սպիտակ ցեղի խոզ (յորկշիր)։ Այս ցեղի խողերը վաղահաս են. բուժան դեպքում 6 ամսական հասակում ունենում են 90—110 կգ, իսկ 12 ամսական հասակում՝ 250—300 կգ. կենդանի քաշ։ Հասուն խողերի քաշը հասնում է մինչև 450—500 կգ։

Այս ցեղի մերունները շատ պտղառատ են. մեկ ծրնին տալիս են միջին հաշվով 11—12 դոչի, իսկ շամերուններ՝ մինչև 18—20 և ավելի դոչի։ Մրանք կերը շատ լավ են օգտագործում։ Այս ցեղի խողերն աչքի են ընկնում բարձր հասակով (90—105 սմ.), ամուր ոսկեակազմով, լայն և խոր կրծքով, լայն ու ուղիղ մեջքով և զոտկատեղով, լավ զարդացած ազդեցությով, ամուր և ուժեղ ոտներով։ Նրանց կաշին բարակ է, բացվարդագույն, ծածկված է խիտ, սպիտակի փափուկ խողանով։ Գլուխը միջակ մեծության է, դունչը մի փոքր դեպի ներս ծռված։

Այս ցեղը լավ է հարմարված արոտային պահպաժին։ Համարվում է ունիվերսալ ցեղ և ունի երեք ուղղություն՝ մսային (բեկոնային), մսաճարպային և ճարպային։

2. Բերկիշիր ցեղ։ Հասակի բարձրությամբ և կենդանի քաշով սրանք զիջում են խոչոր սպիտակ ցեղին։ Հասուն բերկիշիր խողերի միջին կենդանի քաշը 180—220 կգ.։ Առանձին խողեր կշռում են 280—320 կգ.։ Մրանք վաղահատ են, արագ բովում են և տալիս են շատ բարձրորակ միս և ճարպ։ Մրանց միուր բնորոշիչում

է ճարպի համաշափ շերտերով («մարմարյա միս»): Համով և հյութալիությամբ բերկչիրի միսը գերազանցում է խոշոր սպիտակ խողերի մսին:

Սրանք կերն ավելի լավ են օգտագործում, քան խոշոր սպիտակ խողերը: Բերկչիր ցեղի խողերն ունեն ճարպային ուղղություն:

Բերկչիրները խոշոր սպիտակներից քիչ ավելի կարճ են, ունեն ավելի կլոր աղդրեր:



Նկ. 1. Խոշոր, սպիտակ ցեղի խող

Սրանց գլուխը մեծ չէ, կարճ է, ականջները կանգնած, միջակ մեծության: Մեջքն ու գոտկատեղը լարյն են: Ոտները ամուր են և ուժեղ: Բերկչիրների խողանը (մազը) սև է, խիտ ծածկում է ամբողջ մարմինը, ըսպիտակ նշաններ ունենում է ոտների ներքին մասերի և գլխի վրա-ճակատին, աստղերի ձևով: Պոչի ծայրը սպիտակ է:

Բերկչիրները լավ են հարմարված արոտին: Սրանք պլողառատությամբ քիչ հետ են մնում խոշոր սպիտակից, մեկ ծնին միջին հաշվով տալիս են 8–10 գոջի:

Կենդանիների բուծում ասելով հասկանում են նը-
րանց բազմացման ու աճեցման, նրանց որակական ցու-
ցանիշների լավացման վերաբերյալ գիտությունը:
Բուծման բազմաթիվ մեթոդներ կան: Մեր խողաբու-
ծության մեջ հիմնականում կիրառվում է բուծման մի
մեթոդը—մետիզացիա, այսինքն տեղական խողերի
տրամախաչումը կուլտուրական ցեղերի, մասնավորա-
պես խոշոր ցեղերի խողերի հետ: Մեր տեղական խո-
ղերն ունեն մի շարք պահասություններ: Նրանք մանր
են, ուշահաս են, պտղառատ չեն, նրանց մսի ու ճարպի
որակը լավ չէ: Այդ պահասությունները ուղղելու հա-
մար նրանց տրամախաչում ենք կուլտուրական ցեղերի
հետ:

Յուրաքանչյուր կոլխոզ պետք է աշխատի իր խո-
ղերի հոտը լավացնել աղնվացեղ խողերի միջոցով, դրա
համար հիմնականում օգտագործելով տոհմական վա-
րազներ:

Տոհմական վարազի ընտրությունը: Վարազը մեծ
ազդեցություն է գործում ամբողջ հոտի որակի վրա:
Լավ վարազը 2—3 տարվա ընթացքում կարող է լավաց-
նել հոտի որակը և ընդհակառակը, մատը՝ կարող է
շատ վատացնել նրա հատկությունները:

Լավ վարազը պետք է բավարարի հետևյալ պայ-
մաններին՝

1) Նա պետք է լինի առողջ, աշխույժ: Առողջ վա-
րազի շարժումները պետք է լինեն կտրուկ, արագ, աչ-
քերը կենդանի, փայլուն:

2) Վարազը պետք է լինի ամուր, ուժեղ և ունենա-
պարզ արտահայտված առնական տիպ:

3) Լավ վարազը պետք է ունենա լավ էկստերյեր,
մարմնի առանձին մասերը պետք է կանոնավոր ձև ու-
նենան, գլուխը պետք է լինի բավական երկար՝ ճա-
կատի կողմում լայն դեմքի մասում քիչ թեքված պրո-
ֆիլով, վիզը պետք է լինի կարճ և հաստ, կուրծքը՝

լայն և խոր, կողերը՝ երկար, տակառանման, թիակ-ները՝ շեղաղիք, մեջքը՝ լայն և ուղիղ, դոտկատեղը՝ պինդ և լայն։ Վարազ ընտրելիս առանձնապես ուշաղը-րություն պետք է դարձնել ոտների ամբության և հետույքի լայնության վրա։ Ոտները պետք է լինեն ամուր, ուժեղ, չոր, առանց կաշվի ծալքերի, լայն գըր-վածքով, կարճ, ուժեղ, ճկուն ճանով։ Վարազի ամբողջ մարմինը պետք է լավ ծածկված լինի փափուկ, խիտ խողանով, մաշկը բարակ, ականջները թափանցիկ և ծածկված կարճ, քնքույշ խողանով։ Սեռական օրգան-ները պետք է լավ զարգացած լինեն. ամորձիները՝ հա-վասար մեծության։ Վարազը պետք է ունենա առնվա-զըն 12 պտուկ։

Վարազի ճիշտ օգտագործումը խոշոր նշանակու-թյուն ունի համար։ Պրակտիկայից հայտնի է, որ ճիշտ օգտագործելու, լավ կերակրելու, լավ խնամքի ու պահպանքի գլուխում, վարազները ընդունակ են լվացմ տոհմական աշխատանքի մինչև 15—16 տարեկան հա-սակը և տալիս են շատ լավ սերունդ։ Վարազների տոհ-մական աշխատանքի միջին տևողությունը համարվում է 7—9 տարի։ Մինչդեռ շատ կոլխոզներում նրանք ար-դեն 3—4 տարեկան հասակում վատ կերակրման, վատ խնամքի և ոչ ճիշտ օգտագործման հետևանքով ան-պետք են դառնում։

Վարազների օդապարձման հիմնական կանոններն են՝

1. Երիտասարդ վարազներին 11—12 ամսական հա-սակից շուտ չպետք է զուգավորել։ Առաջին տարին երի-տասարդ վարազին պետք է ամբացնել 10—15 մերունից ոչ ավելի։ Մերունին երկրորդ անգամ ծածկելուց հետո վարազը պետք է հանդստանա 2—3 օր։

2. Կյանքի երրորդ տարում (երկրորդ օդապարձ-ման տարում) վարազին պետք է ամբացնել 20—25 մե-րունից ոչ ավելի։

3. Կյանքի չորրորդ տարում և ավելի բարձր հա-

սակում (օգտագործման երրորդ տարուց) վարազին պետք է աժրացնել 35—40 մերունից ոչ ավելի:

Մատղաշների ընտրությունը նորոգման (ռեմոնտի) համար:

Խոզերի հոտի նորոգման և ընդարձակման համար պետք է ընտրել զարգացմամբ, արտադրողականությամբ և էկստերյերով լավագույն մերուններից ու վարադիներից ստացված մատղաշներին, ընդորում, ավելի լավ է նորոգման համար թողնել գարնան ծիների ժամանակ ստացված մատղաշներին, որովհետեւ ամառը նրանք լավ կզարդանան:

Նորոգման համար մատղաշների առաջին ընտրությունը կատարվում է նրանց մորից անջատելուց հետո, այսինքն երկու ամսական հասակում: Որպես տոհմացու ընտրված գոջիներից առանձին խումբ են կազմում և նրանց համար ստեղծում են պահպանակներ:

Երբ գոջիները դառնում են 4 ամսական, կատարվում է նրանց առաջին խոտանումը, որպես տոհմացու թողնելով ամենից լավ զարգացածներին: Հետևյալ խոտանումը կատարում են էդ խոզերի 9—10 ամսական հասակում, այսինքն զուգավորումից առաջ: Առաջին ծնից և գոջիներին ծծից կտրելուց հետո արդեն վերջնականապես կատարում են էդ խոզերի ընտրություն՝ նախը նորոգման և ընդարձակման համար:

Որպես տոհմացու ընտրված մերունները պետք է ունենան ամուր և ուղիղ ոտներ, երկար իրան՝ թեք կողերով, լայն, հարթ և ամուր մեջք, լայն կուրծք, ամուր հետույք: Լավ մերունը պետք է ունենա ոչ պակաս, քան 12 նորմալ զարգացած պտուկ:

ՄԵՐՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՎԱՐԱԶՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ
ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Մերուններին և վարադիներին զուգավորման համար ընտրելիս, պետք է նկատի ունենալ նրանց արտադրողա-

կան և ժառանգական առանձնահատկությունները։ Դրա
համար անհրաժեշտ է ուշադրությամբ ուսումնասիրել
յուրաքանչյուր կենդանուն, պարզել, թե նրանց ո՞ր
հատկությունները կարիք ունեն լավացման և ո՞ր վա-
րագների ու մերունների զուգավորման հետևանքով
կստացվի լավ սերունդ։

Մերուններին և վարագներին զուգավորելիս պետք
է խուսափել նեղ ազգակցական բուծումից (Հայրը աղ-
ջըկա հետ, տղան մոր հետ, եղբայրը քրոջ հետ և
այլն), որովհետև փորձը ցույց է տվել, որ նեղ ազ-
գակցական բուծման դեպքում վատանում են սերնդի
հատկությունները (պաղատվությունը, կաթնատվու-
թյունը, վաղահասությունը և այլն)։

Լավագույն մերուններին պետք է զուգավորել լա-
վագույն վարագների հետ։ Չի կարելի զուգավորել ի-
բար հետ միատեսակ էկստերյերային պակասություն-
ներ ունեցող մերուններին ու վարագներին։

Երիտասարդ, առաջին անգամ զուգավորվող մե-
րուններին պետք է ծածկել լավ զարդացած վարագնե-
րով։

Երիտասարդ մերուններին առաջին անգամ պետք է
զուգավորել 10—11 ամսական հասակում։ Միջակ որա-
կի մերուններին տոհմական ֆերմաներում սովորաբար
խոտանում են 5 տարեկան հասակում, իսկ ոչ տոհմա-
կան ֆերմաներում՝ չորս տարեկան հասակում։

Մերունի հղիությունը բեղմնավորման մոմենտից
սկսած մինչև ծինը տևում է 114—118 օր կամ 3 ամիս,
3 շաբաթ և 3 օր։ Մերունի բեղմնավորման օրը հաշ-
վում են վերջին զուգավորման օրը։

ՖԵՐՄԱՅԻ ԱՐՑԱՇՐԱԿԱՆ ՊԼԱՆԸ

Խոզաբուծուկան ֆերմայում աշխատանքի ճիշտ
կազմակերպման հիմնական պայմաններից մեկը աշ-
խատանքը նախապես լավ մտածված ու կաղմված պլա-
նով կատարելն է։

Խողաբուծական Փերմայի արտադրական պլանը պետք է պարունակի հետևյալ բաժինները.

1) Խողերի գլխաքանակի աճի և շարժման պլան.

2) Մերունների զուգավորման ու ծնի և դոջիների աճեցման պլան.

3) Խողերի բարեկան, պետությանը միս հանձնելու և վաճառքի պլան.

4) Խողի կաշու արտադրման պլան.

5) Կերերի մթերման և Փերմայամերձ հողամասում խողապահական բրիգադայի ուժերով կատարվելիք ցանքի պլան.

6) Կերերի ծախուի պլան.

7) Արտադրական տուաջադրանք և աշխօրերի հաշվարկ՝ Փերմայի առանձին աշխատողների համար:

ԽՌԶԵՐԻ ԳԼԽԱՔԱՆԱԿԻ ԱՃԻ ԵՎ ՇԱՐԺՄԱՆ ՊԼԱՆ

Կոլխազում խողերի գլխաքանակի պլանավորման հիմնական դրույթը պետք է լինի՝ աղահովել պետական պլանի կատարումը:

Ինչպես հայտնի է, ՍՍՌՄ ժողկոմսովետը և Համ. Կ(Բ)Պ Կենտկոմն իրենց 1939 թ. հուլիսի 8-ի որոշման մեջ նպատակահարմար դտան յուրաքանչյուր կոլխազում ունենալ երեք անասնապահական Փերմա — կովարուծական, ոչխարաբուծական և խողաբուծական: Այդ իսկ որոշմամբ սահմանված էր խողաբուծական Փերմայում, նայած կոլխոզի ունեցած հողային տարածությանը, ունենալ խողերի մայրական կաղմի որոշ մինիմում:

Այդ պատճառով պլանը կաղմելիս առանձին ուշադրություն պետք է դարձվի տարրվա վերջում սոլատիւմը մերունների գլխաքանակի մրա:

Բացի տարրմերջին լինելիք դլխաքանակի սահմանումից, պլանի մեջ պետք է ցույց տրվի, թե որքան դոջի պետք է ստացվի տարրվա ընթացքում, այլ և որքան խող պետք է գնվի և ուելիզացիայի ենթարկվի:

Խօգերի գլխաբանակի անի պլան

Հաստկաց յին խմբեր	Կատարված սկզբին	Գետը է լինի	
		Մարդկանց գերազանցություն	Տարբերակի համար
Արտադրող վարագներ	2		2
9 ամսականից բարձր մերուններ	26		26
Նորոգման (բեմունտի) մատղաշներ 4—9 ամսական	9		7
Բարձելիք խողեր 4 ամսականից սկսած	13		50
Քոջիներ մինչև 4 ամսական	35		71
Քաղաքացիներ	85		156

ԶՈՒԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԻՆԵՐԻ ՊԼԱՆԸ

Առաջավոր ֆերմաների փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր հասուն մերունից մեկ տարվա ընթացքում երկու ծին ստանալը մեծ հեռանկարներ է բայց անում հանրային խողաբուծության զարգացման համար:

Սակայն խողաբուծական ֆերմաների մեծ մասում մերուները միջին հաշվով տալիս են գեռես տարեկան 1—1,5 ծնից ոչ ավելի, որի հետեւանքով կոլխոզային ֆերմաները յուրաքանչյուր տարի հաղարավոր գլուխներով պակաս մատղաշ են ստանում: Դրա պատճառը մայրական նախրի վատ օգտագործումն է՝ որպես գուգավորումների և ծիների ոչ հմուտ կազմակերպման արդյունք: Ֆերմաներում խողերի գուգավորումը հաճախ կատարվում է առանց որևէ պլանի, որի հետեւանքով ծիները տեղի են ունենում ուշ աշնանը և նույնիսկ ձեռողը, նոյնամբերին—զեկումբերին, երբ հաճախ բա-

ցակայում են ձմեռային ծիներն անցկացնելու համար անհրաժեշտ պայմանները:

Դրանից խուսափելու համար առաջավոր Փերմաներում կատարվում է զուգավորումների խիստ պլանավորում: Զուգավորումների պլանը պետք է անպայման հանդիսանա յուրաքանչյուր Փերմայի արտադրական պլանի բաղկացուցիչ մասը: Զուգավորումների պլանի մեջ նշվում են մերունների ծածկման ժամկետները, այլ և վարագներին մերուններին ամրացնելը, այսինքն ցույց է տրվում, թե որ ամսում, մոտավորապես ամսի քանիսին պետք է մերունը ծածկված լինի և հատկապես որ վարագով: Զուգավորումների օրացուցային պլանի հիման վրա սահմանվում է, թէ Փերմայում երբ պետք է տեղի ունենան ծիները և որքան գոջի պետք է ստացվի յուրաքանչյուր մերունից:

Առաջավոր Փերմաների և ստախանովականների պրակտիկան ցույց է տալիս, որ ծիներ ստանալու համար ամենից ավելի նպաստավոր են հետեւյալ ամիսները. փետրվար, մարտ, ապրիլ, օգոստոս և սեպտեմբեր:

Այսպիսով, հաշվի առնելով Հղիության տևողությունը (միջին հաշվով 112—115 օր), մերունների մասայական զուգավորումը պետք է կատարել հոկտեմբեր—հունիս ժամանակաշրջանում: Յուրաքանչյուր հասուն մերունից տարվա ընթացքում երկու ծին ապահովելու համար առաջին զուգավորումը կատարվում է հոկտեմբեր — հունվարին: Այդ շրջանում պետք է ծածկել Փերմայում եղած բոլոր հասուն աղասի մերուններին: Այդ հնարավորություն կտա առաջին ծինն ստանալ ապրիլ—մայիս ամիսներից ոչ ուշ:

Երկրորդ մասսայական զուգավորումը պետք է տեղի ունենա գարնանը, գոջիներին անջատելուց հետո, այսինքն ապրիլից մինչև հունիսի առաջին կեսը: Այդ շրջանում կատարված զուգավորումը հնարավորություն է տալիս երկրորդ ծին ստանալ օգոստոս—սեպտեմբերին:

ԽՈԶԵՐԻ ԲՏՄԱՆ, ՊԵՏՐԻԹՅԱՆԸ ՄԻՍ ՀԱՆՉՆԵԼՈՒ
ԵՎ ՎԱՃԱՌԻՔԻ ՊԼԱՆԸ

Կոլխոզային խողաբուծական Փերմաների կարևորագույն խնդիրներից մեկը խոզերի բուման կազմակերպումն է: Միայն խոզերի բուման լայն կազմակերպումը կոլխոզներին հնարավորություն կտա արագ կերպով ավելացնելու մսի արտադրանքը, ժամանակին կատարելու պետական պարտավորությունները, բավարարելու Սովետական բանակի պահանջները մսի և ճարպի վերաբերյալ, բարձրացնելու կոլխոզային խողաբուծական Փերմաների եկամուտը:

Թե ինչպիսի հսկայական հնարավորություններ կան կոլխոզներում խոզերի բումը կազմակերպելու համար, այդ ցույց է տալիս առաջավոր Փերմաների փորձը: Այսպես, Յարոսլավի՝ մարզի՝ Ստալինի անվան կոլխոզի խողաբուծական Փերմայում երեք տարվա ընթացքում բուլած է ավելի քան 4500 խոզ: Այդ Փերմայում յուրաքանչյուր մերունից ստանում են 1200—1500 կգ. մսամթերք:

Սակայն շատ կոլխոզային խողաբուծական Փերմաներում խոզերի բումը գեռես վատ է կազմակերպված: Այդ Փերմաներում խոզերի սերնդի մեծ մասը չի բըտվում, այլ ծախվում է վաղ հասակում: Դրա հետևանքով այստեղ մսի արտադրանքի ելքը կազմում է յուրաքանչյուր մերունի հաշվով ոչ ավելի, քան 2—3 ցենտներ: Հետևաբար, այդ Փերմաները հարկ եղած եկամուտ և ապրանքայնություն չեն տալիս:

Պարտիան և կառավարությունը սահմանել են մի կարգ, որով խրախուսվում է պետությանը լավ բաված խոզերի հանձնումը: Այսպես, մսի հանձնման պարտավորությունը կատարելիս պարտավորության մեջ հիշված յուրաքանչյուր մեկ կիլոգրամ կենդանի քաշի դիմաց կոլխոզին հաշվում են՝ 800 դրամ կենդանի քաշ ճարպային խոզի, 850 դրամ՝ կիսաճարպային և բեկո-

Նային խողի, 900 դրամ մսային խողերի նկատմամբ, որոնք 75 կգ. և ավելի բարձր կենդանի քաշ ունեն:

Այսպիսով լավ բոված խողերի (ճարպային, կիսաճարպային, բեկոնային) հանձնումը յուրաքանչյուր կոլխոզին հնարավորություն է տալիս ավելի քիչ խողերով կատարել իր մսի հանձնման պարտավորությունները պետության հանդեպ: Օրինակ, 250 կգ. կենդանի քաշով մեկ չաղ խող հանձնելիս մսի հանձնման պլանի կատարումը կհաշվի ավելի, քան 10 ոչխար հանձնելիս:

Բացի այդ, պարտիան և կառավարությունը սահմանել են պարզե—հավելումների սիստեմ՝ կոլխոզների կողմից պետզնումների կարգով անասունների վճառման դեպքում: Այսպես, պետզնումների կարգով պետությանն անասուն ծախող կոլխոզներին (իրենց մոի հանձնման պարտավորությունները կատարելուց հետո) վճարվում է պարզե—հավելում գործող գնման գներին՝ հետեւյալ չափերով. 10-ից մինչև 20 ցենտներ միս ծախուլու դեպքում՝ 200/0, 21-ից մինչև 40 ցենտների դեպքում՝ 300/0, 41-ից մինչև 50 ցենտների դեպքում՝ 400/0 և 51-ցենտներից բարձր միս ծախելու դեպքում վճարվում է 500/0 հավելում գործող գնման գներին:

Կոլխոզներում խողերի բուման լոյն կազմակերպումը նյութապես շահագրգռում է նաև հենց խողաբուծական ֆերմանների աշխատողներին: ՍՍՌՄ Մինիստրների Սովետը և պարտիայի կենտկոմը կոլխոզներին խորհուրդ են տալիս խողաբուծության արտադրանքի ընդհանուր գումարի 30%-ը տալ որպես դրամական պարզեայն կոլխոզներին, որոնք անմիջականորեն աշխատում են ֆերմայում:

ԿԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ ՊԼԱՆ

Վերաբռնագրման և խողերի բուման պլանը լրիվ կատարելու համար անհրաժեշտ է նախ և առաջ ֆեր-

ման ապահովել կերով։ Այդ լավ են հաշվի առնում առաջավոր ֆերմաները։

ՍՍՌՄ ժողկոմսովետը 1941 թ. մայիսի 29-ի «Կոլխոզներում անսասնապահության համար կերերի ավելացման միջոցառումների մասին» որոշման մեջ Հայկական ՍՍՌ կոլխոզների համար, սկսած 1941 թվից՝ կերերի կուտակման նորման սահմանել է մեկ տարբեահամար միջին հաշվով մեկ մերունին 20 ցենտներ հյութավի կեր։

Բայց այդ, ՍՍՌՄ ժողկոմսովետը ցանկալի է համարել նախատեսել կոպիտ կերերի կուտակում՝ հաշվելով 3—6 ցենտներ մեկ մերունին։

Ֆերմային մոտիկ հողամասում կատարում են արմատապտուղների և կարտոֆիլի ցանք, հատկապես խոզերին կերակրելու համար։

Կերերի մթերման պլանի մեջ անհրաժեշտ է ցույց տալ առանձին տեսակի կերերի՝ կոպիտ, հյութալի և խտացրած կերերի քանակը, որոնք հատկացված են խոզերի տարրեր արտադրական խմբերի համար։

Կերերի ծախսման պլանի մեջ անհրաժեշտ է նախատեսել առանձնացված ֆուրաժի ճիշտ և խնայողաբար օգտագործումը։ Հաճախ կերերը աշնանը ոչ ճիշտ և ոչ խնայողաբար ծախսելու հետևանքով արդեն դարնանը կերերի պակասություն է լինում։ Դրանից խուսափելու համար ՍՍՌՄ ժողկոմսովետը պարտավորեցրել է կոլխոզների վարչություններին՝ հոկտեմբերի 1-ից ոչ ուշ ամբողջ մասուրային շրջանի համար հաստատել կերերի ծախսման ամսական պլան, այն հաշվով, որ անասունները ապահովեն բոլոր տեսակի կերերով մինչև արոտի սկիզբը, ինչպես նաև պարտավորեցրել է ամեն ամիս ստուգել դրա կատարումը։

Ֆերմայի վարիչը կերերն ստանում է պահեստավետից և ֆուրաժիրից, կոլխոզի նախագահի և հաշվապահի ստորագրած օրդերներով։

Ֆերմայի վարիչը կոլխոզի վարչության առաջ լիո-

Վին պատասխանատու է իր ստացած կերերի պահպանման և ծախսման համար:

Պլանի հենց այդ բաժնում պետք է ցույց տալ, թե որքան և ինչպիսի քնական ու ցանովի արոտներ պետք է հատկացնել խողերի համար, և ինչպես պետք է դրանք ամրացնել ֆերմային:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ԵՎ ԱՇԽՕՐԵՐԻ ՀԱՇՎՈՒՄԸ ՖԵՐՄԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ֆերմայի յուրաքանչյուր աշխատող արդեն տարվա սկզբին պետք է գիտենա իր տարեկան արտադրական առաջադրանքը: Արտադրական առաջադրանքի մեջ ցույց է տրվում, թե որքան և ինչպիսի գոջիներ նա պետք է աճեցնի, քանի ցենտներ կենդանի քաշի աճ պետք է ստանա, որքան և ինչ քաշով խոզ պետք է բաի: Կոլխոզում ընդունված գործավարձային գնահատության համապատասխան՝ ցույց է տրվում նաև խողապահին հասանելիք աշխօրերի քանակը՝ արտադրական առաջադրանքը կատարելու դեպքում:

Ֆերմայի արտադրական պլանը պետք է կազմի Փերմայի վարիչը՝ բրիգադիրի, տեխնիկ-անասնապահի կամ գոտաեխնիկի հետ, Փերմայի առաջավորների լայն մասնակցությամբ:

Արտադրական պլանը պետք է մանրամասն քննարկվի Փերմայի լոլոր աշխատողների և կոլխոզի ակտիվիք արտադրական խորհրդակցությունում: Քննարկումից հետո պլանը քննվում ու հաստատվում է վարչության և կոլխոզնիկների ընդհանուր ժողովի կողմից:

Ճիշտ կազմված պլանը մորիլիզացնում է Փերմայի աշխատողներին՝ պայքարելու կոլխոզային խողարուծության հետագա զարգացման ու ամրացման համար:

ԽՈԶԵՐԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Խողերի կերակրման ճիշտ կազմակերպումը հանդիսանում է Փերմայի արտադրական պլանի կատարու-

մըն ապահովող կարեւորագույն պայմաններից մեկը և Այդ պատճառով էլ խողաբուժության առաջավորները բարձր մթերատվության համար մզվող պայքարում խոշոր ուշադրություն են դարձնում խողերի կերակրուման կազմակերպմանը:

Խողերի կերակրման ճիշտ կազմակերպման առաջին պայմանը նորմայով կերակրումն է՝ նրանց սննդանյութերի պահանջին և մթերատվության համապատասխան։ Հետեւյալ պայմանը կերերի ճիշտ ընտրությունն է և դրանց հմուտ նախապատրաստումը խողերին կերցընելուց առաջ։

Խողերին կերցվող բոլոր կերերը կարելի է բաժանել հետեւյալ հիմնական խմբերի. կողին, հյութալի, հատիկային կերեր, տեխնիկական արտադրության մնացուկներ, կենդանական ծաղում ունեցող կերեր և հանքային կերեր։

Կոպիտ կերերից խողերի համար ամենալավն է համարվում թիթեռնածաղկավոր բույսերի խոտը՝ առվույտը, երեքնուկը, կորնդանը, վիկը և այլն։ Այդ խոտերի մեջ, առանձնապես առվույտի և երեքնուկի մեջ պարունակվում է շատ սպիտակուց, վիտամիններ և հանքային նյութեր (կալցիում և ֆոսֆոր)։ Այդ պատճառով ձեռռվա շրջանում այդ կերերը պետք է անպայման մտնեն խողերի ուցիչնի մեջ։

Առանձին ուշադրություն պետք է դարձնել խողերի համար մատղաշ թիթեռնածաղկավոր խոտից ալյուր պատրաստելու վրա։ Խոտի ալյուրը հնարավորություն կտա կրծատելու խողերի խտացրած կերերի ծախսը և միաժամանակ նրանց կապահովի սպիտակուցային և հանքային նյութերով ու վիտամիններով։

Հյութալի կերերից խողերի համար մեծագույն նշանակություն ունեն կարտոֆիլը, ճակնդեղը, դազարը, շաղցամը, դդումը, սիլոսը։ Խողերն այդ կերերն ուտում են մեծ ախորժակով։ Ծծմայր մերունների ուցիչնի մեջ հյութալի կերեր (բացառությամբ կարտոֆիլի) մտցնելու դեպքում բարձրանում է նրանց կաթ-

Նատվությունը։ Հյութալի կերերի հիմնական պակասությունը նրանց քիչ սպիտակուց և քիչ հանքային նյութեր պարունակելն է։ Սակայն դրա փոխարեն, հյութալի կերերը պարունակում են զգալի քանակով վիտամիններ։ Առանձնապես շատ վիտամին կա կարմիր և գեղին գազարի մեջ, այդ պատճառով խիստ օդտակար է մատղաշներին գազար տալը։

Խոզաբուծության մեջ պետք է լայն չափով տարածվի սիլոսը։ Լավ սիլոսը, առանձնապես եղիպտացորենից, արևածաղկից, թիթեռնածաղկավոր խոտաբույսերից և բանջարանոցային թափթփուկներից պատրաստած սիլոսը խոզերն ախորժակով են ուտում և նրանց համար ձմեռ ժամանակ դա հիանալի կեր է։

Ամառը բոլոր խմբերի խոզերը պետք է ստանան կանաչ կեր, ինչպես անմիջականորեն արոտից, այնպես և քաղած վիճակում, որպես լրացուցիչ կեր։

Հատիկային կերերից մեծ նշանակություն ունեն՝ գարին, աշորան, վարսակը, եղիպտացորենը, այլ և բակլայազդի հատիկները (բակլա, ոսպ, ոլոռ և այլն)։

Խոզերի համար քուսպերից ամենալավն են կտավ՝ հատիկ, արևածաղկի և սոյայի քուսպերը։ Նկատի ունենալով, որ քուսպերը պարունակում են մեծ քանակությամբ սպիտակուց և ճարպ, խորհուրդ է տրվում դրանք կերցնել հյութալի կերերի հետ միասին։

Կենդանական ծագում ունեցող կերերից խոզերի համար պիտանի են մսոսկրային, մսի, արյան և ձկան ալյուրները, ինչպես նաև կաթնատնտեսության մնացորդները՝ քաշած կաթը, սիճուկը, թանը և այլն։ Այդ բոլոր կերերը հարուստ են սպիտակուցով։ Առանձնապես օդտակար է դրանք կերցնել մատղաշներին և մերուններին։

Խոզերի կերակրման համար մեծ նշանակություն ունեն կոմբիկերերը։ Կոմբիկերը զանազան տեսակի կերերի (5—6 կերից ոչ պակաս) խառնուրդ է, պատրաստվում է հատուկ գործարաններում, յուրաքան-

չյուր տեսակի կենդանու համար առանձին բաղադրությամբ:

Անտառային շրջաններում խողերի համար որպես լրացուցիչ կերի աղբյուր կարող են ծառացել հաճարի կաղինը, խողակաղինը և ուրիշ անտառային պտուղներ: Այս կերերը կարելի է օգտագործել ամառը թարմ վիճակում և ձմեռը՝ չորացրած կամ բոված: Սրանք ավելի հարմար են խողերի բաման համար: Ճիշտ է ն թեև սրանք փափկացնում են խողաճարպը, բայց բարելավում են նրա համը: Սրանք արտաքինից ծածկված են հաստ կճեպով (պտղի քաշի 330/0), որը դժվարամարս է և դրա հետևանքով կերի սննդային արժեքն ընկնում է: Կճեպից մաքրելուց հետո կորիզը շատ լավ մարսվում է և մեծ սննդարժեք ունի:

Խողակաղինը որոշ դառնություն է պարունակում: Խողերին մեծ քանակությամբ խողակաղին կերցնելու համար անհրաժեշտ է այդ դառնությունը հեռացնել: Դրա համար այն մի քանի օր պահում են սառը ջրի մեջ, հաճախակի փոխելով ջուրը:

Խողերի ռացիոնի պարուղիք մասը պետք է կադմեն հանքային կերերը: Որպես լրացուցիչ հանքային կեր խողերին տալիս են ուկրալյուր, կավիճ, կըրաքար, փայտածուխ, աղ, կավ, ծծմբաթթվային երկաթ:

ԽՈԶԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ՆՈՐՄԱՆԵՐՈՎ

Խողերին ճիշտ կերակրելու համար անհրաժեշտ է զիտենալ յուրաքանչյուր կենդանու պահանջը սննդանյութերի նկատմամբ: Սննդանյութերը— սպիտակուցները, ճարպերը, ածխաջրաները, վիտամինները, հանքային նյութերը և այլն, անհրաժեշտ են կենդանուն, ինչպես նրա կյանքը պահպանելու, այնպես և մթերք միս, ճարող, կաթ և այլն արտադրելու համար:

Սննդանյութերի պահանջը տարբեր խմբերի խողերի համար տարբեր է: Այն կախված է խողի կենդանի քաշից, հասակից, մթերատվությունից և այլն: Այս

պես, օրինակ, հասուն, հղի մերունին սննդանյութերն անհրաժեշտ են ոչ միայն նրա կյանքը պահպանելու, այլև պտղի գարզացման համար: Մատղաշ, աճող մերունին, բացի դբանից, կերն անհրաժեշտ է իր աճի համար, այսինքն մկանային, ոսկրային և այլ հյուսվածքների առաջացման համար: Հասուն ծծմայր մերունը սննդանյութերի կարիք ունի ինչպես իր կյանքը պահպանելու, այնպես և կաթի գոյացման համար:

Բազմաթիվ փորձերի հիման վրա գիտնականները որոշել են սննդանյութերի այն քանակը, որն անհրաժեշտ է տալ տարրեր խմբի խողերին (հղի, ծծմայր մերուններին, վարազներին, մատղաշներին, և այլն), տարրեր գեպքերում:

Կերի նորմա ասելով հասկանում են կենդանուն անհրաժեշտ սննդի քանակը՝ արտահայտված կերի միավորներով և մարսելի սպիտակուցի որոշ քանակով, նայած կենդանու քաշին, հասակին, մթերատվությանը և այլն: Կերի նորմաների հիման վրա կազմում են կերաբաժիններ (ուսցիոն): Կերաբաժիններ կազմելիս հաշվի են առնում կենդանու մեկ օրվա սննդի պահանջը, տրնտեսության կերերի պաշարը, նրանց որակն ու արժեքը, կենդանիների պահպանքի պայմանները, նրանց անհատական հատկությունները և այլն:

Կերի նորմաներին համապատասխան կերաբաժիններ կազմելու համար անհրաժեշտ է գիտենալ նաև կենդանիներին տրվող կերերի սննդաբերը:

Տարրեր կերեր ունեն տարրեր սննդաբեր. այդ կախված է նրանց մեջ պարունակվող սննդանյութերի քանակից ու որակից, այլ և մարսելիությունից:

Կերերի սննդաբերը չափում են որևէ միասնական միավորով: Մեզ մոտ կերերի սննդաբերը միասնական չափ է ընդունված միջակ որակի մեկ կիլոգրամ վարսակի սննդաբարությունը, որը համարվում է մեկ կերի միավոր: Մնացած կերերի սննդաբարությունը համե-

մասոված է 1 կդ. վարսակի սննդարարության հետ և դուրս է բերված, թե նրանց ո՞ր քանակությունն է հավասար մեկ կերի միավորի, որի հիման վրա էլ կադմը բերված է կերի միավորների աղյուսակ (տես 2-րդ աղյուսակը, էջ 24):

Այսպես օրինակ, 3 կդ. կարտոֆիլը սննդարարությամբ հավասար է 1 կդ. վարսակի, այսինքն կերի մեկ միավորի: Մեկ կդ. լավ առվույտի խոտը հավասար է կերի կես միավորի և այլն:

2-րդ աղյուսակում բերված է հիմնական կերերի սննդարարությունը: Աղյուսակում ցույց է տրված, թե այս կամ այն կերի քանի՞ կիլոգրամն է հավասար մեկ կերային միավորի: Աղյուսակում նաև ցույց է տրված, թե ո՞րքան մարսելի սպիտակուց է պարունակվում 1 կդ. կերի մեջ:

Խողերի համար կերաբաժին կազմելիս պետք է գիտենալ՝ նախ նրանց պահանջը սննդանյութերի նկատմամբ (նորմաները), արտահայտված կերի միավորներով և մարսելի սպիտակուցի անհրաժեշտ քանակով, ապա տնտեսության մեջ եղած կերերի սննդարարությունը: Դրանցից պետք է ընտրել այնպիսիները, որոնք հարմար են խողերին՝ կերցնելու համար: Ենթադրենք թե անհրաժեշտ է կերաբաժին կազմել մի հասուն ծծմայր մերունի համար, որն ունի 140 կդ. կենդանի քաշ և կերակրում է 10 դոչի: Ֆերմայում կան հետեւյալ կերերը. գարի, եղիպատացորեն, թեփ, արեածաղկի քուսալ, կերի ճակնդեղ, սիլոս և առվույտի խոտ:

Ծծմայր մերունների կերակրման նորմաների աղյուսակում (աղյուսակ 5. էջ 39) մենք գտնում ենք, որ այդ ծծմայր մերունին պետք է օրական տալ կերի 6,7 միավոր և 670 դ. մարսելի սպիտակուց:

Հիմնական կերերի սննդաբարությունը

ԿԵՐԻ ԱՆՈՒՆԸ	Տ կգ. կերի ԺԵԶ պարունակությունը	
	Կերի միավոր	Մարսկի սպասարկությունը
Կոպիտ կերեր		
Երեքնուկի լավ խոռ	0,50	55
Առվույտի » »	0,50	100
Կորնգանի » »	0,52	100
Արժաքայի պալարապտուդին		
Կարտոֆիլ-միջակ	0,3	10
Գաղար-կերի	0,14	4
Ճակնդեղ »	0,10	1
Սիլոս		
Եղիպտացորենի սիլոս	0,19	6
Արևածաղկի »	0,17	8
Մարգագետնի կանաչի	0,13	10
Կանաչ կեր		
Արոտի կանաչ	0,18	20
Երեքնուկի »	0,15	14
Առվույտի »	0,15	15
Վիկ-վարսակի կանաչ	0,16	13
Հատիկային կեր		
Վարսակ միջակ	1,0	75
Եղիպտացորեն	1,3	72
Գարի միջակ	1,2	70
Աշորա	1,2	94
Խիկ	1,1	187
Ռլու	1,2	173
Տեխնիկական արտադրության մնացուկներ		
Ցորենի թեփ	0,8	112
Աշորայի »	0,8	104
Ալյուրի փոշի	0,64	130
Բուսպ կտավճատի (ստանդարտ)	1,1	244
» կանեփի	0,7	218
» արևածաղկի	1,1	331
» սոյայի	1,26	360
» բամբակի	1,16	330

ԿԵՐԻ ԱՆՌԻՆԸ	Ի կդ. կերի մեջ պարունակվում է	
	ԿԵՐԻ ԺԻՄՈՒՐ (կդ. ներով)	ՄԱՐՍԵԼԻ ԱՊԻՄԱԿԱԾ (գրամակը)
Կենդանական ծագում ունեցող կերեր		
Կտթ-անարատ	0,2	33
» քաշած	0,1	38
Թան	0,1	38
Շիճուկ-քաղցր	0,1	9
Մսուկրային ալյուր	0,6	161
Մսի ալյուր	1,4	58
Զկան ալյուր—ճարպից աղքատ	0,7	463

Ելնելով տնտեսության մեջ եղած կերերից և նրանց ցանկալի հարաբերությունից, մենք կարող ենք կազմել Հետևյալ կերաբաժինը.


ԿԵՐԻ ԱՆՌԻՆԸ	ԿԵՐԻ Քանակը (կդ.)	Երանց մեջ պարունակվ. է	
		ԿԵՐԻ ԺԻՄՈՒՐ (կդ.)	ՄԱՐՍԵԼԻ ԱՊԻՄԱԿԱԾ (գ.)
Առվաւյտի խոտ	2	1,0	200
Արևածաղկի սիլոս	2	0,34	16
Կերի ճակնդեղ	6,5	0,65	7
Գարի	1,5	1,80	140
Եղիպտացորեն	1,0	1,30	72
Թեփ	1,5	1,20	156
Կտավհատի քուսպ	0,4	0,44	97
Հնդկածենը . . .	—	6,73	688
Պահանջվում է նորմաներով	—	6,70	670

Մենք տեսնում ենք, որ մեր կազմած կերաբաժինը և՛ կերի միավորների և՛ մարսելի սպիտակուցի քանակով միանդամայն համապատասխանում է նորմային:

Սակայն խողերի համար ճիշտ կերաբաժին կազմելը դեռ բավական չէ. անհրաժեշտ է նաև կազմակերպել նրանց կերակրումը: Դրա համար այն խողանոցներում, որտեղ կան խողերի կերակրման առանձին շենքեր («սե-

դանատուն»), պետք է նրանում պատրաստել անհատաշկան կացոցներ մերունների կերակրման համար և խըմքական կացոցներ՝ մասղաչների համար։ Մերունների կացոցների բայնությունը պետք է լինի 70 սմ., երկարությունը՝ 160 սմ.։

Մի քանի ֆերմաններում մերունների նորմավորիչած անհատական կերակրումը կազմակերպելու համար խոզանոցի «սեղանատանը» պատրաստում են հատուկ բաժանարար։ Դրա կառուցվածքը ցույց է տրված նկարում։



Նկ. 2. Բաժանաբար խոզանոցի «սեղանատան»-ը։

Բաժանաբարի գործադրումը ոչ միայն ապահովում է մերունների նորմավորիչած անհատական կերակրումը այլ և զգալի չափով կրճատում է կերերի տեղափոխման և մսուրների մաքրման աշխատանքն ու ժամանակը։

Այն խոզանոցում, որտեղ չկա այդպիսի առանձին բաժանմունք, «սեղանատան» վերածելու համար, խոզերին պետք է կերակրել կացոցներում։

Կերի նախապատրաստումը ունի բացառիկ կարելիոր նշանակություն խողերի մթերատվությունը բարձրացնելու համար: Կերերը զանազան եղանակներով նախապատրաստելու միջոցով խողաբուծության ստախանովականները բարձր ցուցանիշների են հասնում՝ խողերի կենդանի քաշի ավելացման գործում:

Կերերն առանց նախապատրաստման կերցնելը չի կարող ապահովել կենդանիների բարձր մթերատվությունը և կերերի ավելորդ ծախս կլինի: Այսպես օրինակ, պարզված է, որ հատիկային կերերը առանց մանրացնելու խողերին կերցնելիս կորուստը կազմում է մոտ 30 %, որովհետեւ չմանրացրած հատիկը 30 %-ով պակաս է մարսվում, քան մանրացրածը:

Կոպիտ կերերի նախապատրաստումը: Խողերին խոտը պետք է տալ նախապես մանրացնելուց (2-3 սմ.) կամ ամելի լավ է ալյուր դարձնելուց հետո: Խոտի ալյուրը պետք է կերցնել խտացրած կերերի հետ խառնած: Խոտի ալյուրը պետք է պատրաստել ծաղկման սկզբին քաղված թիթեանածաղիկ բույսերից՝ առվույտից, երեքնուեկից, կորնդանից և այլն, կամ լավորակ լեռնային խոտից:

Խոտի ալյուրը պատրաստում են հետևյալ կերպ. սկզբում խոտը մանրում են ծղոտահար մեքենայով, ապա մանրացրած խոտը աղում, ալյուր են դարձնում սովորական աղացներով, երկայնքով և որից, ավելի բարդ աղացներով: Աղայու համար խոտը պետք է լինի բավականաչափ չոր (10-13 % խոնավություն):

Խոտի ալյուրը պետք է պահել փակ, չոր և մութ չենքում, պարկերի մեջ պինդ լցրած:

Խոտի ալյուրը խողերին պետք է կերցնել հում վիճակում, եփելու կամ խաշելու դեպքում նրա մեջ եղած վիտամինները կքայքայվեն:

Եթե խոտի ալյուր պատրաստելու հարմարություն

չկա, այն կարելի է փոխարինել խոտի փշրանքով կամ խոտատերևով:

Տերեներն անջատելու համար լավ չորացրած խոտն անց են կացնում կալսիչի թմբուկի միջով կամ խոտը փշրում են շղթաներով։ Դրանից հետո ցողունները թափ են տալիս, տերեները պոկվում-ընկնում են։ Տերեները կերցնում են խոզերին, իսկ ցողունները՝ տավարին։

Հյութալի կերերի նախապատրաստումը։ Հյութալի կերերը՝ կարտոֆիլը, ճակնդեղը, գաղարը կերցնելուց առաջ պետք է անպայման ջրով լվալ և մանրացնել։ Կարտոֆիլը պետք է եփել, փշրել և պաղելուց հետո կերցնել խոզերին։ Եփած կարտոֆիլի ջուրը խոզերին չպետք է տալ, որովհետեւ վնասակար է նրանց համար։

Հատիկային կերերի նախապատրաստումը։ Բոլոր հատիկային կերերի խոզերին պետք է կերցնել ջարդած կամ աղացած վիճակում։ Ջարդած հատիկները բոված վիճակում կերցնում են միայն ծծկեր գոջիներին, ծընկելուց հետո երկրորդ շաբաթից սկսած։

Բակլայազդի հատիկները (լոբի, ոլոռ, քուսուշնա, վիկ, սոյա և այլն) պետք է կերցնել եփած վիճակում։ Եփելուց առաջ մի քանի ժամ հատիկները պահել ջրի մեջ կամ մանրացնել։

Աղացած հատիկային կերերը, ինչպես նաև ալյուրները կարելի է խոզերին կերցնել գրոժավորելուց, սոլոդացումից հետո, կամ նրանցից հաց թխելով։

Քուսպերի նախապատրաստումը։ Քուսպերը կերցը նելուց առաջ մանրացնում են քուսպամանրիչ գործիքով, հակառակ դեպքում ջարդում-մանր կտորների են վերածում մուրճի միջոցով։ Մանրացնելուց հետո թըրջում են սառը ջրով և 10—12 ժամ պահում սառը տեղ այդ ժամանակամիջոցում նա ջուրը ծծելով, փափկում-փշրվում է։ Քուսպերը խոզերին տալիս են կամ մաքուր վիճակում կամ ուրիշ խտացրած կերերի հետ։ Բամբակի քուսպը խոզերին կերցնելուց առաջ պետք

է մոտ 1 ժամ եփել: Նկատի ունենալով, որ բամբակի քուսպը որոշ թույն է պարունակում (գոսիպոլ), այն պետք է խողերին կերցնել զգուշությամբ: Գիտնականների կատարած փորձերը ցույց են տվել, որ բամբակի քուսպը կարող է կազմել խողի կերաբաժնի 10 0/0-ը, մաքսիմում՝ 15 0/0 (կերի միավորների հաշվով), որը մոտավորապես հավասար կլինի օրական մեկ գլուխն 0,5—0,6 կգ.:

ՎԱՐԱԶՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՎԱԾՔԸ

Առողջ, կենսունակ գոջիներ ստանալու համար մեծ նշանակություն ունի վարագների ճիշտ կերակրումը և պահվածքը:

Վարագները կերի սննդանյութերն օգտագործում են իրենց կյանքը պահպանելու և սպերմա առաջացնելու համար, իսկ երիտասարդ վարագները՝ նաև աճման համար: Վարագի կերաբաժնում անհրաժեշտ քանակի ու որակի սպիտակուցներ, հանքային նյութեր և վիտամիններ չլինելու դեպքում նրա սպերմայի քանակն ու որակն ընկնում է: Դրա համար խորհուրդ է տրվում զուգավորման սեղոնում վարագի ռացիոնի մեջ, բացի սովորական կերերից, մտցնել նաև կենդանական ծագում ունեցող կերեր՝ մսի, արյան և ձկան ալյուր, երեսը քաշած կաթ: Եթե անտեսության մեջ այդպիսի կերեր չըկան, կարելի է դրանք փոխարինել բակլայազգի հատիկներով՝ ոսպ, ոլոռ կամ վիկ: Վարագներին վիտամիններով ապահովելու համար պետք է ձմեռը նրանց տալ լավ որակի թիթեռնածաղկավոր խոտ (առվույտ, երեքնուկ, կորնդան) կամ խոտի ալյուր, իսկ ամառը արածացնել կամ տալ քաղած կանաչ: Վարագների համար կերաբաժնին կազմելիս օգտավում են 3-րդ աղյուսակում բերված նորմաներով (տես աղյուսակը, էջ 30):

Խոշոր նշանակություն ունի նաև զբոսանքը: Վարագները ամառը օրվա մեծ մասը պետք է անցկացնեն արոտում կամ ճամբարներում: Չմեռը նրանք պետք է

մի քանի ժամով դուրս բերվեն զրոսանքի, երբ եղանակը մեղմ է, օրն արևոտ է և քամիներ չկան:

Զմեռվա շրջանում վարագներին պետք է մաքրել խողանակով, իսկ ամառը՝ լողացնել գետում: Եթե այդ հնարավոր չէ, նրանց մարմինը լվալ գոլ-ջրով և օճառով:

Սոյուսակ № 3

Սրտադրող վարագների կերակրման նորմաները

	Պետք է տալ օրական մեկ գրեթե				
Զուգավորման նախապատրաստելու և զուգավորման շրջանում					
Կենդանի	Կերի միավար (կգ.)	Մարսնի սպիտակուց (դ.)	Մեկ կերի միավարն ուն մարս միավարի տակուց (դգ.)	Մարսի կերի սպիտակուց (դգ.)	Մեկ կերի միավարին մարսի սպիտակուց (դգ.)

Անող, միջն 3 տարեկան վարագներին

120—140	4,0—4,5	40—450		3,8	380	
140—160	4,2—4,7	460—560		4,0	400	100-ից
160—180	4,4—4,9	480—580	110-ից	4,2	420	
180—200	4,7—5,2	540—620	ոչ պահանջուց	4,4	440	ոչ պահանջուց
200—220	5,0—5,3	550—640	կամ	4,5	450	կամ
220—250	5,2—5,5	570—660		4,6	460	
250—300	5,3—5,8	580—700		4,8	480	

Հասուն, 3 տարեկանից բարձր վարագներին

180—200	4,2—4,4	420—480		3,3	300	
200—240	4,4—4,7	440—520		3,5	320	90-ից
240—260	4,5—4,8	450—540	100-ից	3,6	330	
260—300	4,9—5,2	490—570	ոչ	3,8	30	ոչ
300—350	5,1—5,6	510—620	ավել	4,2	370	ավելաց
350—400	5,5—6,0	550—660		4,5	400	

Վարագներին պետք է պահել մաքուր և չոր խողանոցներում՝ առանձին կացոցներում (հատակի մակարդակը՝ 9—10,5 քառակուսի մետր): Կացոցի, հատակը

պետք է լինի տախտակից։ Ցեմենտի հատակն առանց առատ ցամքարի շատ վտանգավոր է, վարագները հիվանդանում են ռեվմատիզմով։

ՄԵՐՈՒՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ՆՐԱՆՅ ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՇՐՋԱՆՈՒՄ

Չուզավորման համար նախապատրաստվող մերուների ճիշտ կերակրումը մեծ նշանակություն ունի ոչ միայն նրանց ստերջության տոկոսն իջեցնելու, նրանց պաղատվությունը բարձրացնելու, այլև և առողջ տկենառնակ գոջիներ ստանալու համար։

Դիտնականները պարզել են, որ երբ մերունները դուզավորում ից առաջ կերակրվում են սպիտակուցով, հանքային նյութերով ու վիտամիններով աղջատ կերերով, այդ դեպքում կամ բոլորովին սեռական ցանկություն չեն ունենում և դրա հետևանքով մնում են ստերջ, կամ թե ծնում են ավելի քիչ և անկենսունակ գոջիներ։

Չպետք է զուզավորել ոչ հյուծված մերուններին, ոչ էլ ճարպակալածներին։ Դրանք կամ չեն բեղմնավորվում, կամ բեղմնավորվելու դեպքում տալիս են քիչ և թույլ սերունդ։ Միայն միջակ սնվածություն ունեցող մերուններն են հաջող բեղնավորվում և տալիս են բազմագանակ ու առողջ սերունդ։

Որպեսզի զուզավորում ից առաջ մերուններն ունենան միջակ սնվածություն, անհրաժեշտ է նրանց կերաբաժինը (ռացիոնը) կազմել բազմազան կերերից՝ բավարար քանակությամբ սպիտակուցի, հանքային նյութերի և վիտամինների պարունակությամբ։

Կարևոր նշանակություն ունի նաև պահվածքն ու խնամքը։ Ջմեռը մայրերը պետք է սիստեմատիկ կերպով դուրս հանվեն զրոսանքի։ Ամառը նրանք պետք է լինեն արոտում։ արոտի կանաչ, հյութալի, վիտամիններով հարուստ կերը, մշտական շարժումները մաքուր օդում՝ առանձնապես լավ են ազդում մայրերի բեղմնավորման և պտղաբերության վրա։

ՀՂԻ ՄԵՐՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Հղի մերունները սննդանյութերի մեծ պահանջ ունեն: Նրանք կերի սննդանյութերն օդտագործում են իրենց կյանքը պահպանելու և պտղի զարգացման համար: Երիտասարդ մերունները սննդանյութերը ծախսում են նաև իրենց հետագա աճման համար:

Գիտնականները պարզել են, որ պտղի չոր նյութերը հիմնականում կազմված են սպիտակուցից և հանքային նյութերից, այդ պատճառով հղի մերունների ռացիոնի մեջ պետք է լինեն բավարար քանակությամբ այդպիսի նյութեր:

Հղի մերունները առանձնապես կարիք ունեն վիտամինների (Ա և Ե): Վիտամինների բացակայության հետևանքով նրանք ծնում են մեռած, երբեմն կույր գոյներ, բացի այդ, ծնվում են քիչ թվով և թույլ գոյներ:

Վերոհիշյալ սննդանյութերի պակասության հետեւանքով հղի մերունները նիհարում, հյուծվում են, այդ պատճառով ոչ միայն թույլ, անկենսունակ դոջիներ են ծնում, այլ և ծնելուց հետո շատ քիչ կաթ են ունենում:

Հղի մերունների համար կերաբաժիններ կազմելիս պետք է օգտվել 4-րդ աղյուսակում բերված նորմաներով:

Հղի մերունները հաճախ փորկապ են լինում, զրա առաջն առնելու համար անհրաժեշտ է նրանց, առանձնապես հղիության երրորդ ամսից սկսած, կերցնել թեփ, որը քիչ թուլացնում է ստամոքսը:

Հղի մերուններին անհրաժեշտ է տալ հյութալի կերեր (կարտոֆիլ, գազար, սիլոս, ճակնդեղ):

Հղի մերուններին պետք է կերակրել անհատականութեն, օրական 3 անգամ, հավասար ընդմիջումներով. առավոտյան՝ ժ. 4—5, ցերեկը՝ ժ. 1—2 և երեկոյան՝ ժ. 7—8:

Յուրաքանչյուր կերակրումից հետո հղի մերուննե-

քին պեսաք է տալ նրանց ուզածի չափ մաքուր, թարմ ջուր, 12—14° ջերմությամբ:

Աղյուսակ № 4

Հղի մերունների կերակրման նորմաները

Մերունի քաշը (կգ.)	Հղի ու թյան ամեներ			
	1	2	3	4
Կերակրի մակարդ (կգ.)	Մարսնելի կուց (դ.)	Կերակրի մակարդ (կգ.)	Մարսնելի կուց (դ.)	Կերակրի մակարդ (կգ.)
Մերունի քաշը (կգ.)	Մարսնելի կուց (դ.)	Կերակրի մակարդ (կգ.)	Մարսնելի կուց (դ.)	Կերակրի մակարդ (կգ.)

Երիտասարդ մերունները մինչև 3 տարեկան

120—140	4,0	320	4,4	350	4,6	460	4,8	480
140—160	4,2	340	4,6	370	4,8	480	5,0	500
160—200	4,4	350	4,8	380	5,0	500	5,2	520
200—250	4,6	370	5,0	400	5,2	520	5,4	540
250—300	4,8	380	5,2	420	5,4	540	5,6	560

3 տարեկանից բարձր մերուններ

160—180	2,6	210	3,0	240	3,2	290	3,4	310
180—200	2,9	230	3,3	260	3,5	315	3,7	330
200—220	3,0	240	3,4	270	3,6	320	3,8	340
220—240	3,2	255	3,6	290	3,8	340	4,0	360
240—260	3,5	280	3,9	310	4,1	360	4,3	380
260—280	3,8	300	4,2	335	4,4	385	4,6	415
280—300	4,0	320	4,4	350	4,6	410	4,8	430
300—320	4,3	345	4,7	375	4,9	440	5,1	460

Կերակրելուց և ջրելուց հետո պետք է հղի մերուններին հանել բակ և այնտեղ պահել 20—30 րոպե, որպեսզի նրանք այնտեղ դատարկեն իրենց ստամքաբ. այդ գեպքում խոզանոցը մաքուր և չոր է մնում:

Հղիության առաջին 1—2 ամիսը մերուններին կո-

բելի է պահել խմբերով՝ յուրաքանչյուր կացողում
3—4 մերունից ոչ ավելի, հղիության երրորդ ամսին
երկու մերունից ոչ ավելի, իսկ հղիության չորրորդ
ամսին՝ ամեն մի կացողում մեկ մերուն:

Հղի մերունի պտղի զարգացման վրա խոշոր չափով
աղղում է մերունի խնամքը՝ մաշկի մաքրությունը,
մաքուր, թարմ օդը, սխտեմատիկ զբոսանքը օրական
մի քանի ժամ, բացի այն օրերից, երբ դուրսը սառնա-
մանիք է կամ անձրև է դալիս։ Զմռանը, զբոսանքի հա-
նելուց առաջ պետք է անպայման ջրել, որպեսզի նրանք
դրսում ձյուն չուտեն։

Գարնանն ու ամառը հղի մերունները պետք է ա-
րածեն։ Այդ նպատակով նրանց խոզանոցից փոխադրում
են արոտավայրին մոտիկ թեթև տիպի շենքերի մեջ
(վրան-ճամբարներ)։ Արեւ, մաքուր օդը, կանաչ կերը
և զբոսանքը շատ լավ են աղղում սաղմի զարդացման
վրա։

Վիժումներից խուսափելու համար պետք է հղի
մերուններին կերցնել անպայման լավորակ կերեր։ Զի
կարելի նրանց կերցնել բորբոսնած, հոտած և սառած
կերեր։

ՄԵՐՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏԱՍՏՈՒՄԸ ԾՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԵՎ ԾՆԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Մերունի ծնելու ժամանակը մոտենալիս, 2—3 շա-
բաթ առաջ, նրան փոխադրում են նախապես լվացված
և ախտահանված կացոց։ Կացոց փոխադրելուց առաջ
զարնանը և ամառը մերունին լվանում են տաք ջրով և
սապոնով, իսկ ձմեռը մաքրում են խոզանակով, կուր-
ծը և պտուկները լվանում են ախտահանիչ նյութով
(կրեոլինի, բորաթթվիլի լուծույթ և այլն)։

Ծնելուց 3—5 օր առաջ մերունը սկսում է անհան-
գստանալ, կուրծն ուժեղ լցվում է, պտուկները կար-

մըրում, ուռչում և մեծանում են: Կթելիս պտուկներից երբեմն դուրս են գալիս կաթի կաթիլներ:

Այդ շրջանում առանձնապես կարևոր է մերունին պաշտպանել մրսելուց: Սառը հատակը, մանավանդ երբ ցամքար չկա, միջանցիկ քամին խողանոցում, մերուններին սառը, քամի եղանակին զրոսանքի հանելը պատճառ են դառնում մերունի կուրծի բորբոքման (մաստիտ): Բորբոքված կուրծը պնդանում է, կաթը կրծում մակարդվում է և փակում նրա մանր անցքերը: Բորբոքված կուրծը շատ զգայուն է, ցավում է, գոյին ծծելիս մերունին խիստ ցավ է պատճառում, այդ պատճառով նա դլխով գոյիններին մի կողմ է հրում, փորի վրա պառկում և նրանց մոտ չի թողնում:

Ծնից մի քանի օր առաջ խողանոցում պետք է ամբողջ օրվա հերթապահություն սահմանել:

Ծնի սկզբին պետք է նախապատրաստված լինի մաքուր սրբիչ, մկրատ՝ պորտալարը կտրելու համար, յուղի կամ կրեոլինի 10 % լուծույթ, մի դույլ տաք ջուր (40—41^o): Ծնող մերունի կացոցում ամբողջ ժամանակ սկսուք է լինի մեկ տաշտ՝ մաքուր, թարմ խմելու ջորվ (12—14^o): Ծնող մերունը, առանձնապես դժվար ծնընդի դեպքում, շատ խիստ ծարավ է զգում, և եթե նրա ծարավը չհագեցնենք, նա կարող է ուտել իր գոյիններին:

Գոյիններին ընդունողը պետք է ձեռքերը լվանա և հապնի մաքուր դողնոց:

Գոյինները միշտ ծնվում են թաց վիճակում, լորձով պատճած. պետք է զգուշությամբ մաքուր սրբիչով արագ սրբել գոյու բերանի ու քթի լորձը, որպեսզի նա ազատ չնչի, ապա ամբողջ մարմինը սրբել, չորացնել: Դրանից հետո պետք է մկրատով կտրել պորտալարը փորից 5—6 սմ., նրա ծայրը թաթախել յոդի լուծույթի մեջ և 2—3 րոպե պինդ սեղմելով, կանգնեցնել արյան հոսանքը: Ապա գոյուն կշոռում են և դնում արկղի մեջ, վերևից ծածկում են որևէ շորով և թողնում այդտեղ մինչև ծնի վերջը: Ծինը վերջանալուց հետո, եթե

11/2 ժամից ավելի չեւ անցել, գոջիներին զնում են մոր մոտ ծծելու համար; Որոշ մասնագետներ խորհուրդ չեն տալիս նօրածին գոջիներին արկղի մեջ պահել, այլ քո-քացնելուց և պորտալաբը կտրելուց հետո անմիջապես զնում են մոր մոտ՝ ծծելու համար:

Եթե գոջին ծնվում է շապիկով միասին, պետք է անմիջապես այն պատռել, թե չէ գոջին կիսեղպվի:

Հաճախ գոջիները ծնվում են առանց կյանքի որևէ նշանի: Այդպիսի գեղքերում արագ կերպով նրա բերանն ու քիթը լորձից աղատելուց հետո, պետք է ձեռքի ափով թեթև կերպով խփել կողերին ու աղղթերին և առաջին ոտքերը բաց ու խուփ անելով, շնչառություն առաջացնել: Ավելի լավ կլինի գրանից առաջ գոջուն սուզել քոլ ջրի մեջ (40—41^o), այնպես որ հետին մասը և կուրծքը լինի ջրի մեջ, իսկ ականջները, քիթը և բերանը՝ ջրից դուրս: Մի երկու բոսկ գոջուն այդպես ջրի մեջ պահելուց հետո գործազրում են վերոհիշյալ միջոցները՝ շնչառություն առաջացնելու համար:

Հենց որ ծինը վերջանա, գոջիներին պետք է թողնել մոր մոտ: Եթե ծինը 1—1,5 ժ. ավելի է տեսում, պետք է գոջիներին թողնել մոր մոտ, առանց սպասելու ծնի վերջին:

Առաջին կերակրումից հետո, եթե մայրը հանդիսաւ կերակրում է գոջիներին, կարելի է նրանց նորից արկղի մեջ չդնել, այլ թողնել մոր մոտ: Իսկ եթե մայրն անհանդիսաւ է, պետք է յուրաքանչյուր ծծելուց հետո գոջիներին դնել արկղի մեջ և մոր մոտ թողնել 1—1,5 ժ. ընդմիջումներով:

Երբեմն գոջիները ծնվում են ոչ ճիշտ դասավորված սուր ատամներով և ծծելիս ցավեցնում են մոր պտուկները. գրանցից խուսափելու համար խորհուրդ է տրվում այդ ատամների սուր ծայրերը կտրել հատուկ աքցանով, իսկ լնդերին յոդ քսել:

Գոջիներին առաջին անգամ ծծեցնելիս պետք է աշխատել ավելի թույլերին դնել առաջին պտուկների կող-

մը, որոնք ավելի կաթնոտ են, իսկ ուժեղներին՝ վերջին պառկների մոտ։ Մի քանի օր հետո գոջիներն իրենք սովորում են որոշ պառկի և շաբունակում են դրանից ծծել։

ՄՈՐ ՏԱԿ ԹՈՂՆՎԵԼԻՔ ԳՈԶԻՆԵՐԻ ԹԻՎԸ ԵՎ
ՊՏՈՒԿՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՆՐԱՆՑ ՄԻԶԵՎ

Ծնված գոջիներին, մանավանդ երր նրանք բազմարքանակ են, լրիվ կերպով պահպանելու համար կարելի է կիրառել երկու մեթոդ։ Առաջինն այն է, որ բոլոր «ավելորդ» (այսինքն մոր լավ զարգացած պառկների թը վից ավելի) գոջիներին գցում են ուրիշ մերունի տակ, որը տվյալ մերունի հետ միաժամանակ է ծնել և քիչ գոջի ունի։ Այդ նպատակով մերուններին զուգավորում են այն հաշվով, որ միաժամանակ մի քանի մերուն ծնի։

Որպեսզի մերունն ուրիշ գոջիներ ընդունի, նրանց այդ մերունի գոջիների հետ միասին դնում են արթիլի մեջ, ապա զբանց վրա ցրցանում են կրեոլինի թույլ լուծույթ և գցում մոր տակ։ Այս դեպքում սովորաբար մերունը չի կարողանում տարբերել իր գոջիներին օտար գոջիներից և բոլորին ընդունում է։

Երկրորդ մեթոդն այն է, որ մոր տակ թողնում են բոլոր ծնված գոջիներին, մանավանդ եթե մերունը կաթնառատ է։ Այս գեպքում բոլոր գոջիներին բաժանում են երկու խմբի. առաջին խմբի մեջ գցում են ամենից ավելի ուժեղ գոջիներին, մոր գործող պառկների թվին համապատասխան։ Երկրորդ խմբի մեջ մնում են մնացած գոջիները։ Գոջիների յուրաքանչյուր խումբը հերթով, ժամը մեկ անգամ թողնում են մոր տակ։ այդ նպատակով մոր կացոցին կից գոջիների համար պատրաստում են երկու բաժանմունք իրենց մուտքերով, որտեղ նրանց տեղավորում են կերակրելուց հետո։

ԾԾՄԱՅՐ ՄԵՐՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄՆ ՈՒ ԽՆԱՄՔԸ

Մերունների բարձր կաթնատվությունը, այստեղից և դոչիների լավ զարգացումը, հիմնականում կախված է նրանց կերակրումից ու խնամքից:

Որպեսզի ծծմայր մերունը ավելի շատ կաթ արտադրի, պետք է նրան կերակրել առատ և բազմատեսակ կերերով, որոնք պետք է պարունակեն բավարար քանակությամբ սպիտակուց, վիտամիններ և հանքային նյութեր:

Կաթի գոյացման համար առանձնապես կարևոր նշանակություն ունի սպիտակուցը: Անհրաժեշտ է մերունի ռացիոնի մեջ մտցնել այնպիսի կերեր, որոնք հարուստ են սպիտակուցային նյութերով, ինչպես նաև հանքային նյութերով և վիտամիններով: Այս նպատակով անհրաժեշտ է խոզերի համար մթերել թիթեռնածաղկավոր բույսեր, օրինակ, առվույտ, կորնդան, վիկ և այլն, որոնք, ինչպես գիտենք, հարուստ են սպիտակուցով, հանքային նյութերով ու վիտամիններով:

Ծծմայր մերունների ռացիոնը պետք է կազմել հետևյալ նորմաների համաձայն (Աղյուս. № 5, էջ 39):

12 գոյուց ավելի կերակրող մայրերին կերը տալիս են նրա ուղածի չափ (ինչքան կուտի): Ռացիոնում սպիտակուցի քանակը պետք է լինի 100—110 գրամից ոչ պակաս՝ յուրաքանչյուր մեկ միավոր կերին: Իսկ եթե դոջիների թիվը 8-ից պակաս է, նորման համապատասխանութեն պակասեցվում է 0,4 կերի միանալով և 40 գ. սպիտակուցով՝ յուրաքանչյուր պակասող գոյու համար:

Նոր ծնած մերունին լրիվ ռացիոն սկսում են տալ աստիճանաբար 5—6 օրվա ընթացքում: Ծնից հետո առաջին 4—6 ժամը ծծմայր մերունին չպետք է կերակրել, նրան պետք է տալ միայն ուղածի չափ ջուր: Ծնելուց 4—6 ժամ հետո մերունին տրվում է 200—300 գրամ ցորենի թեփի կամ դարու և կամ վարսակի մաղածալյուր: Այսպիսով ծնելուց հետո առաջին 2—3 օրը մե-

քունը ստանում է միայն 500—700-ական գրամ թեփ
կամ ջարդած հասիկ:

Սղյուսակ № 5

Մծմայր մերունների կերտերման նօրմանները

Օրական մեկ մերունին պետք է տալ, եթե կերակրում է											
8 դոչի		9 դոչի		10 դոչի		11 դոչի		12 դոչի			
մինչանի											
քաշը	մերունի	առվազանի	մերունի								
(կգ.)	(կգ.)	(կգ.)	(կգ.)	(կգ.)	(կգ.)	(կգ.)	(կգ.)	(կգ.)	(կգ.)	(կգ.)	(կգ.)

Երիտասարդ անող մերուններին մինչև 3 տարեկան

120—140	5,9	590	6,3	630	6,7	670	7,1	710	7,5	750
140—160	6,0	600	6,4	640	6,8	680	7,2	720	7,6	760
160—180	6,2	620	6,6	660	7,0	700	7,4	740	7,7	770
180—200	6,4	640	6,8	680	7,2	720	7,6	760	7,8	780

3 տարեկանից բարձր մերուններին

160—180	5,5	550	5,9	590	6,3	630	6,7	670	7,1	710
180—200	5,9	590	6,3	630	6,7	670	7,1	710	7,5	750
200—220	6,2	620	6,6	660	7,0	700	7,4	740	7,8	780
220—240	6,4	640	6,8	680	7,2	720	7,6	760	8,0	800
240—260	6,7	670	7,1	710	7,5	750	7,9	790	8,3	830
260—280	6,9	690	7,3	730	7,7	770	8,1	810	8,5	850
280—300	7,2	720	7,6	760	8,0	800	8,4	840	8,8	880
300—320	7,5	750	7,9	790	8,3	830	8,7	870	9,1	910

Երբորդ օրից սկսած՝ ծծմայր մերունի ռացիոնի մեջ մտցվում է 300—400 գրամ խտացրած կեր, 500—600 գրամ արմատապտուղ և 200—300 գրամ խոտ: Ամառվա շրջանում արմատապտուղների և խոտի վոխտեն տալիս են 400—500 գրամ նոր հնձած առվույտ կամ երեքնուկ:

Ծնելուց 5—6 օր հետո մերունին սկսում են տալ լրիվ ռացիոն:

Ծծմայր մերունի ռացիոնը կազմում էն բազմազան կերերից: Խտացրած կերերից պետք է ռացիոնի մեջ մտցնել աղացված վարսակ, դաբի, հորեկ, ցորենի թեփ, քիչ քուազ (0,5 կղ. ոչ ավելի), շիճուկ, քաշած կաթ և այլն. տրվում է նաև խոտի ալյուր, լավորակ սիլոս, հանքային կերեր: 12 գոջուց ավելի կերակրող մերուններին պետք է տալ 200—300 դրամ ձկան ալյուր կամ մսոսկրային ալյուր: Ծծմայր մերուններին բամբակի քուազ չպետք է տալ: Հյութալի կերերից ամենից լավն է տալ դապար, ճակնդեղ, սիլոս, կարտոֆիլ: Այդ կերերը լավ են աղբում մարսողության վրա, լավացնում են մնացած կերերի մարսելիությունը և բարձրացնում մերունների կաթնատլությունը:

Մերուններին սիլոս կարելի է տալ ծնելուց 10 օր հետո սկսելով 0,5 կղ.-ից, և աստիճանաբար հասցնել օրական մինչև 5 կղ.-ի:

Մերուններին սիլոս կերցնելիս պետք է ուշադրություն դարձնել, որ գոջինները մոր կերատաշտին չմոտենան և սիլոս չուտեն: Եթե գոջինների մեջ փորբուծ առաջանա, պետք է իսկույն և եթ դաղաքեցնել մերուններին սիլոս տալը:

Մերուններին հանքային կերեր պետք է տալ 10—15 դրամ, յուրաքանչյուր 1 կղ. խտացրած կերի հաշվով. կարելի է կազմել հանքային կերերի հետեւալ խառնուրդը.

սեղանի աղ	40—50 %
կավիճ	40—20 %
ոսկրալյուր	20—30 %

Ծծմայր մերուններին պետք է կերակրել օրական ոչ պակաս, քան 3 անգամ, համասար ընդմիջումներով. իսկ 10-ից ավելի գոջի ունեցող մերուններին՝ օրական 4 անգամ:

Ծնելուց 5 օր հետո մերուններին անպայման պետք է հանել զրոսանքի (առանց գոջինների). ամառը զրոսանքի հանել արտառում, առաջին 2—3 օրը 30 րոպեով, ապա 1—1,5 ժամով: Ամառը ծծմայր մերունների արա-

ծելու համար պետք է հատկացնել լավագույն, մոտիկ
արոտները :

ԾԾԿԵՐ ԳՈԶԻՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄԸ

Խոզաբուծության ստախանովականների փորձը
ցույց է տալիս, որ գոջիների պահպանման և հաջող
աճեցման պայմաններից մեկը նրանց լրացուցիչ կերա-
կըրման կազմակերպումն է։ Սովորաբար ծնվելուց 3—5
օր հետո արդեն գոջիները կարիք են զգում լրացուցիչ
կերերի, հատկապես հանքային նյութերի։ Որպես հան-
քային կեր նրանց տալիս են փայտածուխ, կալիմ,
ոսկերպուր, թաց-կարմիր կավ։ Կարմիր կավի մեջ չատ-
երկաթ կա, որը գոջիներին պաշտպանում է
արյան պակասությունից։ Այս հիվանդության դեպ-
քում գոջիները արագ թուլանում են, արարկու-
թեան գառնում, նրանց մեջ փորձուծ է նկատվում։ Դրա
դեմն առնելու համար չատ կարենոր է գոջիներին ժա-
մանակին սովորեցնել կարմիր կավ ուտելուն։ Լավորակ-
կավ ունենալու համար այն պետք է վերցնել խոր շեր-
տերից— գետնի մակերեսից առնվազն մեկ մետր խոր-
քից։

Ծծկեր գոջիներին հանքային կերերը պետք է տալ
հատուկ կերատաշտի մեջ, որը պետք է դնել այնպիսի
տեղ, որ միայն գոջիները օգտվեն։ Լրացուցիչ կերա-
կըրման բաժանմունքը պետք է մոր կացոցին կից լինի։

Բացի չոր հանքային կերերից, չատ օդտակար է
ծծկեր գոջիներին տալ ջրի մեջ լուծված երկաթի ար-
ջասալ (ծծմբաթթվային երկաթ), 1 լիտր ջրում 1—2
գրամի հաշվով։ Գոջիների ծծելուց առաջ մերունի
պտուկները պետք է թրջել այդ լուծույթով։ Երկաթի
արջասալը, ինչպես նաև կարմիր կավը գոջիներին
պաշտպանում են արյան պակասությամբ հիվանդանա-
լուց։

Առաջավոր ֆերմաներում, գոջիներին 5 օրական հա-
սակից հետո արդեն սովորեցնում են հատիկային կերե-

քին: Այդ նպատակով լրացուցիչ կերակրման բաժանմունքում գնում են կերատաշտ՝ մեջը վարսակի, գարու, եղիպատացորենի, ոլոռի մինչև կարմրելը բովածհատիկներ: Հատիկները ուտելու դեպքում գոջիները սովորում են կերը ծամել և դա օդնում է նրանց ատամների արմատների դուրս դալուն:

3—5 օրական հասակից պետք է գոջիներին տալ մաքուր, 10—12^o ջերմություն ունեցող ջուր:

Երբ մերունի գոջիների թիվը մեծ է և ինքն էլ սակավակաթ է, գոջիներին 5—10 օրական հասակից սկըսում են լրացուցիչ տալ կոլի կաթ, սկզբում 2—3 ճաշի գդալ և աստիճանաբար ավելացնելով, երկու ամսական հասակում հասցնում են ամեն մեկին օրական 0,5 լիտրի:

Հինգերորդ տասնօրյակից սկսած գոջիների ռացիոնի մեջ մտցնում են քաշած կաթ՝ ամեն մի զլլիքին տասնօրյակում 2,5 լիտր: Վեցերորդ տասնօրյակին տալիս են 4,5 լիտր քաշած կաթ: Գոջիներին կաթը խմեցնում են օրական առնվազն 3—4 անգամ: Ամեն անգամ կաթ խմեցնելուց հետո կերատաշտը խնամքով լվանում և չորացնում են:

8—10 օրական հասակից պետք է գոջիներին տալ խոտացրած կերերի խառնուրդ՝ մազած ալյուրի ձևով: Այդ խառնուրդը կարելի է կերցնել ինչպես չոր վիճակում, այնպես և շփոթի և կիսելի ձևով՝ ջրի կամ քաշած կաթի մեջ եփած: Գոջիներին կերակրելիս պետք է հետեւ, որ բոլոր գոջիները լավ ուտեն և ավելի ուժեղ գոջիները թույլերին չձնշեն: Կերակրելուց հետո կերատաշտերը պետք է խնամքով լվալ և չորացնել: Ծնվելուց 10 օր հետո, որպես վիտամինային կեր, գոջիներին տալիս են լավ թիթեռնածաղիկ, խոտի տերևներ և քերած գազար:

20—25 օրական հասակից գոջիներին տալիս են մանր կոտորած հում գազար, ճակնդեղ, դղում և քիչ եփած կարտոֆիլ:

Գոջիների հաջող մեծացման համար խոշոր նշա-

Նակություն ունի խնամքը և պահվածքը: Ջմեռը, սկըսած 5 օրական հասակից, ամեն օր, բացառությամբ ցուրտ և վատ եղանակների, պետք է նրանց դուրս հանել զբոսանքի, սկզբում 5—10 րոպեով, ապա 15 օրական հասակից զբոսանքի տևողությունը աստիճանաբար հասցնում էն 30—40 րոպեի: Զբոսանքի համար խոզանոցին կից պատրաստում էն փոքրիկ բակեր: Զբոսանքի ժամանակ գոջիները պետք է անընդհատ շարժման մեջ լինեն, հենց որ նրանք սկսեն մրտել, պետք է նրանց քշել խոզանոց: Ամառը 5—10 օրական հասակից դոջիներին բաց են թողնում արոտ, մոր հետ:

Առանձին ուշադրությամբ պետք է հետևել գոջիների մաքրությանը: Ամառը պետք է նրանց լողացնել մաքուր ջրում, առնվազն շաբաթը մեկ անգամ:

Այն շենքը, որտեղ պահվում են գոջիները, պետք է լինի օրինակելի մաքուր վիճակում:

ԾԾԻՑ ԿԾՐԱԾ ԳՈԶԻՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄԸ

Գոջիներին սովորաբար ծծից կտրում են 2 ամսական հասակում: Խոկ եթե որոշված է նրանց պահելնախրի նորոգման համար, ծծից կտրում են 2,5 ամսական հասակում, որովհետեւ այդ հասակում ծծից կտրված գոջիները ավելի խոշոր և ամուր են լինում, նրանք հետաքայում ավելի արագ և լավ են աճում: Գոջիներին ծծից կտրում են աստիճանաբար՝ 6 օրվա ընթացքում: Ծծից կտրելուց հետո գոջիներին առաջին 15 օրը պետք է տալ այն կերերը, ինչ որ նրանք լրացուցիչ ստանում էին ծծկերության շրջանում:

Ծծից կտրածների համար ուացիոն կազմելիս պետք է օդուվել կերի հետևյալ նորմաներից:

Աղյուսակ № 6

Ծծից կտրած գոջիների կերակրման նորմաներ

Կոնդանի քաշը (կգ.)	Պահանջվում է օրական
15—20	1,1—1,3
20—30	1,5—1,7
30—45	1,8—2,1

Ծծից կարածներին, բացի խտացրած կերերի խառնութից, միաժամանակ տալիս են Հյութալի կերեր՝ կարտոֆիլ, ճակնդեղ, գազար, դղում և այլն, օրական մեկ գլխին մոտավորապես 1—2 կգ.։ Բացի այդ, պետք է տալ լավ թիթեռնածաղկավոր խոտ։ Ամառը ծծից կտրած գոջիները պետք է օգտվեն լավ արոտից և ստանան լրացուցիչ կանաչ կեր։ Հանքային կերերը կարելի է տալ կամ խտացրած կերերի հետ կամ առանձին, տաշտերի մեջ։

Ծծից կտրած գոջիներին պետք է կերակրել օրական 4—5 անգամ։

Մայրական կաղմի նորոգման համար թողնվող մատղաշներին պետք է առանձնացնել և պահել առանձին, 5—6 գլուխ ամեն մի կացոցում։

Նախրի նորոգման համար մեծացվող մատղաշներին պետք է կերակրել հետևյալ նորմաներով։

Աղյուսակ № 7

Նորոգման մատղաշների կերի նորմաները

Կենդանի քաշը (կգ.)	Պահանջվում է օրական մեկ դլմին	
	Կերի միավոր (կգ.)	Մարմերի սովոր. (գ.)
30—45	1,8—2,1	190—200
45—60	2,0—2,2	200—220
60—75	2,3—2,7	210—250
75—90	2,5—3,1	210—260
90—100	2,7—3,3	230—280
100—120	2,8—3,5	230—290
120—145	2,9—3,7	

Նորոգման (ոեմոնտի) մատղաշների ռացիոնը պետք է կաղմվի բազմազան կերերից։ Բացիոն կաղմելիս խորհուրդ է տրվում օգտվել ստորև բերված սխեմաներով։

Նորոգման (ռեմոնտի) մատղաշների ռացիոնները (տրկոսներով)

Կենդանի քաշը (կգ.)	Զժեռվա մատղային շրջանում								Խոսքած հերթականություն	
	Առաջնական սիստեմ	Երկրորդ սիստեմ				Ամառ				
Բնացընթացիկ կերպ	Արմատավորության պահպան	Ելացութելու պահպան	Ելացութելու պահպան	Միջակ կերպ	Հիման	Բնացընթացիկ կերպ	Արմատավորության պահպան	Միջակ կերպ	Հիման	
30—50	48	5	7	10	30	85	7	3	5	80—90
50—70	35	5	10	10	40	80	10	5	5	75—85
70-ից բարձր	20	5	15	10	50	75	15	5	5	70—80

Նորոգման (ռեմոնտի) մատղաշներին օրիվա ընթացքում պետք է կերակրել առնվազն 3 անգամ: Զմեռը նրանց պետք է ամեն օր 2,5—3 ժամով հանել զբոսանքի: Ամառը նրանք պետք է օգտվեն արոտից:

ԽՈԶԵՐԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՊԱՀՎԱԾՄԱԳԻ

Առաջավոր խոզաբուծական տնտեսություններում սովորաբար ամբողջ ամառը խոզերին պահում են արոտում: Շարժումները, մաքուր օդը, արևի ճառագայթները, սննդաբար կանաչը ամրացնում են նրանց օրդանիզմը և պաշտպանում զանազան հիվանդություններից:

Եթե հզի մերունները օգտվում են արոտից, նրանք ծնում են առողջ, ամուր և խոշոր գոջիներ, որոնք լավ և արագ են զարգանում: Խսկ ծծմայր մերունները արոտից օգտվելի ավելի շատ կաթ են ունենում գոջիներին կերակրելու համար, բացի այդ, նրանց կաթը ավելի հարուստ է լինում սպիտակուցով, հանքային նյութերով ու վիտամիններով:

Արոտում առանձնապես լավ են զարգանում մատղաշները: Բավոզ խոզերը տալիս են ավելի բարձր քաշ և դրանով կրծառվում է նրանց բառման ժամկետը՝ (երբեմն մինչև մեկ երրորդով):

Բացի այս բոլորից, արոտացին պահվածքի դեպ-
քում կրծատվում են խոզերի խնամքի ու կերակրման
ծախսերը, որի հետևանքով իջնում է մսամթերքների
ինքնարժեքը:

ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Խոզերին պետք է հատկացնել լավորակ արոտներ,
որոնք հարսւստ են սննդարար բուսականությամբ: Այդ
տեսակետից շատ հարմար են բազմամյա թիթեռնա-
ծաղկավոր բույսերի՝ առվույտի, երեքնուկի, կորնդա-
նի և այլն ցանքերը: Այդ բույսերը տալիս են բարձր
սննդարժեք ունեցող կանաչ զանգվածի մեծ բերք, լավ
և արագ վերաճում են և տրորվելուց քիչ են փշանում:

Բացի այս բույսերից, խոզերի արոտի համար հար-
մար են նաև վիկի, սոյայի, եղիպտացորենի, աշորայի
ցանքերը:

Արպես խոզերի արոտ, կարելի է օգտագործել նաև
գետնախնձորի, ճակնդեղի, շաղգամի և այլ արմատա-
պտուղների ցանքերը:

Խոզերի կերակրման համար կանաչ կերը կարելի է
օգտագործել երկու եղանակով,— որպես արոտ կամ
նոր քաղած վիճակում:

Արոտային բույսերի ցանքը պետք է կատարել որոշ
ժամկետներին և որոշ հերթականությամբ, այն հաշ-
վով, որ ամբողջ ամսվա ընթացքում առանց ընդմի-
ջումների խոզերն ապահովված լինեն կանաչ զանգվա-
ծով, ուրիշ խոսքով պետք է կազմակերպել կանաչ կոն-
վեյեր: Դրա համար անհրաժեշտ բույսերի տեսակնե-
րը, նրանց ցանքի ժամկետները յուրաքանչյուր կոլխո-
զում առանձին են սահմանվում, ելնելով կլիմայական և
հողային և այլ պայմաններից:

ԱՐՈՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Շատ մեծ նշանակություն ունի խոզերին ժամկե-
տին արոտ դուրս բերելը: Ժամկետից շուտ կամ ուշ ա-
րոտն օգտագործելը լավ արդյունք չի տալիս: Տարբեր

բույսեր տարբեր ժամանակ է հարմար օդտապործել որպես արոտ։ Օրինակ, առվույտի, կորնդանի, երեքնուկի ցանքերը պետք է սկսել որպես արոտ օդտապործել այն ժամանակ, երբ բույսերն ունեն 15 սմ. բարձրություն, և պետք է արածելլը դաղարեցնել լրիվ ծաղկման ժամանակ։

Զի կարելի խոզերին արոտ հանել անձրևի ժամանակ և անձրևից անմիջապես հետո։

Արոտն ավելի նպատակահարմար կերպով օդտապործելու համար պետք է այն բաժանել առանձին փոքր կտորների։ Յուրաքանչյուր արոտակտորը պետք է օդտապործել հերթականությամբ, 5—6 օրվա ընթացքում։ Մեկ կտորը լրիվ արածացնելուց հետո անցնել երկրորդ կտորին, ապա երրորդին և այլն։

Սովորաբար մեկ մերունին միանգամայն բավական է օրական 5—10 ք. մ. տարածությամբ արոտը, իսկ մատղաշների համար՝ 1,5—2 ք. մետր։

Պետք է սահմանել նաև արածեցման ճիշտ կարգ։ Սովորաբար չող եղանակին խոզերին դուրս են բերում արոտ օրական երկու անգամ՝ առավոտյան, չողն ընկնելուց առաջ, ժ. 5—10, երեկոյան, երբ չողն անցնում է՝ ժ. 4—8։ Հով օրերին խոզերին արոտ են դուրս բերում նաև կեսօրին։

Ամբողջ ամառվա ընթացքում պետք է խոզերին կանոնավոր կերպով լողացնել գետերում, առուներում և այլն։

Արոտային շրջանում պետք է օրական 2—3 անգամ լրացնեցիչ տալ խտացրած կերեր՝ առավոտյան արոտ հանելուց առաջ և երեկոյան՝ արոտից վերադառնալուց հետո (մոտավորապես 1 ժ. հետո)։

ՃԱՄԲԱՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Ինչպես ցույց է տվել առաջավոր խոզաբուծական ֆերմաների փորձը, խոզերի ամառային պահպաժքի ամենալավ ձեւը հատուկ սարքավորված ճամբարներում

Նրանց պահելն է: Այդ առանձնապես կարևոր է կազմակերպել մեզ մոտ, քանի որ մեր լեռնային արտաները մեծ մասամբ հեռու են տնտեսություն վայրերից և այդ պատճառով հնաբավոր չէ խողերին արածացնելուց հետո նորից տնտեսություն քչել:

Խողերին ճամբարներում պահելու համար կառուցում են թեթև տիպի բազեր, ծածկերով ու ցանկապատերով: Բազերը պատրաստվում են տեղական շինանյութերից՝ տախտակից, զերանակողերից, հյուսածնուղապատերից, եղեղնից: Յուրաքանչյուր ճամբարը բաժանվում է երկու մասի. մեկ մասը ծածկի տակ, մյուսը՝ բաց: Ծածկը երեք կողմից պինդ պատվում է տախտակով, իսկ բաց մասը ցանկապատվում է: Կտուրը կարելի է շինել ծղուարից՝ բազի բաց մասի հակառակ կողմը թեքված: յուրաքանչյուր բաղ բաժանվում է մի քանի բաժանմունքների, որոնք իրենց հերթին բաժանվում են առանձին կացոցների:

ԽՈԶԵՐԻ ԲՏՈՒՄԸ

Բաժման հիմնական նպատակն է ստանալ միս և ճարպ:

Յուրաքանչյուր կոլխոզ և սովխոզ խողերի բառում կազմակերպելիս իր առաջ պետք է դնի հետեւյալ խընդիրները.

1. Բավող խողերից ստանալ ամենաբարձր օրական աճ:

2. Բառումը վերջացնել կարճ ժամկետում:

3. Յուրաքանչյուր մեկ կիլոդրամ աճի համար ծախսել հնարավորին չափ քիչ կեր և քիչ աշխատանք, որի հետևանքով և կիֆնի խողամսի ինքնարժեքը:

4. Ստանալ բարձրորակ խողի միս:

Սակայն բառումը միշտ էլ լավ արդյունքներ չի պալիս: Բաժման հաջողությունը կախված է մի շարք պայմաններից, ինչպիսիք են, օրինակ՝ խողերի ցեղը, հասակը, կերը:

1. Ցեղը: Բազմաթիվ փորձերը ցույց են տվել, որ կուլտուրական վաղահաս ցեղի խողերն ավելի արագ են աճում, քան հասարակ տեղական խողերը: Նրանք ավելի բարձր օրական աճ են տալիս, հետևաբար և լավ են լրտվում: Կուլտուրական ցեղի խողերին բառելիս 1 կգ. աճի համար ավելի քիչ կեր է ծախսվում, քան հասարակ խողերին բառելիս և կուլտուրական ցեղի խողերին մորթելիս ավելի շատ միս է ստացվում:

Շատ լավ են բարձրում նաև մետիսները:

2. Հասակը: Խողերի զարգացումը կարելի է բարենել 3 շրջանի.

ա) Ուժեղ աճի շրջան, երբ նրանց օրդանիզմում նոր բջիջներ են առաջանում, օրգանները, մկանները մեծանում են: Այդ շրջանում երիտասարդ խողերը համապատասխան կերտակրման դեպքում կուտակում են առավելապես միս և շատ քիչ ճարպ: Այդ շրջանը տեղում է ծննդելու օրվանից մինչև 7—8 ամսական հասակը:

բ) Երկրորդ շրջան— 7—8 ամսականից մինչև 9—10 ամսական հասակը: Այդ շրջանում երիտասարդ խողերի մոտ մսի կուտակումը (մկաններ) քիչ իջնում է և ավելանում է ճարպի կուտակման ընդունակությունը:

գ) Երրորդ շրջան— 14—16 ամսականից բարձր հասակը: Այդ շրջանում խողերի օրգանիզմն ընդունակություն ունի կուտակել առավելապես ճարպ:

3. Կերերը խոշոր ազդեցություն են թողնում խողերի բուման հաջողության վրա: Փորձերը ցույց են տալիս, որ կերերն ազդում են ոչ միայն օրական աճի չափի վրա, այլ և մթերքի, այսինքն ճարպի ու մսի օրակի վրա: Պարզված է, որ բոլոր այն կերերը, որոնք պարունակում են 4%-ից ավելի բուսական յուղ, վատ ազդեցություն են գործում մսի և ճարպի որակի վրա: Խողերին այդպիսի կերերով բառելիս ստացվում է փափուկ, լպրծուն խողաճարպ, իսկ միսը լինում է փուխր և ոչ դիմացկուն: Այդպիսի բուման դեպքում խողամբը ըն անպետք է լինում բեկոն, ապուխտ, կտլբաս և

այլն պատրաստելու համար, որովհետեւ դրանք երկար ժամանակ պահելուն չեն դիմանում, փշանում են: Եատ ճարպ պարունակող կերերն են՝ քուսալերը, սոյան, եղիպատցորենը, վարսակը և այլն:

Հյութալի կերերը, ինչպես օրինակ, գազարը, ճակնդեղը, գլումը, կանաչ կերը, ոլոռը, ոսպը, գարին, կոբեկը, աշորան և այլն, շատ լավ են ազգում: Խողամսի և խողաճարպի որակի վրա: Խողերին այդ կերերի խառնուրդներով բտելիս ստացվում է ամուր հատիկավոր և սպիտակ ճարպ, ամուր միու վառ կարմիր գույնի: Այդպիսի խողամիսն աչքի է ընկնում հիանալի համով և միանգամայն պիտանի է երկար ժամանակ պահպող մսամթերքներ պատրաստելու համար:

ԽՈԶԵՐԻ ԲՏՄԱՆ ՏԻՊԵՐԸ

Տարբերում են խողերի բտման 3 հիմնական տիպեր՝ մսային, մսա-ճարպային և ճարպային:

1. Մսային բտում: Բտում են բացառապես երիտասարդ աճող խողերին, 4—7 ամսական հասակում, երբ նրանք ընդունակ են կուտակելու ավելի շատ միս, քան ճարպ: Սրանց մսեղիքի մեջ ճարպի քանակը սովորաբար 33—35% է բարձր չի լինում:

2. Մսա-ճարպային կամ կիսաճարպային բտում: Բտում են երիտասարդ աճող խողերին, 4 ամսականից սկսած, և բտումը վերջացնում են 9—10 ամսական հասակում: Այս գեպքում մսեղիքի մեջ ճարպի քանակը կազմում է ընդհանուր քաշի 40—45%:

3. Ճարպային բտում: Բտում են հիմնականում հասուն խողերին՝ 14—16 ամսականից վեր: Խողերին մորթելիս մսեղիքի մեջ ճարպի քանակը սովորաբար հավասար է լինում մսի քանակին կամ նույնիսկ նրանից քիչ ավելի:

Խողերի մսային բտման դեպքում կարելի է երկու նպատակ հետապնդել. 1) ստանալ թարմ, հյութեղ, քնքույշ խողամիս, եփած կամ տապակած վիճակում անմիջականորեն օգտագործելու համար և 2) ստանալ

Կոնսերվ պատրաստելու և երկար ժամանակ պահելու
համար պիտանի խոզամիս (բեկոն) :

ԲԵԿՈՆԱՅԻՆ ԲՏՈՒՄ

Բեկոն է կոչվում հասուկ ձեռվ աղած և թեթև
ծխահար արած բարձր որակի երիտասարդ խոզամիսը
Բեկոնը պատրաստվում է երիտասարդ խոզերի մսեղի-
քի կիսաններից՝ ողնաշարի ուղղությամբ 2 մասի բա-
ժանված։ Ստանդարտ պահանջներ բեկոնի և բեկոնա-
ցու խոզերի նկատմամբ.

1. Բեկոն արտադրելու համար օդտագործում են
երիտասարդ աճող խոզերին (վաղահաս կուլտուրական
ցեղի և նրա մետիսները), որոնք բոված են մինչև 6—7
ամսական հասակը, երբեմն մինչև 8.

2. Բոված խոզերը 6—8 ամսական հասակում պետք
է ունենան 70 կգ-ից ոչ պակաս և 110 կգ-ից ոչ բարձր
կենդանի քաշ։ Ամենից լավ որակի բեկոն տալիս են
այն բոված երիտասարդ խոզերը, որոնք 6—7 ամսա-
կան հասակում կշռում են 88—92 կգ։

3. Ճարպի ենթամաշկային շերտի (չպիդ) հաստու-
թյունը ողնաշարի մոտ, 6—7-րդ կողի դիմաց պետք է
լինի 2,5 սմ. ոչ պակաս և 6 սմ. ոչ ավելի։


4. Ճարպը պետք է լինի սպիտակ գույնի, սերտ և
հատիկավոր։

5. Բեկոնի ամբողջ միսը պետք է ունենա համա-
չափ ճարպային շերտեր («մարմարյա» միս)։

6. Բեկոնի համար բոված երիտասարդ խոզերը
պետք է ունենան ուղիղ, երկար մեջք, առանց ծովածք-
ների, իրանին սերտ կպած թիակներ, ոչ կախ ընկած
փոր, բարակ մաշկ առանց ծալքերի, խիտ, քնքույշ
մազեր։

Տեղական ոչ լավացրած խոզերը, չամորձատած
վարպները, 4 ամսական հասակից հետո ամորձատած
վարպները, երիտասարդ հղի մերունները և թեկուղ
մի անգամ ծնած մերունները, հիվանդ խոզերը (Փինո-

դի, տուբերկուլյոզի և այլ հիվանդությունների նշան-ներով) բեկոնային բտման համար անպետք են:



Նկ. 3.Մի խումբ խողեր գրասանքում:

Քանի որ բեկոնային բտման նպատակն է ստանալ մեծ քանակությամբ լավորակ միս, իսկ միսն առաջանում է կերի սպիտակուցային նյութերից, ուստի անհրաժեշտ է բտվող մատղաշ խողերին ապահովել անհրաժեշտ քանակությամբ լիարժեք սպիտակուցով։ Բացի այդ, պետք է ապահովել բտվող խողերի զբոսանքը մաքուր օդում, արևի տակ, որոնք նույնական նպաստում են հաջող բտմանը։ Ամառը նրանք պետք է անպայման օգտվեն արոտից։

Բացի լիարժեք սպիտակուցից, բտման հաջողության համար խոչոք նշանակություն ունեն նաև կերի միտամինները (Ա և Ծ) և հանքային նյութերը։

Բեկոնային խողերի բտումը պետք է կատարել ըստ նորմաների (աղյուսակ 8, էջ 53)։

Այս նորմաների համաձայն կազմվում են ուսցիոն-

Ներք բավկող խողերի համար, ելնելով նրանց կենդանիք քաշից և սպասվելիք օրական աճից:

Աղյուսակ № 8

Կերի նորմաներ մսային և կիսաթարպային բաման համար

(Առաջարկված է Համամիութենական Գյուղատնտեսուկան ակադեմիայի կողմից)

Կենդանիք բաշք (կգ.)	Կենսապահ կեր (կերի միավոր)	Արդյունա- վետ կեր (կե- րի միավոր չկը աճին)	Սարիտակուց չ կերի միա- վորին (գրամ)	Մինիմալ օրական աճը (գրամե- րով)
25—30	0,55	2,95	100—120	300—400
30—40	0,60	3,00	100—120	300—400
40—50	0,75	3,10	90—100	400—500
50—60	0,80	3,25	90—100	400—500
60—70	0,90	3,30	80—90	600—600
70—80	1,00	3,35	80—90	600—700
80—90	1,05	3,40	80—85	600—700
90—100	1,10	3,75	75—80	700—800
100—110	1,18	3,95	75—70	700—800
110—120	1,27	4,30	60—65	800—900
120—130	1,33	4,45	55—60	800—900
130—140	1,41	4,70	50—55	700—800
140—160	1,47	5,05	50—55	600—700
160—180	1,58	5,20	50—55	550—500

Բաման էֆեկտը պարզելու համար անհրաժեշտ է սիստեմատիկաբար, ոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ, խողերին կշռել և դուրս բերել օրական աճը ժամանակաշրջանում:

Բեկոնային բաման դեպքում խողերին տալիս են բազմազան խտացրած կերեր ուսցիոնի 75—95% ի չափ, կարտոֆիլ՝ 15%, ճակնդեղ, զազար կամ դղում՝ 5%, խոտ կամ սիլոս՝ 5%:

ՄՍԱՅԻՆ ԲՏՈՒՄ

Մսային բաման նպատակն է կարճ ժամանակում ստանալ երիտասարդ խողամիս, որը անմիջականորեն օգտագործվում է տապակած կտոմ ելիտակում,

իսկ կոնսերվելու համար անհարժար է։ Այս դեպքում բտումը կարելի է կատարել ավելի էժան կերերով, հիմնականում օգտագործելով կարտոֆիլը, եղիպատացորենը և սննդի արդյունաբերության զանազան թափթը-փուկները։

ԿԻՍԱՃԱՐՊԱՅԻՆ ԿԱՄ ՄՍԱ-ՃԱՐՊԱՅԻՆ ԲՏՈՒՄ

Խողերի կիսաճարպային բտման նպատակն է ստանալ բարձր որակի խողամիս, որը միանդամայն պիտանի լինի մսային պահածոներ՝ ապուխտ, երշիկ և այլն պատրաստելու համար։ Այդպիսի մթերքներ ստանալու համար պիտանի է միայն այն խողամիսը, որն ստացվում է երիտասարդ, աճող խողերից։

Մսաճարպային բտման են ենթարկում վաղահաս, լավացած խողերին, չորս ամսական հասակում, 35—40 կգ. և ավելի կենդանի քաշ ունենալու դեպքում։

Պետք է այնպես բտել, որ բտումը վերջանա 9—9,5 սմսական հասակում, առնվազն 160—170 կգ. քաշով։

Մսաճարպային բտման համար խողեր ընտրելիս առանձին ուշադրություն պետք է դարձնել նրանց առողջության վրա։ Որևէ հիվանդություն ունեցողներին բտման չպետք է դնել, որովհետեւ նրանք ցածր աճ են տալիս և դրա հետևանքով բառումը երկարում ու թանգ է նստում տնտեսության վրա։

Մսաճարպային բտման դեպքում անհրաժեշտ է կենդանիներին ապահովել սպիտակուցով, հանքային նյութերով և վիտամիններով, որոնք անհրաժեշտ են տրագ աճման համար։

Մսաճարպային բտման համար ոացիոններ կազմելիս պետք է օգտագործել № 8 աղյուսակում բերված նորմաները։

ՃԱՐՊԱՅԻՆ ԲՏՈՒՄ

Ճարպային բտման են դրվում հասուն, խոտանված, պառաված մերունները, այլ և $1\frac{1}{2}$ տարեկանից բարձր այն մերունները, որոնք խոտանված են այս կամ

այն պատճառով և վերջապես, մի անգամ արդեն ստուգված մերունները, որոնք այլևս անպետք են սերունդ արտադրելու համար:

Խոզերի ճարպային բտման գլխավոր նպատակն է ստանալ հնարավորին չափ շատ արտաքին (շպիզ) և ներքին ճարպ և լավացնել մոխ որակը:

Ճարպային բտման դրված խոզերը բտման վերջում ողնաշարի մասում, 6-7-րդ կողերի դիմաց, ունենում են 6,5 սմ. ոչ պակաս հաստության ճարպի շերտ:

Ճարպային բտումը խիստ տարբերվում է մսային և մսաճարպային բտումներից: Եթե վերջինների դեպքում պահանջվում էր, որ խոզերն ապահովվեն մեծ քանակությամբ սպիտակուցային նյութերով, ճարպային բտման դեպքում այդ չի պահանջվում, որովհետեւ այս դեպքում կենդանին կուտակում է հիմնականում ճարպ, իսկ ճարպը առաջանում է մեծ մասամբ ածխաջրատներից, այսինքն օսլայից և շաքարից: Խացիոնում որքան շատ լինի օսլան և շաքարը, այնքան ավելի արագ տեղի կունենա խոզերի ճարպային բտումը: Խոզերի ճարպային բտումը տևում է սովորաբար 90—100 օր, երբեմն 120 օր: Բտման վերջում, որը որոշվում է միայն խոզերի գիրության աստիճանով, նրանց կենդանի քաշը կարող է հանել 180-200 կգ., երբեմն 300 կգ.:

Խոզերի ճարպային բտման դեպքում կարելի է օգտագործել բազմատեսակ կերեր (կոսիտ, հյութալի, սիրոս, կանաչ կեր և խոտացրած կերեր): Առանձին նշանակություն ունին հյութալի կերերը, առանձնապես կարտոֆիլը, որը պարունակում է մեծ տոկոս օսլա, իսկ հատիկային կերերից՝ եղիպտացորենը, գարին, որոնք նույնպես պարունակում են մեծ տոկոս օսլա:

Գետք է նկատի ունենալ, որ այս տիպի բտման դեպքում ճարպն օգտագործվում է բարձր տեսակի ծխահարած երշիկներ պատրաստելու համար, հետևաբար նա պետք է լինի բարձր որակի, երկար ժամանակ դիմացող, սերտ, հատիկավոր, սպիտակ գույնի: Ահա այս նպատակով էլ բտումը վերջացնելուց $1\frac{1}{2}$ ամիս ա-

ռաջ պետք է ռացիոնի մեջ մտցնել այնպիսի կերեր, որոնք տալիս են բարձր որակի ճարսդ:

Խողերի ճարպային բառումն անցկացնելիս խորհուրդն է տրվում օգտագործել հետեւյալ նորմաները (աղյուսակ 9):

Աղյուսակ № 9

Կերանօրմաներ խողերի ճարպային բառան համար

Կենդանի քաշը (կգ.)	Միջին օրա- կան աճը (կգ.)	Կերի միա- վորների ծախսը 1 կգ. աճի համար (կգ.)	Պետք է տալ օրական 1 գլուխին	
			Կերի միա- վոր (կգ.)	Մարտելի սպիտակուց

Բառան առաջին շրջանում

120	1400		7,0	
140	1500		7,5	60—70
160	1600	5,0	8,0	գրամ
200	1700		8,5	1 կերի
240	1800		9,0	միավորին

Բառան երկրորդ շրջանում

160	1100		8,2	
180	1200		9,0	50—55
200	1200	7,5—7,7	9,0	գրամ
250	1300		9,8	1 կերի
300	1300		10,0	միավորին

Բառան երրորդ շրջանում

190	700		7,3	
220	750		7,8	50—55
240	800	10,4—10,6	8,3	գրամ
290	850		9,0	1 կերի
340	900		9,5	միավորին

Լավ գիրացած խողերը ճարպային բառան դեպքում ունենում են 82—85 % սպանդային քաշ (կազմի հետ):

ԽՈԶԵՐԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ
ԱՄԵՆ ՑԵՍԱԿ ԲՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Բառման հաջողությունը զգալիորեն կախված է նաև հետեւյալ պայմաններից՝

1. Կերի նախապատրաստումը: Կերառելով կերերի նախանդատը ամանագան ձևեր և որոշ հերթականությամբ դրանք խողերին կերցնելով, կարելի է նըրանց ախորժակը միշտ բարձր մակարդակի վրա պահել և ստիպել, որ նրանք ուտեն մեծ քանակությամբ կերեր։ Այս դեպքում կստացվի բարձր աճ։

Պրակտիկան ցույց է տվել, որ կերի նախապատրաստման ամենալավ եղանակը խտացրած կերերի և եփած կարտոֆիլի հալասար խառնուրդից հաց թխելն է։ Թխած հացը կերցնում են բտվող խողերին մանր կըտորների ձևով, վրան լցնելով գանաղան ջրիկ կերեր (կիլաս, հացի քաղցու, վարսակի կաթ և այլն)։ Կերերի պատրաստման այս եղանակը առանձնապես հանձնարարելի է ճարպային և կիսաճարպային բտման վերջին շրջանում։ Այդ կերերով կերակրելիս խողերն ունենում են մեծ ախորժակ և տալիս են բարձր աճ։

2. Բտվող խողերի խմբերի ընտրությունը։ Բտվելիք խողերի խմբերի մեծությունն ու բնտրությունը մեծ ազդեցություն են գործում օրական աճի վրա։ Փորձը ցույց է տվել, որ բտվող խողերին պետք է բաժանել խմբերի ըստ սեռի։ մեկ կացոցում պահել է գ խողերին, մյուսում՝ ամորձատածներին։ Եթե միասին են պահվում, էգերը ցանկություն ունենալով, անհանգստանում են և անհանդստացնում ամորձատած խողերին։ Դրա հետևանքով էլ ցածր աճ է ստացվում։ Լավ կլինի յուրաքանչյուր կացոցում միասին պահել 4—6 գլուխ խող։

3. Կերակրումների թիվն օրվա ընթացքում։ Ստախանովական խողապահների փորձը ցույց է տվել, որ բտվող խողերին, առանձնապես ճարպային և մսաճարպային բտման դեպքում, պետք է կերակրել օրական

առնվազն չորս անգամ։ Ռացիոնի մեջ 50 % կարտոֆիլ
և 25%-ից ավելի ուրիշ հյութալի կերեր մտցնելիս
պետք է կերակրել օրական առնվազն 5 անգամ, հավա-
սար ընդմիջումներով։

4. Խոզերի գրոսանելը։ Աճման ուղղացման ամե-
նառաջեղ շրջանում զբոսանքը մատղաշ խոզերի աճի,
հետեւաբար և բաման արդյունքի վրա խոշոր ազդեցու-
թյուն է գործում։ Բավող երիտասարդ խոզերը բաման
առաջին երկու ամիսը ամեն օր պետք է դուրս հանվեն
զբոսանքի՝ մաքուր օդում և արևի տակ։ Ամենից լավ
է զբոսանքի հանել ցերեկվա և իրիկվա կերակրումից
առաջ։ Զբոսանքից վերադառնալուց հետո խոզերը
պետք է առնվազն կես ժամ հանգստանան և ապա կե-
րակրվեն։

5. Կերատաշտերի մաքրությունը։ Բաման ժամա-
նակ յուրաքանչյուր կերակրումից հետո պետք է կե-
րատաշտերը մաքրել ու լվալ տաք ջրով, ապա չո-
րացնել, հակառակ դեպքում կերի մնացորդները կթրթ-
վեն և դա կազդի խոզերի ախորժակի վրա։ Շաբաթը
երկու անգամ կերատաշտերը լվալուց հետո պետք է
4—8 ժամ պահել կրածրի մեջ և ապա լվալ մաքուր
ջրով։

Բաման ժամանակ պետք է նկատի ունենալ նաև մի
քանի պայմաններ։

1. Չամորձատած վարազներ չբուել։

2. Խմբային բաման դեպքում խոզերին ընտրել
այնպես, որ միևնույն խմբերի խոզերի կենդանի քաշե-
րի միջն տարբերությունը մեծ չլինի, օրինակ 30-ից
մինչև 70 կգ. քաշ ունեցող խոզերի բաման դեպքում
առանձին խոզերի քաշերի տարբերությունը կարող է
լինել 5—9 կգ-ից ոչ ավելի։ Խոշոր քաշի (100—150 կգ.)
խոզերի բաման դեպքում տարբերությունը կարող է
լինել 12—16 կգ.։

Բոլոր անհանդիստ, կռվարար, շատ վատ աճող
խոզերին պետք է առանձնացնել և նրանցից կազմել ա-
ռանձին խմբեր կամ ենթախմբեր, կիրառելով անհա-
տական կերակրում՝ բաժանարարների միջոցով։

3. Բավող խոզերին պետք է կերակրել խիստ որոշ ժամերին, առանց օրվա կարդը խախտելու։ Առաջին 3—5 օրը խոզերը սովորում են որոշ ռեժիմի, որը փոխելու դեպքում նրանք խիստ անհանգստանում են և դրա հետեւանքով նրանց աճն ընկնում է։

4. Առանձին բաժանմունքներում կերակրելուց հետո լավ կլինի 15—20 րոպեով խոզերին քշել բակը, որտեղ նրանք թողնում են իրենց արտաթորությունները. այդ դեպքում խոզանոցը մաքուր և չոր կմնա։

5. Յուրաքանչյուր կերակրման ժամանակ պետք է ներկա լինի բրիգադիրը, որը պետք է հետեւ խոզերի ախորժակին. վատ ուտող խոզերին պետք է առանձնացնել և չափել նրանց տաքությունը. հիվանդության դեպքում հայտնել անասնաբուժին և ձեռք առնել առաջին օդնության միջոցառումներ։

6. Բավող խոզերին ամիսը առնվազն մեկ անգամ, կերակրելուց առաջ, պետք է կշռել։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԶՈՈՏԵԿՆԻԿԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Լավ կազմակերպված զոռոտեխնիկական հաշվառումը հնարավորություն է տալիս հայտնաբերել մերուների և վարազների որակական ցուցանիշները, պարզել գոյիների աճեցման, խոզերի բաման արդյունքները և այլն։

Խոզաբուծական ֆերմայում զոռոտեխնիկական հաշվառումը կատարվում է հետեւյալ ձևով.

1. Մայրական կազմի հաշվառման մատյան.

2. Մատղաշների աճեցման հաշվառման մատյան.

3. Ակտ՝ ստացված սերնդի մասին.

4. Կերերի ծախսման տեղեկագիր.

5. Ֆերմայում աշխօրերի և բանվորական օրերի հաշվառման տեղեկագիր.

6. Ակտ՝ մատղաշների աճի և բարումից հանդած խոզերի քաշի ավելացման մասին։

Մայրական կազմի հաշվառման մատյանի մեջ (տես ձեւ № 1) գրանցվում են ֆերմայում եղած բոլոր մե-

Մայրական կազմի հաշվառման մատյան

<p>Դ պոտր բանաստեղիսի վարածդր գացրանշ</p>					
-ուոց գտնիութիւն	(. նկ) Անտք				
-բառ է հնակը	Ակակցսն իցն				
-տպա ոչ ճնշ	Ակակցսն անհ				
	Քոսուդր ոչ լիդութ				
		Մանիկի			
		(. նկ) Անտք վնդմկի			
		մակակցսն ամպ			
		մակակցսն ճեզ			
		կեղմդո քոյիմտան			
		կոչե ևսիոտենիլ			
			յոտեղտ նմ-ը		
			յոտեղտ նմ-ը		
			յոտեղտ ոչլ-է		
			մեղն դ լու		
			րադո վեսմետանդ		
				1/XII	
				25/III	
				26/III	
				6	
				5	
				12	
				6	
				5	
				1	
				1/XI	
				Փառա	
				լուսու	
				առին-	
				տակ	
				ցեղ	
Անունը, յեղը և ծառ-					
զումը (յուշց տալ ում -					
է ամրացված մե-					
լունը)					
ՕՀ	Շառշանի				
	ինշանը սալիւանակ				
	ինշինի				
	Հայութը՝ կոռմու				
	Եղայլը՝ շուշանի				

բունները. սկզբում մի խողապահին ամրացված բոլոր մերունները, ապա երկրորդ խողապահին ամրացված մերունները, հետո երրորդ և այլն: Ստացված գոջիների և ծծից կտրած գոջիների վերաբերյալ տվյալները մատյանի մեջ գրանցվում են ծնելու կամ ծծից կտրելու օրը:

Այս մատյանը հիմք է ծառայում նաև խողապահներին աշխօրեր գրանցելու՝ աճեցրած գոջիների և զուգավորված մայրերի համար:

Մատղաշների անցման հաշվառման մատյանը նույնպես Փերմայի վարիչն է տանում: Մատղաշների հաշվառումը կատարվում է խողապահին ամրացված մատղաշների յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Այդ նույն մատյանի մեջ կատարվում է առանձին խողապահներին ամրացված մատղաշների և հասուն խողերի բաժան հաշվառումն՝ ըստ առանձին բավող խմբերի: Բավող խողերի քաշը գրանցվում է բառմն սկսելուց առաջ և բառումը վերջանալուց հետո:

Տոհմական մատղաշների հաշվառումը կատարվում է անհատականորեն, իսկ բավողներինը՝ բներով, այսինքն ցույց է տրվում այն ամբողջ սերուղը, որ ըստացված է մեկ մերունից (տես ձև № 2):

Ակտ սերնդի մասին. պետք է կազմել անպայման ծնման օրը (տես ձև № 3): Այդ ակտը հիմք է ծառայում համապատասխան գրանցումներ կատարելու մայրական կազմի հաշվառման մատյանում և մատղաշների աճեցման օրագրում:

Բացի այդ ձևերից, տարվում է նաև կերերի ծախսման տեղեկագիր, որի մեջ գրանցվում է, թե որքան կեր է ծախսված և խողերի որ խմբերի համար:

Փերմաների համար կերը բաց է թողնվում կոլխոզի վարչության բաշխման համաձայն: Ծախսման հաշվառումը կատարվում է կերերի ծախսման տեղեկագրով:

Աշխօրերի և բանվորական օրերի հաշվառման տեղեկագիրը Փերմայում (տես ձև № 4) վարում է

Մատղաքանիքի անեցման հաշվառման մասին

Ազգանութիւն, անունը և հայրանունը (դրին ամրացված են զոդինքը)

Ազգանութիւնի անեցման հաշվառման մասին	Դաշտադաշտական պահանջման համար առաջարկած առաջարկագիրը	Համար 10/IV/1941	Համար 10/VII/1941	Համար 10/VIII/1941	Համար 10/X/1941
Անունը և հայրանունը (անունը առաջարկագիրը)	Տառապահների պահանջման համար առաջարկագիրը	(ՀՀԿ) ովլեցողական պահանջման համար առաջարկագիրը	(ՀՀԿ) ովլեցողական պահանջման համար առաջարկագիրը	Համար 1, 1	Համար 1, 1
Ազգանութիւնի անեցման համար առաջարկագիրը	Ազգանութիւնի անեցման համար առաջարկագիրը	Ազգանութիւնի անեցման համար առաջարկագիրը	Ազգանութիւնի անեցման համար առաջարկագիրը	5,6	5,6
Անունը և հայրանունը (անունը առաջարկագիրը)	Անունը և հայրանունը (անունը առաջարկագիրը)	Անունը և հայրանունը (անունը առաջարկագիրը)	Անունը և հայրանունը (անունը առաջարկագիրը)	15	15
Անունը և հայրանունը (անունը առաջարկագիրը)	Անունը և հայրանունը (անունը առաջարկագիրը)	Անունը և հայրանունը (անունը առաջարկագիրը)	Անունը և հայրանունը (անունը առաջարկագիրը)	32	32

» կոլագ

Ակս մերութերի ծնի մասին

«—————» 194 թ.

Մերութ ամբացիած հ

<i>Մերութիւնի ինքնաշխատ</i>	<i>Ողջ ձևելել են</i>	<i>Բայց այդ այդ ձևի էներգիա մեջ էներգիա</i>	<i>Կեզ դանիի ծնվածքի ըաւը (կայ.)</i>	<i>Զառուացման դնաչափական կանոնը</i>	<i>Մերութիւնի ինքնաշխատ առաջարկ</i>	<i>Մերութիւնի ինքնաշխատ բարձրացումը</i>
65	Ալճասա	6	4	—	11,5	Նորմա

(Ազգանութ, անուն, հայրանութ)

Գրիգորի

Յարսակ, վարչէ,
Կոլագի պատգամի,

Ֆերմայի վարիչը կամ բրիգադիրը: Տեղեկադրի մեջ դրանցվում է կատարված աշխատանքի ծավալը, ֆերմայում աշխատող յուրաքանչյուր կողմազնիկի աշխօթերի և բանվորական օրերի քանակը: Այդ գրանցումների համար հիմք են ծառայում ֆերմայում մատյաններում ու փաստաթղթերում կատարված դրանցումները: Կոլխոզնիկներին՝ աշխատանքների միքանի ցուցանիշների (կենդանի քաշի ավելացում, գողիների աճեցում և այլն) համար աշխօթեր գրանցելու նպատակով արվում է այնքան տեղ, որքան տարբեր աշխատանքներ են կատարված տվյալ շրջանում:

Ֆերմայի վարիչը կամ բրիգադիրը լրացրած տեղեկադիրը հանձնում է կոլխոզի վարչությանը:

Մասովաշների անի և բուռմից հանված խոզերի քաշի վերաբերյալ ակտը (տես ձև № 5) կազմում է ֆերմայի վարիչը (բրիգադիրը) մատղաշներին մի պատասխանատու անձից մեկ ուրիշին հանձնելիս, մատղաշին ավելի մեծ հասակային խումբը փոխադրելիս, անասուններին բուռմից հանելիս և տարվա վերջին մատղաշներին վերադնահատելիս (հասուն խոզերին բուռմից հանելիս այդ սյունակները չեն լրացվում):

Զեակերպելուց հետո ակտը հանձնվում է վարչությանը, ստուգվում է հաշվապահի կողմից և հաստավում է կոլխոզի նախագահի կողմից:

Ֆերմաներում ճիշտ հաշվառում կատարելու համար յուրաքանչյուր կենդանու պետք է տալ համար և անուն:

ԽՈԶԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒՄԸ

Խոզերի համարակալումը պարտադիր է բոլոր խոզաբուծական ֆերմաների համար:

Խոզերի կանոնավոր և ժամանակին համարակալման պատասխանատվությունն ընկնում է ֆերմայի վարիչի վրա: Համարակալումը կատարում է ինքը


վարիշը կամ. նրա հանձնարարությամբ՝ կովսովեւ տեխ-
նիկ-անասնապահը կամ բրիգադիրը:

Ծնի ժամանակ քիմիական մատիտով յուրաքան-
չյուր նոր գոջու վրա զրում են հերթական համարը:
Ծնելուց հետո 3-րդ կամ 4-րդ օրը գոջու ձախ ականջին
դնում են երկու մշտական համար՝ մեկը ականջի ան-
կյունում-սերնդի հերթական համարը, երկրորդը ական-
ջի մեջտեղը՝ բնի համարը:

Բնի համարը ընդհանուր է ամբողջ սերնդի գոջի-
ների համար. նա ցույց է տալիս Փերմայում ստացված
ծիների հերթական համարը:

Թե հերթական և թե բնային համար դնում են
միայն նորմալ, միանդամայն առողջ գոջիներին:

1—2 ամսական հասակում յուրաքանչյուր գոջու աջ
ականջին նշվում է բուծարանային համարը: Արու խո-
գերին նշում են կենտ համար, էգերին՝ զույգ: Բուծա-
րանային համարը հերթական է՝ տարվա սկզբից կամ
մի չափ տարիներ:



Նկ. 4. Մի խումբ բավող խոզը

Գոյություն ունի համարակալման 2 եղանակ.

1) կտածում, 2) կտրում-հանում:

Գոջիների համարակալումը կտածման միջոցով:
Այս դեպքում ականջին համար են դնում հատուկ կտածող աքցանի միջոցով:

Համարակալման ժամանակ վերցնում են աքցանը և նրա վրա անցկացնում անհրաժեշտ թիվը: Նախքան համարակալելը փորձում են կարտոնի վրա, ստուգելու համար, թիվը ճիշտ է անցկացրած թե ոչ: Համարակալման համար անհրաժեշտ է պատրաստել ներկ հոլանդական մրից, որը պետք է բաց անել դենատուրատ սպիրտով մինչև սերի թանձրությունը: Եթե հոլանդական մուր չկա, կարելի է մուր պատրաստել հետևյալ ձևով: Խծուծը թթվում են նաև թողի և վառում կամ թե օդտագործում են լամպ կամ լապտեր՝ Փիտիլնի իջեցրած. կրակի վրա տեղավորում են պարկի ձևով ոլորած մի կտոր թիթեղերկաթ, որի վրա և հավաքվում է մուրը:

Սպիրտով բաց արած մուրը վրձինով քսում են աքցանի վրա անցկացրած թվերին և դոջու ականջի արտաքին այն մասին, որտեղ պետք է համար դրվի: Դրանից հետո աքցանը դնում են ականջին և ամուր սեղմում: Այս դեպքում թվերի սուր ծայրերը պետք է ծակեն — անցնեն ականջի մյուս կողմը. դրանում կարելի է համոզվել ականջից լավող կրծկրճոցից՝ աքցանը սեղմելու ժամանակ: Դրանից հետո աքցանը հանում են և մըի լուծույթը ձեռքով խնամքով շփում են ծակված տեղում: Համարակալելուց հետո ականջը Յ օր չեն լվանում:

ԳՈԶԻՆԵՐԻՆ ԱԿԱՆՋԻ ԿՏՐՎԱԾՔՆԵՐՈՎ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼԸ

Այս ձեի համարակալումը կատարվում է հատուկ աքցանի միջոցով: Այդ աքցանի օգնությամբ կարելի է դնել հերթական համարներ մինչև մեկ ու կես հազար՝ Ականջի կտրվածքների միջոցով յուրաքանչյուր խոզի

214

Սույն առաջին պատճենը կազմված է սպառագիտ և արդի աշխատավորության համար:

194 p.)

կարելի է դնել միայն մեկ՝ բուծարանային (ինվենտար բային) համար։ Որպեսզի ականջի կտրված—հանված տեղում վերք չառաջանա, անհրաժեշտ է կտրել—հանեց առաջ ականջը խնամքով լվալ տաք ջրով, ախտահանել լիզով և տոկոսանի լուծույթով և լավ չորացնել մաքուր սրբիչով։

Յուրաքանչյուր կտրվածքն ունի իր հատուկ նշանակությունը. մեկ կտրվածքը ձախ ականջի վերին եղերքին նշանակում է 10, իսկ ականջի ներքին եղերքին՝ 30, ականջի ծայրին՝ անկյունում՝ 200, ականջի մեջ տեղի կլոր ծակը՝ 800։

Աջ ականջի վերին եղերքին՝ մի կտրվածքը նշանակում է 1, ականջի ներքին եղերքին՝ 3, ականջի ծայրի կտրվածքը՝ նրա անկյունում՝ 100, ականջի մեջտեղի կլոր ծակը՝ 400։

Այդ պայմանական նշանների միջոցով հեշտությամբ կարելի է այս կամ այն համարը դնել խողի ականջին։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒՄԸ

Խոզաբուծական ֆերմաների աշխատանքի փորձը ցույց է տալիս, որ ֆերմայի տնտեսական հաջողությունները ուղղակի կախված են աշխատանքի կազմակերպման եղանակից։ Այն տնտեսություններում, որտեղ աշխատանքը լավ է կազմակերպված, լիովին վերացված է գիմազրկությունը, այստեղ կան լավ ցուցանիշներ մատղաշների պահպանման ու աճեցման և խողերի բուման բնագավառում։

Աշխատանքը ճիշտ կազմակերպել նշանակում է ամրացնել մշտական խողաբուծական բրիդադը, լրիվ վերացնել գիմազրկությունը կենդանիների խնամքի գործում և աշխատանքի վարձատրումը կատարել գործարքի հիման վրա, այսինքն նկատի ունենալով ստացվող արտադրանքի քանակը ու որակը։

ՄՇՏԱԿԱՆ ԽՈԶԱՔՈՒԾԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԱՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԽԸԸ

Ֆերմաներում աշխատանքի ճիշտ կազմակերպման
հիմքը կազմում է մշտական խողաբուծական բրիգադանք
որը գյուղատնտեսական արտելի կանոնադրության հա-
մաձայն կազմվում է ոչ պակաս քան երեք տարով։ Խո-
չոր նշանակություն ունի աշխատողների ընտրությու-
նը։ Բրիգադայի կազմի մեջ պետք է մտցնել փորձված,
իրենց դործը սիրող և նրան նվիրված մարդկանց։

Կոլխոզի վարչությունը յուրաքանչյուր խողաբու-
ծական բրիգադայի պետք է ամրացնի որոշ քանակով
անասուններ, սպասարկման համար անհրաժեշտ ինվեն-
տար, քաշող ուժ, անասնաշենքեր՝ խողանոց, կերախո-
հանոց, ամբարներ և այլն։

Խողաբուծական բրիգադայի մեծությունը կախ-
ված է ֆերմայում եղած խողերի քանակից։ Որպես կա-
նոն, վորքը ֆերմաներում կազմակերպվում է մեկ բրի-
գադա, որն սպասարկում է բոլոր խողերին։ Խոչոր ֆեր-
մաներում կազմակերպվում է մի քանի բրիգադա այն
հաշվով, որ յուրաքանչյուր բրիգադա սպասարկի
21—24 մերուն՝ իրենց սեբնոյի հետ։

Բրիգադայի բոլոր աշխատանքները ղեկավարում է
բրիգադիրը, որը նշանակվում է կոլխոզի վարչության
կողմից ոչ պակաս, քան երկու տարով։ Այն ֆերմանե-
րում, որտեղ խողերին սպասարկում է մեկ բրիգադա,
բրիգադիրը միաժամանակ հանդիսանում է ֆերմայի
վարչի։

Մշտական խողաբուծական բրիգադայում աշխա-
տողների քանակը սահմանում է կոլխոզի վարչությու-
նը, ենելով բրիգադային ամրացված խողերի դիմաքա-
նակի լրիվ և կանոնավոր սպասարկումից և կոլխոզում
ընդունված բեռնավորման նորմաներից։

Միջին հաշվով յուրաքանչյուր խողաբուծական
բրիգադայում, որն սպասարկում է 21—24 մերուն, պետք
է աշխատեն 3 խողապահ, որոնցից մեկը՝ ավագը կա-

տարում է բրիգադիրի պարտականությունները։ 5—8
մերուն ունեցող ֆերմաներում սպասարկման համար
նշանակվում է մեկ խողապահ, 12—14 մերուն ունեցող
ֆերմաներում՝ 2 խողապահ, որոնցից մեկը միաժամա-
նակ հանդիսանում է բրիգադիր և ֆերմայի վարիչ։

Նոր կազմակերպված ֆերմաները երբեմն ունե-
նում են միայն մատղաշներ, այդ պատճառով և խողա-
պահները լրիվ բեռնվածություն չեն ունենում։ Այդ
դեպքում կոլխոզի վարչությունը ժամանակավորապես
պետք է սահմանի ֆերմայում աշխատելու համար նշա-
նակված աշխատողի բեռնվածության նորման և աշխա-
տանքի վարձատրությունը։

Ամառը խողերին արածացնելու համար խողապա-
հին որպես օդնական, կոլխոզի վարչության հայեցողու-
թյամբ պետք է նշանակվեն խողարածներ։ Այդ հնա-
րավորություն կտա ապահովել խողերի կանոնավոր ա-
րածացումը և թույլ չի տա դիմագրկություն նրանց
սպասարկման դործում՝ ամառվա շրջանում։

Խողարածին նուխ և առաջ հանձնվում են նորոգման
(ոեմոնտի) խողերը, աղասի և 1—1 ամսական հղի մե-
րուները։

Բացի այդ, բրիգադայի կազմի մեջ պետք է մտցնել
մի կոլխոզնիկ՝ օժանդակ, նախապատրաստական աշ-
խատանքներ (ջուր կրել, կեր, վառելիք մատակարա-
րել, աղբը դուրս թափել, ջուր եռացնել) կատարե-
լու համար։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԸ ՖԵՐՄԱՅՈՒՄ

Խողերի խնամքի վերաբերյալ բոլոր աշխատանք-
ները ժամանակին կատարելու համար յուրաքանչյուր
խողարուծական ֆերմայում պետք է սահմանվի աշխա-
տանքների խիստ կարգ։ Որպես օրինակ բերում ենք մի
առաջավոր խողարուծական ֆերմայում ընդունված
աշխատանքների կարգը։

Մսուրային շրջան

- Առավոտյան ժամը 5-ից մինչև 6—խողերի զննումը և ընդունումը գիշերային պահանձնից: Կերերի նախապատրաստումը առավոտյան կերպման համար:
- Ժ. 6-ից մինչև Ժ. 6³⁰—բոլոր խողերի կերակըրումը:
- Ժ. 6³⁰-ից մինչև Ժ. 7—կերերի նախապատրաստումը ցերեկվա կերակըրման համար:
- Ժ. 7-ից մինչև Ժ. 8—կացոցների մաքրումը+մաքրելու ժամանակ հասուն խողերին գուրս ենքում զբոսանքի:
- Ժ. 8-ից մինչև Ժ. 10—ընդմիջում:
- Ժ. 10-ից մինչև Ժ. 10³⁰—գոջիների լրացուցիչ կերպում:
- Ժ. 10³⁰-ից մինչև Ժ. 12—աշխատանք խոհանոցում (կարտոֆիլ լվալը, կաթսայի մեջ լցնելը և այլն):
- Ժ. 12-ից մինչև Ժ. 13³⁰—բոլոր խողերի կերակըրում. կերակըրումից հետո կերերի նախապատրաստումը երեկոյան կերակըրման համար:
- Ժ. 13³⁰-ից մինչև Ժ. 17—ընդմիջում. այս ընդմիջման ժամանակ արտադրող վարագները 1—1½ ժամով դուրս են հանվում զբոսանքի:
- Ժ. 17-ից մինչև Ժ. 18—խողանոցում վառարանները վառել կերերը խառնել երեկոյան համար:
- Ժ. 18-ից մինչև Ժ. 19—խողերի կերակըրում:
- Ժ. 19-ից մինչև Ժ. 20—կացոցների մաքրումը և կերերի պատրաստումը առավայան: Կերակըրման համար:
- Երեկոյան Ժ. 8-ից հետո ֆերմայում մնում է պահակը, որը

բացի անասուններին պահպաննելուց, եփում է կարտոֆիլը և չուզ
է տաքացնում՝ խողերի առավոտյան կերակրման համար
Նույն վնամայում արոտային շրջանում սահմանված է աշ-
խատանքների հետեւյալ կարգը:

Արոտային շրջանում

Առավոտյան ժամը 5-ից մինչև ժ. 6—ըոլոր խողերի կերակր-
ում:

- » ժ. 6-ից մինչև ժ. 10—խողերի արածացում:
» ժ. 6-ից մինչև ժ. 7³⁰—կացոցների և կերատաշ-
տերի մաքրում:
» ժ. 7³⁰-ից մինչև ժ. 10—ընդուիջում:
» ժ. 10-ից մինչև ժ. 11—խողերին արոտից հետ-
քշել և գոջիներին լրացու-
ցիչ կերակրել
ժ. 11-ից մինչև ժ. 12—կերերի նախապատրաս-
տումը ցերեկվա կերակր-
ման համար,
ժ. 12-ից մինչև ժ. 13³⁰—ըոլոր խողերի կերակր-
ում և կերատաշտերի մաք-
րում:
ժ. 13³⁰-ից մինչև ժ. 16—ընդուիջում:
ժ. 16-ից մինչև ժ. 19—խողերի արածացում, ա-
ռոտ քշելուց առաջ դոջի-
ների լրացուցիչ կերա-
կրում:
ժ. 19-ից մինչև ժ. 20—կերերի նախապատրաս-
տումը երեկոյան կերակր-
ման համար:
ժ. 20-ից մինչև ժ. 21³⁰—խողերի կերակրում. կե-
րակրելուց հետո կերատաշ-
տերի և կացոցների մաք-
րում:

Ժամը 21³⁰-ին աշխատանքները վերջանում են և գերմա է-
գալիս գիշերվա պահակը:

Խողաբուծական Փերմաներում աշխատանքի ճիշտ կաղմակերպումը սերտ կերպով կապված է անհատական դործավարձի հետ:

Յուրաքանչյուր խողապահին պետք է ամբացված լինեն որոշ քանակի մերուններ իրենց սերնդի հետ: ՍՍԲՄ Հողժողկոմատի հրահանդի համաձայն, խորհուրդ է արվում յուրաքանչյուր խողապահին կյել 7—8 մերուն իրենց գոջիների հետ: Խողապահին ամբացված յուրաքանչյուր մերունից ստացված գոջիները կերպում ու խնամում է ինքը՝ խողապահը մինչև նրանց ծախելը կամ հիմնական արտադրական նախրի մեջ փոխադրելը, այսինքն մոտավորապես մինչև 9—10 ամսական հասակը: Այսպիսով խողապահը անձնական պատասխանատվություն է կրում մատղաշների աճեցման համար՝ նրանց ծնվելու մոմենտից մինչև ռեալիզացիան կամ հիմնական նախրի մեջ փոխադրելը:

Այն Փերմաներում, որտեղ բավող խողերի քանակը հասրավորություն է տալիս լրիվ կերպով ծանրաբեռնել առանձին աշխատողի աշխատանքային օրը: մատղաշների բառումը 3—4 ամսական հասակից կատարում է հատկապես նշանակված աշխատողը:

Այստեղ, որտեղ խողապահը իրեն ամբացված մերուններից ստացված գոջիներին սպասարկում է միայն մինչև 3—4 ամսական հասակը, նրա բեռնավորման նորման պետք է բարձրացվի մինչև 10—12 մերունի:

Ավագ խողապահ — բրիգադիրին նույնպես ամբացվում են որոշ թվով մերուններ՝ իրենց գոջիների հետ: Բրիգադին ամբացված արտադրող վարազներին սպասարկում է բրիգադիրը: Բրիգադիրը մայրական կազմի անմիջական սպասարկումից ազատվում է միայն այն գեղջում, եթե նա միաժամանակ հանդիսանում է նաև Փերմայի վարիչը:

Մի խողապահին ամբացված մերունները պետք է ըստ հնաբավորին տեղավորվին մի շարքի վրա գտնվող

կացոցներում։ Այդ կազակասեցնի մի կացոցից մյուսին
անցնելու համար գործադրվող ժամանակի ծախսը։

Խոզապահին ամբացվող մերունների՝ վերևում
հիշված նորման համարվում է օրինակելի։ Բեռնավոր-
ման նորմանները յուրաքանչյուր կովազում պետք է
մշակվեն՝ հաշվի առնելով խոզերի քանակը և դրու-
թյունը, խոզանոցների կահավորումը, նրանց մեքենա-
յացումը և այլն։ Բեռնավորման նորմանները և գործա-
վարձային գնահատումները անպայման պետք է քննվեն
և հաստատվեն կոլխոզնիկների ընդհանուր ժողովի կող-
մից։

Խոզաբուծական Փերմայում աշխատող կովազնիկ-
ների աշխատանքի վարձատրությունը պետք է ուղղակի
կապել նրանց աշխատանքի արդյունքների հետ, այս-
ինքն ստացված արտադրանքի որակի ու քանակի հետ։

Խոզաբուծական Փերմաների հիմնական խնդիրն է
մատղաշների աճնցումը և խոզերի բտումը, ուստի
խոզապահներին աշխօրեր գրանցելիս պետք է նկատի
ունենալ աճեցրած մատղաշների և բոված խոզերի քա-
նակն ու որակը։ Որքան շուտ և լավ որակի մատղաշ-
ներ են աճեցված և որքան լավ են բոված խոզերը,
այնքան ավելի շատ աշխօրեր պետք է գրանցել խոզա-
պահին։

Գոջիների աճեցման համար աշխօրերի գրանցումը
պետք է կատարել համաձայն նրանց կենդանի քաշի՝
ծծից կտրելիս։ Յուրաքանչյուր ծծից կտրած առողջ
գոջու համար 12 կգ. քաշի դեպքում խորհուրդ է տըր-
վում խոզապահին գրանցել 2,5 աշխօր, իսկ 12 կգ.-ից
ավելի քաշի դեպքում՝ 4,5 աշխօր, այսինքն 2 աշխօր
տվելի։ Այսովհասով Փերմայի աշխատողների մեջ ստեղծ-
վում է նյութական չահագրգովածություն՝ մատղաշ-
ներին ավելի լավ աճեցնելու գործում։

Մայրական կազմն ավելի լավ օգտագործելու և
մատղաշներին պահպանելու գործում չահագրգովա-
ծություն առաջացնելու համար ՍՍՌՄ Անասնապահու-
թյան Մինիստրությունը խորհուրդ է տալիս կատարել

Արացուցիչ աշխօրերի գրանցում սահմանված նորմաներից դուրս: Այսպես օրինակ, 12 դոջուց ավելի՝ (մինչին հաշվով յուրաքանչյուր սպասարկվող մերունից) ստանալու և պահպանելու գեազում խորհուրդ է տըրվում խողապահին գրանցել 1,5-ական աշխօր ամեն մի գոջու համար:

Բացի գոջիներին պահպանելու և աճեցնելու համար աշխօրեր գրանցելուց, աշխօրեր են գրանցում նաև խողերի կենդանի քաշի ավելացման համար: Կենդանի քաշի յուրաքանչյուր մեկ ցենտներ աճի համար ՍՍՌՄ Անասնապահության Մինիստրությունը խորհուրդ է տալիս գրանցել խողապահին 10-ական աշխօր:

Բավող խողերի որակի բարձրացման գործում մեծ շահագրգուփածություն առաջացնելու համար առաջավոր Փերմաներում սահմանված է լրացուցիչ աշխօրերի գրանցում:

Տոհմական Փերմաներում սահմանվում է լրացուցիչ գրանցում՝ 5 աշխօր յուրաքանչյուր ծախված էլեկտ կամ 1 կարգի 4 ամսակտնեց ոչ ցածր երիտասարդ գոճու համար:

Բրիգադիրի աշխատանքի վարձատրությունը պետք է նույնպես ուղղակի կախված լինի նրա աշխատանքի որակից: Նրան ամրացված մերուների և սրանց գոջիների սպասարկման համար բրիգադիրին գրանցվում են աշխօրեր նոր գնահատումներով, որոնք սահմանված են խողապահների համար: Վարագների սպասարկման համար բրիգադիրին գրանցվում է 1,5—2 աշխօր՝ վարագով ծածկված (բեղնավորված) յուրաքանչյուր մերունի համար: Բացի այդ, աշխատանքների ղեկավարման համար բրիգադիրին լրացուցիչ գրանցվում է աշխօրեր նրա վաստակած աշխօրերի 20—30% չափով:

Խողաբուժության զարգացման պետական պլանի գերակատարման նպատակով ՍՍՌՄ ֆողկոմսովետի և Համ. կ(բ)Պ կենտկոմի 1939 թ. հուլիսի 8-ի որոշման մեջ («Կոլխոզներում հանրային անասնապահության

զարգացման միջոցառումների մասին») խորհուրդ է տրվում այն կոլխոզներում, որոնք կատարել են մսի հանձնման տարեկան պլանը և անասնապահության զարգացման պետական պլանը, կոլխոզնիների ընդհանուր ժողովի որոշմամբ լրացուցիչ աշխօր գրանցել կոլխոզների նախագահներին, զոտեխնիկներին և անասնաբուժակներին — կոլխոզի անդամներին՝ տարվա վերջում կոլխոզում պլանից դուրս առկա յուրաքանչյուր մեկ մերունի համար Յ աշխօր:

Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ համաձայն դյուլատնտեսական արտելի կանոնադրության 15-րդ կետի, եթե խողարուծական բրիդագան իր լավաշխատանքի հետևանքով ապահովում է անասունների բարձր գիրությունը, մատղաչների լրիվ պահպանումը, այդ գեղքօւմ արտելի վարչությունը տարվա վերջում այդ բրիդագանը բոլոր անդամներին եկամուտ է գրանցում նրանց վաստակած աշխօրերի մինչեւ 10% չափով, բրիդագանը աչքի ընկնող հարվածայիններին՝ մինչեւ 15% չափով, իսկ բրիդագանը՝ Փերմայի վարչչին՝ մինչեւ 20% չափով:

Եթե խողարուծական բրիդագան վատ աշխատանքի հետևանքով ավելի ցածր ցուցանիշներ է ստացել անսպունների բավածության և մատղաչների պահպանման դործում, ապա արտելի վարչությունն այդ բրիդագանը բոլոր անդամների եկամուտը պակասեցնում է նրանց վաստակած աշխօրերի մինչեւ 10% չափով:

1945 թ. հունիսի 3-ին հրապարակվեց ՍՍՌՄ Ժողովականի և Համ. Կ(Բ)Պ կենտկոմի որոշումը Հայկական ՍՍՌ կոլխոզներում մատղաշի աճեցման և Հասակավոր անասունների պահպանման առաջադրանքների դերակատարման համար, կոլխոզիների աշխատանքում լրացուցիչ վարձատրելու մասին:

Համաձայն այդ որոշման, խողարուծական ֆերմաների աշխատողների համար սահմանված է լրացուցիչ վարձատրման հետևյալ չափը.

ա) Խողարուծական ֆերմաներում աշխատող կոլխոզնիներին՝ ամրացված բոլոր մերունների մեկ ծնից

Հիշին հաշվով մինչև 2 ամսական 6 գոջուց ավելի ստանալու և աճեցնելու համար տալ վերոհիշյալ քանակից ավելի աճեցրած երկու ամսական հասակի յուրաքանչյուր հինգերորդ գոջին:

բ) Խողարուծական ֆերմաներում աշխատող կոլխոպնիկներին, որոնք սպասարկում են հասակավոր խողերին և երկու ամսականից բարձր գոջիներին, մեկ տարվա ընթացքում իրենց ամբացված խողերի առնվազըն 95 տոկոսը պահպանելու դեպքում տալ 2 ամսական մեկ գոջի:

գ) Խողարուծական բրիգադաների կոլխոպնիկներին՝ խողերի գիրացման և նրանց միջին կենդանի քաշի պլանը գերակատարելու համար տալ 15 կգ. միս (կենդանի քաշով հաշված), գիրացված խողերի ամբողջ քանակից պլանից ավելի ստացված յուրաքանչյուր 100 կգ. քաշաճի համար:

դ) Խողարուծական ֆերմայի վարիչին՝ ֆերմայում գլխաքանակի առնվազն 95 տոկոսը պահպանելու և ամբացված բոլոր մերունների միջին հաշվով մեկ ծնից առնվազն 6 գոջի աճեցնելու դեպքում, տալ խողարուծական ֆերմաների աշխատողներին, որպես լրացուցիչ վարձատրություն տրվող խողերի մեկ չորրորդ մասը:

ե) Առաջին կիսամյակում ստացված ծնից ավելի քան 6 գոջի աճեցնելու համար լրացուցիչ վարձատրություն տալ առաջին կիսամյակում ծնված գոջիները մերուններից անջատելուց հետո, առաջին կիսամյակի մոխ պարտադիր հանձնուումները կատարելու դեպքում, իսկ երկրորդ կիսամյակի ծնից ստացված և աճեցված գոջիների համար լրացուցիչ վարձատրություն վճարել տարեկերջին:

դ) Բրիգադիրին կամ ֆերմայի վարիչին՝ խողերի գիրացման պլանն ամբողջ ֆերմայում գերակատարելու համար տալ 4-ական կգ. միս (կենդանի քաշով հաշված), գիրացված խողերի ամբողջ քանակից պրանից ավելի ստացված յուրաքանչյուր 100 կգ. քաշաճի համար: Աշխատանքի ճիշտ կազմակերպման և վարձատրը-

ման հետ միաժամանակ անհրաժեշտ է ֆերմաներում լայն կերպով ծավալել սոցիալիստական մըրդությունը առանձին աշխատողների և բրիգադների միջև՝ պարտիայի և կառավարության՝ հանրային անասնապահության զարգացման վերաբերյալ ցուցմունքները լավագույն կերպով կատարելու համար։ Ֆերմայի աշխատողների որակը բարձրացնելու համար պետք է կազմակերպել զոռակենիկական խմբակներ, ֆերմայի աշխատողների կվալիֆիկացիայի բարձրացման կուրսեր և այլն։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Խողապահների աշխատանքի վարձատրումը ճիշտ կազմակերպելու համար անհրաժեշտ է օրինակելիորեն տանել արտադրական հաշվառումը ֆերմայում։ Նախնական հաշվառման տվյալների հիման վրա խողապահներին աշխօրեր են գրանցվում զողիների աճեցման, խռովերի բաման և մերունների զուղավորման համար, այլ են որոշվում է նրանց տրվելիք խողաբուծական մթերքների չափը՝ որպես աշխատանքի լրացուցիչ վարձատրություն։

Խողերի կենդանի քաշի աճման համար աշխօրեր գրանցվում են համաձայն նրանց փաստական քաշին՝ պետությանը մոխ հանձնման հաշվին խողեր հանձնելիս, ֆերմայից գողիներ և խողեր ծախելիս, մատղաշներին արտադրական նախրի մեջ փոխադրելիս և կոլխոզի կարիքների համար խողեր մորթելիս։

Այն ֆերմաներում, որտեղ կազմակերպված է խոզերի ամսե-ամիս կշռումը, աշխօրերի գրանցվումը կատարվում է կերպով է կենդանի քաշի փաստական աճի համապատասխան։ Գողիների աճեցման և պահպանման համար աշխօրերը գրանցվում են նրանց մորից անջատելուց հետո։

Ֆերմայում աշխատանքի հաշվառումը կատարում է բրիգադիրը։

ՖԵՐՄԱՅԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կոլխոզային խողաբուծության կազմակերպման համար խոչըն նշանակություն ունի ֆերմայի տեղի ընդուրությունը և խողանոցների կառուցումն ու կահավորումը:

Ֆերմայի համար հատկացված հողամասը պետք է լինի անասնաբուժական—սանիտարական տեսակեաից միանգամայն առողջ և բնակելի ու տնտեսական շենքերից, ինչպես նաև բանուկ ճանապարհներից, առնվազն 200—300 մետր հեռու:

Հողամասի տարածության չափը կախված է ֆերմայի խողերի քանակից և դրա հետազա աճից:

Խողանոցի կառուցման տեղն ընտրելիս առանձնապես պետք է ուշադրություն դարձնել նրա դիրքին՝ լույսի նկատմամբ: Որպեսզի խողանոցը ամբողջ օրվա ընթացքում համաշափ լուսավորվի և տեղական իշխող քամիները չի ջեցնեն խողանոցի տաքությունը, այն պետք է հողամասում դասավորել երկարությամբ հյուսից դեպի հարավ:

Խողանոցին անմիջապես մոտիկ պետք է կառուցվի շենք՝ կերերի պատրաստման համար (կիսախոհանոց): Նրան մոտիկ տեղավորում են խտացրած և կոպիտ կերերի, արմատապտղների պահպանման համար կառուցվելիք շենքերը, այլ և սիլոսային կառուցվածքները:

Գոմաղբահորը պետք է կառուցվի խողանոցից 100 մետր հեռու՝ հողմահար կողմի վրա:

Խողերի զբոսանքի համար անհրաժեշտ է խողանոցին մոտիկ պատրաստել զբոսաթակեր:

Հիվանդ և հիվանդությամբ կասկածելի խողերին պահելու համար պետք է խողանոցից 200 մետր և բնակելի շենքերից 300 մետր հեռավորությամբ կառուցել մեկուսարան (իգույսատոր) և խիտ ցանկապատել բոլոր կողմերից:

Լավ խողանոցը պետք է լինի մաքուր, չոր, լուսավոր և տաք: Այն պետք է լավ օդափոխվի և հարմար:

Մինի խոզապահների աշխատանքի համար: Դրա համար խոզանոցի կառուցման ժամանակ պետք է կատարել հետևյալ հիմնական պահանջները: Խոզանոցի արտաքին և ներքին պատերը պետք է կառուցել տեղական շինանյութերից՝ փայտից, գարմանից, աղյուսից, քարից և այլն: Պատերի կառուցման համար ամենալավ շինանյութը տախտակն է: Խոզանոցի առաստաղի բարձրությունը պետք է լինի ոչ պակաս 2,2 մետրից և ոչ ավելի 2,6 մետրից:

Առանձին ուշադրություն պետք է դարձնել խոզանոցի հատակի կառուցմանը: Հատակը ճիշտ չպատրաստելու դեպքում կացոցները լինում են խոնավ ու կեղտոտ, որի հետևանքով առաջանում են զանազան հիվանդություններ և մատղաշների մեծ կորուստ:

Հատակը պետք է լինի տաք և ջրի ու մեղի համար անթափանցելի: Ամենալավը տախտակյա հատակն է, որը գցված է կավից կամ ցեմենտից պատրաստված գետնի վրա:

Կացոցների միջապատերը բոլոր խոզերի համար պետք է կառուցել ցանցակերպ (ճաղերով) ձողերից, ուղղաձիգ դասավորված, մեկը մյուսից 5–6 սմ. հեռու: Խուլ միջապատերը խանդարում են մաքուր օդի հոսանքին և մթնեցնում են կացոցները:

Կացոցների չափերը պետք է լինեն՝ 2,5 մետն խորության և 2,1 մետր լայնության, այսինքն 5,25 քառ. մետր:

Մեծ նշանակություն ունի խոզանոցի լուսավորությունը: Որպեսզի խոզանոցը լավ լուսավոր լինի, պետք է լուսամուտների մակարդակը կազմի հատակի մակարդակի¹՝ ից մինչեւ¹₁₃-րդ մասը: Լույսը լավ է ազդում խոզերի վրա, բացի այդ նաև ոչնչացնում է զանազան հիվանդություններ առաջացնող բակտերիաներին:

Կենդանիներին սառն և միջանցիկ քամիներից պաշտպանելու համար, խոզանոցի դրսի դռների մոտ շինում են տամբուրներ:


Հայվ կլինի խողերի համար պատրաստել առանձին
ձաշաբան: Փորձը ցույց է տվել, որ խողերին առանձին
ձաշաբանում կերակրելու դեպքում հնարավոր է խո-
զանոցում պահպանել մաքրություն և չորություն: Բացի այդ, հեշտանում է խոզապահերի աշխատանքը:

Կոլխոզներում նոր խոզանոցներ պետք է կառուցեն
միայն «Գյուղշինպրոեկտի» տիպարային պրոեկտով,
նկատի ունենալով ոչ միայն ֆերմայի առկա խողերի
քանակը, այլ և նրանց հետագա ավելացումը:

Մոտավորապես պետք է հաջփել, որ մեկ մերունին
իր գոջիների հետ միասին անհրաժեշտ է ոչ պակաս
քան 2—2¹/₂ կացոց:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Վարակիչ հիվանդությունների առաջանալը և տա-
րածվելը կանխելու համար կիրառվող միջոցառումնե-
րի սիստեմը կոչվում է պրոֆիլակտիկա:



Նկ. 5. Խողանոցի ներքին տեսքը:

Պրոֆիլակտիկայի հիմնական միջոցներից մեկը

վարակիչ հիմանդրությունների հարուցիչների ոչնչացումն է: Այդ նպատակով օգտագործում են զանազան քիմիական նյութեր, որոնց ջրային լուծույթները աղդում են միկրոբների վրա որպես թույն:

Քիմիական նյութերի՝ վնասակար միկրոբներին ոչնչացնելու այդ հատկությունը կոչվում է ախտահանում կամ դեգինֆեկցիա:

ԱՄԵՆԻՑ ԱՎԵԼԻ ՇԱՏ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻԶՈՑՆԵՐԸ

1. Զիանգած կիր: Օգտագործվում է 10—20 տոկոսանի լուծույթի ձևով, որը կոչվում է կրակաթ:

Կրակաթ պատրաստելու համար վերցնում են 1 կգ. չանդած կիր և հանդցնում են 1 լիտր ջրի մեջ: Ապա հանդած կիրը բաց են անում 4 լիտր ջրի մեջ և ստանում են 20 տոկոսանի կրակաթ, իսկ 8 լիտր ջուր ավելացնելու դեպքում՝ 10 տոկոսանի կրակաթ: Կրակաթը պատրաստում են թարմ հանդցրած կրից և օգտագործում են 6 ժամ վա ընթացքում, որովհետեւ դրանից ավելի երկար պահելիս այն կորցնում է իր ախտահանող հատկությունը:

Կիրը պետք է հանդցնել զգուշությամբ, որպեսզի նրա տաք կտորները երեսին կամ ձեռներին չընկնեն:

2. Մոխրաջուր: Պատրաստում են այսպես. 10 լիտր ջրին վերցնում են 2 կգ. փայտամոխիր, խառնութեղեկում են 2 ժամ, միաժամանակ խառնելով, ապա քամում են մաղի կամ կտորի միջոցով: Գործածելուց առաջ մոխիրի լուծույթը 2—4 անգամ նոսրացնում են եռացրած ջրով: Մոխրաջուրը թույլ ախտահանող հատկություններ ունի, այդ պատճառով այն գործադրում են միայն հատակը, պատերը և կերատաշտերը լվանալու համար:

3. Քլորակիր: Ունի ուժեղ ախտահանիչ հատկություններ: Գործադրվում է ա) 10—20 տոկոսանի լուծույթի ձևով՝ խողանոցների ախտահանման համար,

բ) չոր վիճակում՝ մեղք, գոմաղբահյութը, խոնավ հո-
ղը և այլն ախտահանելու համար։ Լուծույթը պատ-
րաստում են հակագաղ և ձեռնոցներ հաղած։

4. Լիզոլ։ Կարմրագորշ գույնի յուղանման թա-
փանցիկ հեղուկ է, գործադրվում է՝ ա) 3—5 տոկոսա-
նի լուծույթի ձևով՝ շենքերի ախտահանման համար,
բ) 1—2 տոկոսանի լուծույթի ձևով՝ խողերի մաշկը և
նրանց խնամող պերսոնալի ձեռքերը ախտահանելու
համար։

5. Կրեոլին։ Մուգ գորշ գույնի, բնորոշ հոտով,
յուղանման հեղուկ է, որը ջրի հետ խառնելիս ստաց-
վում է կաթնագույն լուծույթ։ Գործադրվում է՝ ա)
4—5 տոկոսանոց լուծույթի ձևով՝ շենքերի ախտահան-
ման համար, բ) 1—2 տոկոսանի լուծույթի ձևով՝ կեն-
դանիների մաշկը, մարդկանց ձեռքերը ախտահանելու
համար։

6. Ֆորմալին։ Գործադրվում է՝ ա) 2 տոկոսանի
լուծույթի ձևով՝ կենդանիների մաշկին ախտահանման
համար, բ) 1 տոկոսանի լուծույթի ձևով՝ ձեռների
ախտահանման համար։

7. Բյուրեղանման կարբոլաքրու։ Գործածվում
է 2—3 տոկոսանի լուծույթի ձևով՝ ձեռների ախտա-
հանման համար։

8. Յոդի ալկոհոլային լուծույթ։ Գործադրվում
է գոջիների պորտալարի կտրված տեղին, ամեն տե-
սակ քերծվածքներին, վերքերին քսելու համար։

ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ ՄԻՋՈՑԱԴՈՒՄՆԵՐ ԽՈԶԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Բազմամյա փորձերը ցույց են տվել, որ ալելի
հեշտ է հիվանդությունները կանխել, քան նրանց բու-
ժել։ Այդ տեսակետից խողերին դանագան հիվանդու-
թյուններից պաշտպանելու համար անհրաժեշտ է առա-
ջին հերթին գործադրել ախտահանիչ (պրոֆիլակտիկ)
միջոցառումներ։

Զմեռը խողերը պետք է պահպեն լուսավոր, տաք, չոր և լավ օդափոխվող մաքուր խոզանոցում։ Խոզանոցում մաքրություն պահպանելու համար անհրաժեշտ է օրական երեք անգամ՝ առավոտը, կեսօրին և երեկոյան գոմաղբը մաքրել և դուրս թափել։ Խոզերի տակ միշտ պետք է փոել մաքուր և չոր ցամքար:

Խոնավության դեմ պայքարելու համար անհրաժեշտ է գիշերը խոզանոցի միջանցքներում շաղ տալ հանգած կեր, իսկ ցերեկը՝ չոր վայսաթեփ։

Այն շենքում, որտեղ պահպանում են ծծմայր մերուններ իրենց գոշիների հետ և ծծից կտրած գոշիները, ջերմությունը պետք է լինի 10—12 աստիճան, իսկ մնացած խմբերի խոզերի շենքերում՝ 8—10 աստիճան։ Հասուն բուվող խոզերի շենքում ջերմությունը կարող է լինել մինչև 3—5 աստիճան։

Պետք է նաև ուշադրությամբ հետևել խոզերի մարմնի մաքրությանը։ Նրանց պետք է ամեն օր մաքրել խոզանակով։

Անհրաժեշտ է խոզերին ամեն օր, բացի շատ ցուրտ և վատ եղանակներից, հանել զբոսանքի։ Ամառը խոզերը պետք է օգտվեն արոտից և պահպեն ճամբարներում։

Հենց որ նկատվի որևէ վարակիչ հիվանդության նշան, հիվանդ խոզերին պետք է առանձնացնել ընդհանուր նախրից և պահել մեկուսարանում։ Մեկուսարանում պետք է պահել նաև այն խոզերին, որոնք սերտ շփման մեջ են եղել հիվանդ խոզերի հետ։ Հիվանդ խոզերին առանձնացնելուց հետո պետք է խոզանոցը խընամքով մաքրել և ախտահանել։ Սովորաբար այլպիսի գեղքերում գոմաղբը և ցամքարը այրում են, իսկ խոզերի կացոցներն ու ինվենտարը լվանում են տաք սողաջրով և ոպիտակացնում նոր հանգցրած կրի 20 տոկոսանի լուծույթով։

Երբեմն վարակիչ հիվանդությունների տարածման պատճառը հանդիսանում են վարակիչ հիվանդությամբ սատկած կենդանիների դիակները, երբ նրանք չեն

թաղվում, այլ մնում են փոս տեղերում, ձորերում։ Անհրաժեշտ է կենդանիների զիակներն անպայման թաղել անասնագերեզմանոցում, ոչ պակաս 2 մետր խորությամբ, կամ այրել։

ԽՈԶԱՆՈՑՆԵՐԸ ԶՄԵՌՎԱ ՊԱՀՎԱԾՔԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Խոզանոցները խոզերի ձմեռվա պահվածքի համար կանոնավոր և ժամանակինախապատրաստելը ամենակարենը պրոֆիլակտիկ միջոցառումներից մեկն է։ Այդ նախապատրաստումը պետք է սկսել գարնանից, երբ խոզերին փոխադրում են արոտային պահվածքի։ Ամառվա ընթացքում խոզանոցը խնամքով մաքրում են, աղը դուրս թափում և ապա լավ ախտահանում։ Առանձնապես խնամքով պետք է ախտահանել այն խոզանոցները, որտեղ ձմեռը խոզերը հիվանդացել են որևէ վարակիչ հիվանդությամբ։ Այդ խոզանոցներում պետք է հատակի տախտակները հանել, փոխել նրանց տակի կամփի և հողի այն շերտը, որը ներծծված է միզահյութով։

Սխտեմատիկ կերպով, ամսական մեկ անգամ խոզանոցները պետք է ախտահանել։ Ախտահանման միջոցով ոչնչացվում են վարակիչ հիվանդություններ առաջացնող միկրոբները։ Ախտահանումը կարելի է կատարել մոխրաջրով, չհանդած կրով, քլորակրով և այլն։ Գետք է ախտահանել ամբողջ խոզանոցը՝ պատերը, հատակը, առաստաղը, միջապատերը, կերատաշտերը։ Վարակը խոզանոց չթափանցելու համար մուտքի առաջ դնում են մեկ արկղ՝ մեջը ախտահանիչ նյութով թրջված բարձիկ։ Խոզանոց մտնողներն իրենց կոչիկները պետք է քսեն այդ բարձիկին, որպեսզի վարակը ներս չտանեն։ Այդ նույն նպատակով արգելվում է կողմնակի մարդկանց առանց Փերմայի վարիչի թույլավության խոզանոց թողնելը։

Տարին մեկ անգամ պետք է ախտահանել նաև խո-
զանոցի ըրջակայքը:

ԽՈԶԵՐԻ ԶՆՍՈՒՄԸ

Հիվանդ խողերին ժամանակին հայտաբերելու
նպատակով անհրաժեշտ է ամեն օր զննման ենթարկել
ֆերմայի բոլոր խողերին:

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԽՈԶԱԲՈՒԽԱԿԱՆ ՖԵՐՄԱՆ
ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Խոզաբուծական ֆերման վարակիչ հիվանդու-
թյուններից գերծ պահելու համար ուրիշ տեղում ձեռք
բերված խողերը չեն կարելի խսկույն թողնել ֆերմայի
ընդհանուր նախիրի մեջ, այլ պետք է նախապես պահել
ֆերմայից և բանուկ ճանապարհներից ոչ պակաս, քան
0,5 կիլոմետր հեռու շենքում: Այդպիսի հեռու շենքում
(կարանտինային կետ) խողերին սպասարկում են հա-
տուկ առանձնացված աշխատողներ, որոնք խոզաբու-
ծական ֆերմայի մնացած աշխատողների հետ չպետք
է շփման մեջ լինեն:

Կերերը, ցամքարը, ջուրը կարանտինային կետ են
փոխադրում հատուկ, առանձնացված ձիերի և սայլերի
միջոցով:

Խողերի խնամքի հետ կապված բոլոր իրերը (դույ-
լեր, կերատաշտեր, ավելներ, բահեր, կշեռք և այլն)
կարանտինային կետում նույնպես պետք է առանձին լի-
նեն:

Նոր ձեռք բերված խողերին կարանտինային կե-
տում պահում են 30 օր, եթե վարակիչ հիվանդություն
չկա:

Կարանտինային կետը մանելու իրավունք ունեն
նրան սպասարկող անձնավորությունները, անասնա-
բուժակուն աշխատակիցները և կոլիխոզի նախագահը:
Կարանտինային կետն այցելող անձնավորությունները

գողնոց են հաղնում և ախտահանում են իրենց կոշիկները։ Դրա համար կարանտինային կետի մուտքի մոտ դրվում է ախտահանիչ նյութերով ներծծված փալասի կամ թաղիքի մի կտոր։

Արգելվում է կարանտինային կետին մոտիկ արածացնել կամ քշել բոլոր տեսակի կենդանիներին։

Խոզաբուծական ֆերման վարակիչ հիվանդություններից պաշտպանելու համար ֆերմայի բակում, մուտքի մոտ շինում են հատուկ «կյուվետներ»—փոսեր։ Կյուվետը շինվում է բետոնից, այն հաշվով, որ ավտոմեքենայի, սայլի անիվները նրա ախտահանիչ նյութի մեջ կարողանան երկու պտույտ անել։ Կյուվետի լայնությանը, խորությունը՝ 25—30 սմ։ Կյուվետը պետք է մեջտ լցված լինի կծու նատրիումի 2 տոկոսանի լուծույթով։ Ֆերման պետք է ցանկապատված լինի, որպեսզի չըջազա գյուղերից այդտեղ վարակ չըերվի։

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ ԽԱՄԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ամեն անգամ խոզանոցը մաքրելուց հետո անհրաժեշտ է ավելները, բահերը, եղանները և ուրիշ առարկաները սուզել կրեոլինի կամ ուրիշ ախտահանիչ նյութի 2 տոկոսանի լուծույթով։ Այդ նպատակով յուրաքանչյուր խոզանոցում պետք է ունենալ ախտահանիչ նյութով լցված մի տակառ, որը պետք է պահել առանձին, փակվող մառանում։

Վարակը կոշիկների հետ ներս բերելուց խուսափելու համար խոզանոցի մուտքի մոտ դնում են փայտեարկղներ (100 սմ. երկարությամբ, 60 սմ. լայնությամբ և 10—15 սմ. բարձրությամբ), մեջը ախտահանիչ նյութ լցրած (երկու տոկոսանի ֆորմալին կամ կրեոլին)։ Յուրաքանչյուր ոք խոզանոց մանելիս պարագալոր է ախտահանել իր կոշիկները՝ ներբաննը թրջելով ախտահանիչ նյութով։

Խողերին խնամող պերսոնալին պետք է ապահովել
արտահագուստով, որը պահպամ է պահարանում :

Պահարսնը բաղկացած է երկու բաժանմունքից՝
մեկի մեջ պահպամ է աշխատողներին պատկանող հա-
զուստն ու կոչթիները, մյուսում արտահագուստը
գողնոցը և կոչիկները։ Աշխատանքից հետո կոչիկները
լվանում և ախտահանում են, իսկ գողնոցները կեղաստ-
վելու դեպքում բլանում են։

Խողանոցում աշխատանքն սկսելուց առաջ և աշ-
խատանքը վերջացնելուց հետո խողապահերը պետք է
իրենց ձեռները լվան օճառով և ախտահանեն։ Այդ
անհրաժեշտ է անել նաև աշխատանքից ընթացքում՝ ա-
մեն անգամ կեղտերը մաքրելուց հետո։ Այդ նպատա-
կով յուրաքանչյուր խողանոցում պետք է ունենալ լվա-
ցարան, օճառ, սրբիչ, անհրաժեշտ ախտահանիչ լու-
ծույթ (2 տոկոսանի կրեոլին, լիզոլ, բյուրեղային
կարբոլաթթու և այլն)։

ԻՆՉՊԵՍ ՃԱՆԱՋԵԼ ՀԻՎԱՆԴԻ ԽՈԶԵՐԻՆ

Հիվանդ խողերին մեծ մասամբ կարելի է ճանաչել
նրանց կեր ուտելու ձեից։ Այն խողերը, որոնք մոտե-
նում են լավ կեր պարունակող կերատաշտերին, բայց
կերը քրքրելով, կամ քիչ են ուտում կամ բոլորովին չեն
ուտում, պետք է անմիջապես խնամքով զննվեն, պար-
զելու համար, թե արդյոք նրանց մաշկի վրա կարմիք
բծեր կամ հիվանդության ուրիշ նշաններ չկա՞ն։ Այդ
պիսի խողերի ջերմությունը պետք է անմիջապես չա-
փել։ Ջերմությունը չափում են հատուկ ջերմաչափի
միջոցով։ Գործածելուց առաջ ջերմաչափը ախտահա-
նելու նպատակով սրբում են կրեոլինի, լիզոլի 2 տոկո-
սանի լուծույթի։ կամ 50 տոկոսանի դենատուրատ ալ-
կոհոլի մեջ թրջված բամբակով։ Ջեռքի ուժեղ շարժու-
մով վերից վար թափ են տալիս ջերմաչափը, որպեսզի
անդիկի սյունիկը իջնի ջերմաչափի բարակ մասը։ Խողի
ջերմությունը չափելու համար ջերմաչափը մտցնում են

նրա հետանցքի մեջ և այդտեղ պահում 3—5 րոպե: Խոզերի մարմնի նորմալ ջերմաստիճանը 38—40⁰-ն է:

Այն խողերին, որոնք հիվանդացել են և ունեն 40⁰-ից բարձր ջերմություն ու կերերից հրաժարվում են, պետք է անմիջապես խողանոցից տեղափոխել ուրիշ շենք: Այն վանդակը, որտեղ մնում էր հիվանդ խողը, ախտահանվում է:

ՈՐՏԵՂ ՊԱՀԵԼ ՎԱՐՍԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ՀԻՎԱՆԴԱՑԱԾ ԽՈԶԵՐԻՆ

Վարակիչ հիվանդության նշաններ ունեցող խողերին տեղավորում են առանձին խողանոցում— մեկուսարանում, որը չինվում է խողաբուծական ֆերմայի ցանկապատից դուրս, ոչ պակաս, քան 200 մետր նրանից հեռու: Մեկուսարանի հետ մի կտուրի տակ կառուցում են առանձին շենք դեղաբեկի համար, սենյակ՝ աշխատող պերսոնալի համար, բաժանմունք՝ կերերի նախապատրաստման համար, բաժանմունք՝ սատկած կենդանիների դիահատման համար և այլն:

Հիվանդ խողերին սպասարկում են հատկապես նրանակված աշխատողներ, որոնց տալիս են գողնոց և կոշիկ, մեկուսարանում աշխատելու համար: Աշխատանքը վերջանալուց հետո գողնոցն ու կոշիկները թողնում են մեկուսարանում՝ պահարանի մեջ:

Հիվանդ խողերին կերակրում են հեշտ մարսվող կերերով (մանր աղացած վարսակ, գարի և ուրիշ հատիկային կերեր, քաշած կաթ, անարտ կաթ, մսածուր, արմատապտուղներ, կանաչ առվույտ, երեքնուկ և այլն):

Մեկուսարանի համար հատկացվում է առանձին ինվենտար (կերատաշտեր, դույլեր, բահեր և այլն), որը չպետք է տանել ֆերմա: Մեկուսարանի աշխատողները կարող են ֆերմայի աշխատողների հետ չփակել միայն ֆերմայի ու մեկուսարանի տերիտորիայից դուրս, ինենց սեփական հագուստով և կոշիկներով:

Մեկուսարանի, դիահերձարանի, ղեղատնակի մուտքի մոտ պետք է դրված լինի ախտահանիչ լուծույթով թրջված փալատի բարձիկ:

Հիվանդ կենդանիների աղքը կուտակելու համար մեկուսարանի տերիտորիայում կառուցում են առանձին գոմազրահոր: Մեկուսարանի տերիտորիան պետք է ցանկապատել:

ԽՈԶԵՐԻ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌԸ ԳՏՆԵԼԸ

Վարակիչ հիվանդություններից սատկած խողերի դիակները կարող են ուրիշ խողերի վարակման աղբյուր ծառայել: Եթե խողը հանկարծակի է սատկում, անհրաժեշտ է Փերմա հրավիրել անասնաբուժին՝ անկման պատճառը պարզելու համար, կամ դիակն ուղարկել մոտակա անասնաբուժական-բակտերիոլոգիական լաբորատորիան: Վարակը չտարածելու համար պետք է դիակը փոխարժել լաբորատորիա՝ պահպանելով հետևյալ կանոնները. սատկած անասունի քթածակերը, բերանը և հետանցքը փակել ախտահանիչ նյութով (3—5 սոկոսանի կարբոլաթթու, կրեոլին և այլն) ներծծված բամբակով, ապա գլուխը փաթաթել, պինդ թղթով: Դրանից հետո դիակը տեղափորում են լավ փակվող արկղի մեջ և ուղարկում մոտակա անասնաբուժական-բակտերիոլոգիական լաբորատորիան:

ԴԻԱԿՆԵՐԸ ՀԱՎԱՔԵԼԸ

Սատկած խողերի դիակները թաղում են լավ կառուցված անասնաղերեզմանոցներում, ոչ պակաս, քան 2 մետր խորությամբ: Դիակները տեղափոխում են հատկապես պատրաստված արկղներով, որոնք ներսից պատած են ցինկապատ կամ ներկված թիթեղով, որպեսզի դիակի հեղուկ արտաթորությունները չծծվեն արկղի փայտյա մասի մեջ և ամեն անդամ դիակը փոխադրելուց հետո հեշտ լինի արկղը ախտահանել:

Դեմակը վերցնելուց հետո նրա ընկած տեղը այրում
են, ապա հողի վերին շերտը հանում են և դիմակի հետ
միասին տանում անսանազերեզմանոց։ Այն տեղը, ո-
րից վերցրել են հողի շերտը, երկրորդ անգամ այրում
են ծղուտ կամ ցախ վառելով կամ ախտահանում են քլո-
րակրով։

ԽՈԶԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խոզերի ժանտախտը

Խոզերի ժանտախտը շատ վարակիչ հիվանդություն
է բոլոր հասակի խոզերի համար։ Խոզերը ժանտախտով
կարող են հիվանդանալ տարիվա բոլոր եղանակներին։

Ոչ մի վարակիչ հիվանդություն այնքան վնաս չի
հասցնում տնտեսությանը, որքան ժանտախտ։

Ժանտախտի հարուցիչը շատ կայուն է։ Ուժեղ
սառնամանիքը չի թուլացնում ժանտախտի վարակման
ուժը։ Ժանտախտով հիվանդ խոզերին մորթելու դեպ-
քում նրանց միսը աղ դնելիս 3—6 ամիս իր մեջ պա-
հում է վարակը։

Ժանդախտի հարուցիչը արագ ոչնչանում է քլորա-
կրի 10—20 տոկոսանի լուծույթի և կծու նատրիումի 2
տոկոսանոց լուծույթի միջոցով։ Կրեոլինը, կարբույան
թթուն, սուլեման և այլ նյութեր թույլ են ազդում
նրա վրա։

Վարակված մսի կտորները $1\frac{1}{2}$ —2 ժամ լավ եփելու
դեպքում վարակագերծ են դառնում։ Ժանտախտով
վարակված խոզերի միսը պետք է եփել մեկուսարա-
նում կամ ուրիշ հատուկ շենքում։

Ժանտախտի հարուցիչը գտնվում է հիվանդ կենդա-
նու բոլոր ներքին օրգաններում և հյուսվածքներում։
Ժանտախտով հիվանդ խոզերի օրգանիզմից նա մեծ
քանակությամբ դուրս է գալիս քթի և աչքերի արտա-
սուքի, մեզի և ավելի քիչ թրիքի հետ։

Խոզերի վարակումը տեղի է ունենում հիվանդ խո-
զերն առողջների հետ միասին պահելիս։

Ասողերը ժանտախտով վարակվում են հիվանդ խոր զերի միջոցով, թրիքով և ուրիշ արտաթորություններով կեղտուտլած ջրի ու կերի միջոցով:

Վարակը ուրիշն կարող է վոխանցվել կեղտի փոշու միջոցով, երբ դրանք ընկնում են աչքի մեջ, այլ և մաշկի քերծվածքների, ճանկուավածքների և չնչառական ուղիների միջոցով:

Հիվանդության նշաններն խկույն չեն երեսում, այլ կենդանու օրգանիզմի մեջ ժանտախտի հարուցիչի թափանցելուց մի քանի օր հետո: Վարակման դեպքում այդ ժամանակակիցմիջոցը տևում է 4—20 օր:

Նայած խողերի օրգանիզմի դրությանը, այլև նըրանց կերակրման ու պահպաններին, հիվանդության ընթացքը տարբեր է լինում:

Հիվանդության առաջին նշաններն են՝ բարձր ջերմաստիճան մինչև 41° և ավելի, որոշ թուլություն: Հիվանդ կենդանիները համարյա ամբողջ ժամանակ պառկում են, թաղվելով ցամքարի մեջ, կեր տալու ժամանակ հաճույքով չեն վեր կենում, անախորժակ են ուստում կամ հաղիվ դիպչում են կերին: Շատ հաճախ նկատվում է արցունքահոսություն (լորձ թարախի հետ): Երբ հիվանդ կենդանուն ստիպում են ոտքի կանգնել, նկատվում է նրա հետույքի թուլություն, իսկ շարժվելիս՝ անկայուն քայլվածք, հետին ոտքերը իրար են դիմչում: Շուտով հիվանդի մարմնի՝ ականջի, մաշկի, մոռութի, կրծքի, փորի, ազդքերի ներքին ժակերեսների վրա առաջ են դալիս մուգ-կարմիր բծեր: Այդ բծերը մատներով սեղմելիս ոչ գունատվում են, ոչ էլ անհետանում (ի տարրերություն կարմիր քամուց): Նկատվում է նույնպես փսխում, փորկապություն, որը հետո փոխվում է փորլուծության, երբեմն արնախառն: Որոշ կենդանիների մոտ նկատվում են նյարդացին նոպաներ, զղաճություններ և հետույքի կաթված:

Ժանդարմատով հիվանդ հղի մերունները հաճախ վիշտում են: Եթե հիվանդության վերոհիշյալ նշանները աստիճանաբար չեն թուլանում, այդ դեպքում 6—7 օր

հետո, երբեմն էլ ավելի շուտ, անհրաժեշտ միջոցները ձեռք չառնելու դեպքում հիվանդությունը վերջանում է մահով:

Ժանտախտի սուր ձեփ դեպքում խողերի անկումը կարող է հասնել 80 տոկոսի: Առանձնապես մեծ է ծըծկեր գոյջիների անկումը:

Երբեմն ժանտախտ հիվանդությունն ընդունում է երկարատև (խրոնիկ) բնույթ, առավելապես մատղաշների մեջ. հիվանդները տառապում են փորլուծով, որը փոխվում է փորկապության, կերը վատ են ուտում: Այդպիսի դոջիների մեջը ծոված է լինում, դլուխը կախ ընկած, պոչը կախ տված և թրիքով կեղտոտված: Մաշկի վրա երեան են գալիս կարմիր բծեր, ապա և զարչնագույն թեփուկներ և կեղեներ (էկզեմա): Սովորաբար էկզեման երեան է գալիս փորի, ճակտախտի, մեջքի և ոտների վրա: Այդ տեղերում մաշկը հաստանում է, դառնում է մոխրագույն, կնճռոտ և ամբողջովին ծածկված կեղեներով: Այդպիսի խողերը հաճախ սատկում են:

Սուր ձեփ ժանտախտից սատկած խողերի դիակները շերձելիս կաբելի է հայտարերել կարմիր կետեր կոկորդում, թոքերում և երիկամների վրա: Դրանք շատ բնորոշ են համարվում ժանտախտի համար: Փայծաղի եղերներին երբեմն երեւում են միսեռի մեծության մուգիարմիր թմբիկներ: Կարմիր կետեր են նկատվում ստամոքսի, աղիքների և ստոծանու արտաքին թաղանթների վրա: Արյան կարմիր կետեր նկատվում են նաև մյուս ներքին օրգանների վրա:

Երբեմն ժանտախտին զուգակցում է ուղիւր որևէ հիվանդություն (պարատիֆ և այլն):

Ժանտախտի առաջն առնելու համար անհրաժեշտ է ձեռք առնել հետեւյալ միջոցները.

1. Խողեր զնել այն շրջաններից ու տնտեսություններից, որանդ խողերի ժանտախտ չկա:

2. Խողերին երկաթուղով փոխադրել խնամքով մաքրած և ախտահանգած վաղոններում և բեռնելուց

առաջ նրանց սրոկել հակաժանտախտային շիճուկով
(պասսիվ) :

3) Տնտեսությունը նոր բերված խողերին 30 օր պա-
հել առանձին՝ Փերմայի հիմնական նախիրից հեռու,
անպայման անասնաբուժի հակողության տակ :

4. Կեր, ցամքար, կենդանիներ, միս և այլն չգնել
այն տնտեսություններում ու շրջաններում, որտեղ
խողերը հիվանդ են ժանտախտով :

5. Խողաբուժական Փերմային մոտիկ դաշնավող
որևէ տնտեսության մեջ ժանտախտ երևալու դեպքում,
անմիջապես դեսի Փերման բերող բոլոր ճանապարհ-
ներին պահակներ կարգել և արզելի կողմնակի մարդ-
կանց ու փոխազդրական միջոցների մուտքը խողաբու-
ժական Փերմա : Դրա հետ միաժամանակ ուշադիր հըս-
կողություն սահմանել Փերմայի խողերի նկատմամբ:
Անհրաժեշտության դեպքում անասնաբուժական պեր-
սոնալը պետք է հակաժանտախտային սրտկում կատարի
բռնոր խողերին :

6. Աշխատանքի նոր ընդունվածներին չթողնել խո-
ղերին ինամելու՝ առանց նախապես նրանց հագուստն
ու կոշիկները ախտահանելու:

7. Ճաշարանի մնացորդները տնտեսություն փո-
խադրել այնպես, որ վարակը նյու ու այն կողմ չտա-
րածվի և կերցնելուց առաջ դրանք ինամքով եփել:

8. Ֆերմայի աշխատողների սեփական խողերը պա-
հել Փերմայի արոտից հեռու:

Վարակված վայրում ժանտախտի վերացման մի-
ոցառումները.

1. Խողերի մեջ ժանտախտ, հիվանդության նշան-
ներ երեվալու դեպքում, տնտեսության դեկտավարները
և խողատերերը պարտապոր են՝

ա) Հայտնել այդ մասին անասնաբուժին կամ բու-
ժակին;

բ) Մինչև հիվանդությունը որոշելը դադարեցնել
խողերի վաճառքը և տնտեսություն բերելն ու տանելը:

ինչպես նաև տնտեսությունից միս և ուրիշ մթերքներ, այլ և կաշվեղեն դուրս տանելը:

գ) Հիվանդ և բարձր ջերմաստիճան ունեցող խողերին տեղափորել մեկուսարանում կամ խողանոցից հեռու, առանձին շենքում, նրանց խնամքի համար նշանակելով առանձին պերսոնալ, ինվենտար և փոխադրական միջոցներ:

դ) Մաքրել և ախտահանել այն խողանոցը, որտեղ հայտնաբերված են ժանտախտի նշաններով հիվանդ խողեր և այդտեղից չտեղափոխել խողերին ուրիշ խողանոց, որտեղ գտնվում են առողջ խողեր և ընդհակառակը:

ե) Սատկած խողերի դիակները պահել առանձին շենքում մինչև անասնաբուժի գալը:

զ) Կատարել անասնաբուժական պերսոնալի՝ ժանտախտի վերաբերյալ առաջադրած պահանջները:

ԽՈԶԵՐԻ ԱՐՅՈՒՆԱԳՈՍ ՍԵՊՏԻՑԵՄԻԱԾ

Արյունահոս սեպտիցեմիան առաջանում է հատուկ միկրոբներից, որոնք կոչվում են երկրենո բացիլներ։ Այս բացիլները շատ լայն չափով տարածված են բնության մեջ և կարող են հիվանդություն առաջացնել ամեն տեսակ ընտանի անասունների մեջ։ Նրանք սովորաբար գտնվում են հողի մեջ, գանդաղահոս կամ կանգնած ջրերում, ինչպես նաև բոլորովին առողջ անասունների մարմնի մեջ՝ նրանց մարսողական և շրնչառական ուղիներում, և նորմայ պայմաններում ախտածին չեն, այսինքն հիվանդություն չեն առաջացնելում։ Որոշ, գեռես լավ չուտումնասիրված արտաքին պայմանների ազդեցության տակ այդ միկրոբները դառնում են վարակելու ընդունակ։ Մյուս կողմից օրգանիզմի դիմադրողականությունը թուլացնող պայմանները՝ պաղելը, հոգնածությունը, երկաթուղով տեղափոխելը, սակավարյունությունը, կերի փոփոխությունը, փչացած կերը, քաղցը, այլ հիվանդու-

թյունները նպաստում են այս բացիլների ուժեղացման և տվյալ անսատունին վարակելուն։ Մարսողական և շնչառական օրդանների կենդանական պարագիտները իրասու հետացնում են վարակի մուտքը օրդանիզմի մեջ։ Ուժեղացած այդ միկրոբները հետագայում արդեն ընդունակ են դասնում վարակելու բոլորովին առողջ անսատուններին։ Դրանով է բացատրվում այն, որ հիվանդությունը որոշ տեղերում առաջանում է ինքնարերարար՝ առանց ուրիշ վարակ մուտք գործելու։

Արյունահոս սեպտիցեմիայի միկրոբները համեմատաբար քիչ դիմացկուն են. արեվի ճառագայթները նըրանց շատ արագ ոչնչացնում են. 58^o ջերմությունը ոչնչացնում է նըրանց 20 րոպեում. նույնպես հեշտ ու արագ ոչնչացնում են ախտահանիչ նյութերը։

Արյունահոս սեպտիցեմիայով հիվանդանում են ավելի մեծահասակ խողերը, շատ հաճախ խողերի ուրիշ հիվանդությունների, մասնավորապես խողերի ժանահատի հետ համատեղ։

Սկզբնական շրջանում խոզարուծական տնտեսության մեջ արյունահոս սեպտիցեմիան կարող է առաջանալ ինքնուրույն կերպով՝ աննպաստ հողային պայմանների և ավելի հաճախ օրդանիզմը թուլացնող պայմանների ազդեցության տակ. սակայն հետազայռում հիվանդ խոզը կարող է վարակել նաև մյուս միանդամայն առողջ խողերին։ Հիվանդների արտաթորանքի, մասնավանդ հագի միջոցով արտադրված լորձը պարունակում է մեծ քանակությամբ ախտածին միկրոբներ։ Հիվանդությունը խողերից երբեմն կարող է անցնել նաև ուրիշ անսատուններին, օրինակ ոչխարներին, հավերին։

Նշանները։ Օրդանիզմի մեջ միկրոբների մուտք գործելուց 24—48 ժամ հետո հիվանդության նշանները սկսում են երեւան դալ։ Հիվանդության բռնկման սկզբնական շրջանում սովորաբար հիվանդությունը լինում է շատ սուր ձևով. ջերմաստիճանը լինում է 41^o

և ամիելի բարձր, լորձաթաղանթները կապտում են, խոզերը թուլանում են, կերից հրաժարվում են, թաղվում նու ցամքարի մեջ, խոկ արոտավայրում պառկում են նախերէց հեռու։ Ականջի տակ, վճի վրա և կողքերում կարմիր լայն բծեր են առաջանում, որոնք սեղմելով մասամբ տնհետանում են. բկի հատվածն ուռչում է և չնչառությունը դժվարանում։ Խոզերն ընդունում են նստած շան զիրք։ Ապա չնչառությունն ուղեկցվում է խոխոցով և խոզերը կարող են խեղամահ լինել։ Բկի ուռուցքը լինում է պինդ, տաք և կաշին՝ թունդ կարմիր ու արագությամբ տարածվում է։ Հիվանդը 12—24 ժամվա ընթացքում կարող է սատկել։

Հետագայում խոզերը սովորաբար հիվանդանում են սուր ձեռից սլլեվրայի և թոքերի սուր բորբոքման նշաններով. նկատվում է բարձր ջերմություն, հաղ, չնչառության դժվարություն, կրծքի վանդակը լինում է խիստ ցավու. քթից բործ է հոսում. ապա հացիր գառնում է ավելի, հաճախակի և ուժեղ. չնչառությունն ավելի է դժվարանում. հիվանդը խիստ նիհարում է, հազիվ կարողանում է ոտքի կանգնել. երբեմն աչքերը թարախակարում են. վերջում առաջանում է լուծ, երբեմն արյունախառն։

Հիվանդության այս ձեւը տեսում է սովորաբար մի քանի օր։ Շատ քչերն են լավանում. հիվանդությունը մեծ մասամբ ստանում է խրոնիկ բնույթ. հիվանդության սուր արտահայտություններն աստիճանաբար թուլանում են, սակայն թոքերի հիվանդության նշանները երկար են մնում։ Խոզը ժամանակ առ ժամանակ հազում է, չնչառությունը դժվարանում է, կերը ախորժակով չի ուտում, երբեմն հողերն էլ են ուռչում, վերջում առաջանում է փորլուծ և 3—6 շաբաթ հետո կենդանին բոլորավին հյուծված վիճակում սատկում է։

Յուժումը և պրոֆիլակտիկան։ Հիվանդ խոզերին բուժելու համար հատուկ վեղորայք չկան։ Միայն հիվանդության հենց ոկզրում կարելի է սրսկել հատուկ

շիջուկ արյունահոս սեպտիցիմիայի դեմ, և կարիք
եղած գեղքում կրկնել սրսկումը:

Հիվանդության տարածման առաջն առնելու հա-
մար պետք է անմիջապես մեկուսացնել հիվանդ խոզե-
րին, խոզանոցներն ու կերամանները խնամքով ախտա-
հանել, սատկած խոզերի վարակված օրգանները, հի-
վանդների արտաթորանքը և աղբը ոչնչացնել, խոզերի
կերակրման, խնամքի և պահպանման պայմանները լա-
վացնել: Առողջ խոզերի վարակման առաջն առնելու
համար պետք է նրանց սրսկել հատուկ շիճուկ՝ արյու-
նահոս սեպտիցեմիայի դեմ:

ԽՈԶԵՐԻ ՊԱՐԱՏԻՑԸ

Խոզերի պարատիֆը վարակիչ հիվանդություն է:
Պարատիֆով հիվանդանում են գոյջիները մինչև 4 ամ-
սական հասակը: Հասուն խոզերը պարատիֆով չեն
հիվանդանում: Թեև պարատիֆ հիվանդությունը պա-
տահում է կլոր տարին, սակայն մասսայական հիվան-
դության գեղքեր լինում են մեծ մասամբ գարնանն ու
աշնանը և երեխն գոյջիների շատ խոշոր կորուստներ է
առաջացնում:

Պարատիֆ հիվանդությունը տնտեսություններում
հաճախ առաջանում է առանց վարակը դրսից ներմուծ-
վելու, որովհետեւ պարատիֆի հարուցիչը գտնվում է
առողջ խոզերի ու գոյջիների աղիքներում, առանց նը-
րանց որևէ վնաս տալու: Միայն այն գեղքում, երբ մի
շարք աննպաստ պայմանների հետեանքով (շենքի նեղ
վածք, կեղտոտություն, խոնավություն, վատ լուսա-
վորություն, վատ կեր, վիտամինների և հանքային
նյութերի պակասություն, շարժումների պակասություն
և այլն) գոյջիների օրգանիզմը թուլանում է, պարատի-
ֆի միկրոբները գլուխ են բարձրացնում և հիվանդու-
թյուն առաջացնում: Պարատիֆի հարուցիչի հիվան-
դածին հատկությունն այդ գեղքում այնքան ուժեղ է
լինում, որ նա հետագայում արգեն վտանգավոր

դաւնում ոչ միայն թուլացած, այլև բոլորովին առղջ, նորմալ գարզացող գոջիների համար:

Առաջ գոջիները վարակվում են վարակված կերով, խմելու ջրով, այլ և երր հիվանդ գոջիներին պահում են առողջների հետ միասին:

Պարատիֆի միկրոբի կայունությունը բավական մեծ է. նա պահպանվում է՝ 1) խմելու ջրի մեջ և հողի վերին շերտում և ամիս, 2) գոջիների հողի մեջ թաղված գիակների մեջ՝ 160 օր, 3) գոմաղբում՝ 36 օր:

Պարատիֆի միկրոբն արագ ոչնչանում է արեկի ձառագայթներից, եփելուց. ախտահանիչ նյութերով՝ կարբուաթթվի և կրեոլինի մեկ տոկոսանի լուծույթներով՝ ոչնչանում է 1 րոպեում, երկաթի արջասպի 2,5 տոկոսանի լուծույթով՝ 3 րոպեում, Փորմալինի 0,1 տոկոսանի լուծույթով՝ $1\frac{1}{2}$ ժամում, կրակաթի 1 տոկոսանի լուծույթով՝ 10 րոպեում, պղնձի արջասպի 1 տոկոսանի լուծույթով՝ 3 րոպեում:

Պարատիֆի ծածուկ շրջանը տեսում է 3 օրից մինչև մեկ ամիս:

Պարատիֆն ընթանում է 2 ձևով՝ սուր և խրոնիկ: Սուր ձևի դեպքում (որ հազվադեպ է լինում) ջերմությունը բարձրանում է մինչև 41—41,5 աստիճան: Կենդանին իրեն ընկճված է զգում, կերից հրաժարվում է, երբեմն արնախառն լուծ է ունենում: Հիվանդության վերջում ականջների, վզի վրա, կրծքի ներքին մասում, փորի վրա և շեքերում կարմիր — մանուշակագույն գունավորում է առաջանում:

Հիվանդ կենդանին սատկում է 1—3 օրից հետո:

Խրոնիկ ձևի դեպքում (որ ավելի հաճախ է լինում) հիվանդությունը տեսում է 2-ից մինչև մի քանի շաբաթ: Հիվանդության դիմավոր նշանը փորլուծն է, որը երբեմն դադարում է և առա նորից երևան դալիս:

Հիվանդ գոջիները դանդաղ են աճում, աստիճանաբար նիհարում են և 100-ից 70-ը սատկում են՝ երբ բոլորովին հյուծվում են:

Երբեմն պարատիֆ հիվանդությունը ճանաչելը գժվար է լինում, որովհետեւ այդ հիվանդությանը համախ ուղեկցում է խոզերի ժանախտը։ Սատկած զոջիների դիստիները հետազոտության համար ուղարկվում են լաբորատորիա կամ անանաբուժ է հրավիրվում։

Խոզերի պարատիֆ հիվանդությունը կանխելու համար անհրաժեշտ է ձեռք առնել հետեւյալ միջոցառումները։

1. Փորբուծ և բարձր ջերմություն ունեցող բոլոր գոջիներին անմիջապես պետք է առանձնացնել և պահել մեկուսաբանում, նրանց խնամքը հանձնարարել առանձին աշխատողի, նիհար-թույսկաղմ, անհուսալի հիվանդ գոջիներին խոտանել։

2. Յծից կորած կամ ծծկեր առողջ գոջիներին մերունի հետ միասին խնամքով լվալ օճառով և աղայիրելինի կամ լիզոլի տոկոսանի լուծույթով, որեղ հետո նրանց անդախտել մաքուր, ընդարձակ և նախագետ ախտահանված կացոցներում՝ նույն խոզանոցում։

Տարիքա ցււրտ ժամանակ կարելի է գոջիներին լվոլ միայն այն պայմանով, որ լվանալուց հետո նրանք սրունդեն տաք խոզանոցներում և նրանց տակ առոտ ցամքար վույփ։

3. Այն կացոցները կամ ամբողջ խոզանոցը խոզերի ինսամքի բոլոր առարկաների հետ միասին, որտեղ հայտնաբերված են զարատիֆով հիվանդներ, պետք է խնամքով մաքրել ու ախտահանել կրակաթով։

Պարատիֆի տեսակետից անբարեհույս խոզանոցից գոմաղբը պետք է գուրս տանել և թափել կենդանիների համար անմատչելի մի տեղ, կույտերով դարսել, ինչպես խոզերի ժանախտի դեպքում, և միայն ինքնառաքացումից հետո փոխազրել դաշտ և լցնել հողի տուկ։

5. Անամքի բոլոր առարկաները՝ կերպառաշտերը, դույլերը, բահերը, ավելները, եղանակները և այլն, յուրաքանչյուր անդամ կերտերելուց և մաքրելուց հետո

լվան և ախտահանել. այդ նպատակով խոզանոցի յուրաքանչյուր բաժանմունքում պետք է դնել մի փոքր տակառ՝ կրեոլինի 2 տոկոսանի լուծույթով:

6. Ամառը բոլոր առողջ գոջիներին տանել մաքուր տեղում կառուցված ճամբարները:

7. Անհբաժեշտ է բոլոր մատղաշներին կերակրել բաղմագան, սննդաբար և վիտամիններով հարուստ կերերով (ամառը՝ կանաչ, ձմեռը՝ առվույտ, գազար և այլն), այլ և հանքային կերերով՝ աղ, ոսկորի ալյուր, կավիճ, ածուխ և այլն:

Խոզանոցը ախտահանելուց հետո աշխատողների արտահագուստը և կոշիկները լվալ և ախտահանել:

ԳՐՁԻՆԵՐԻ ՊԱՐԱՏԻԹԻ ԴԵՄ ՊԱՅԻՆՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Երբ պարզվում է, որ տնտեսության մեջ գոջիների պարատիֆ կա, նրանց խնամքով զննում են և չափում նրանց ջերմաստիճանը:

Արտաքին նշանների և ջերմաստիճանի հիման վրա գոջիները բաժանում են խմբերի և նայած հիվանդության աստիճանին ու բնույթին, նրանց սրտկում են պարեր քանակով շիճուկ՝ պարատիֆի դեմ: Այդ աշխատանքը կատարում է անասնաբուժական պերսոնալ:

ԳՐՁԻՆԵՐԻ ՇՆՉԱՐԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ

(Էնզոոտիկ բրոնխոպնեվմոնիա)

Այս հիվանդությունն առաջանում է այն գեղքում, երբ գոջիներին պահում են խոնավ, մութ և վատ օղափոխվող, սառն հատակ ունեցող խոզանոցներում, երբ նրանց վատ են կերակրում ու խնամում, երբ գոջիները չարժման մեջ քիչ են լինում կամ բոլորովին չեն լինում:

Այդ հիվանդությանն առանձնապես տրամադիր են

ծծից կտրած գոջիները, այս և ծծկեր գոջիները, որոնք
հաճախ ամբողջ սերնդով սատկում են: Այդ հիվանդու-
թյունը նկատվում է նաև ավելի հասակավոր մատղաշ-
ների մոտ: Հիվանդության առաջին նշաններն են՝
փոշտոց և թեթև հազ, երբեմն դրան նախորդում է
փորլուծը և գոջիները կերն ախորժակով չեն ուտում:
Դրանից հետո հազն ուժեղանում է, գոջիները թուլա-
նում են, չնչառությունն արագանում է ու տաքությու-
նը բարձրանում մինչև 40,5 աստիճան և ավելի: Մար-
սողության խանգարման հետևանքով ախորժակն այ-
լասերվում է. հիվանդները գոմաղբաջուր են խմում
և ծղուտ ուտում: Հիվանդ գոջիների մոտ հաճախ նը-
կատվում են բծեր ականջի, գլխի և պոչի մաշկի վրա,
մանր բշտիկների ձեռվ: Հետագայում այդ բշտիկները
տրաքում են և նրանց միջից դուրս է հոսում կողչող
հեղուկ, որը ծածկում է մաշկը, մազերն իրար կպցնում,
չորանալուց հետո դառնում է մուգ կեղև (թեփանման
էկզեմա): Հիվանդությունը մեծ մասամբ 3-6 շաբաթից
հետո վերջանում է մահով:

Որոշ գոջիներ լավանում են, սակայն նրանց հազը
երկար ժամանակ մնում է և նրանք այնպիսի աճ չեն
տալիս, ինչպես առողջ գոջիները:

Այս հիվանդության դեմ պայքարելու հիմնական
միջոցառումներն են՝

1. Վարազներն ու մերունները պետք է լինեն տ-
ռողջ և ամուր, նրանք լավ պետք է նախապատրաստ-
ված լինեն զուղավորման և ծնի համար, որպեսզի
նրանցից կենառնակ և ամուր գոջիներ ստացվեն:

2. Ծծմայլ մերունները և ծծից կտրած գոջիները
պետք է տեղավորվեն ընդարձակ, լուսավոր, տաք հա-
տակ և առատ ցամքար ունեցող ու լավ օդափոխվող
խողանոցներում:

3. Բոլոր նորածին մատղաշներին 5 օրական հասա-
կից անհրաժեշտ է ապահովել հանքային կերերով (ա-
ծուխ, կալիճ, ոսկրալյուր) և բոված հատիկով, իսկ
ավելի բարձր հասակի ծծկեր գոջիներին և ծծից կը տ-

ըածներին, բացի այդ, նաև վիտամինային կերերով (առվյուտ, արմատապուղներ և այլն) :

4. Անհուսալի հիվանդ գոջիներին պետք է մորթել, իսկ մնացած հիվանդներին առանձնացնել, նրանց համար ստեղծելով կերակրման ու խնամքի լավ պայմաններ :

ԽՈԶԵՐԻ ԴԻԶԵՆՏԵՐԻԱԼ.

Խոզերի գիղենտերիան վարակիչ հիվանդություն է, որի ժամանակ լինում է փորբուծ, երեմն արյունախառն : Դիզենտերիայով հիվանդանում են ամեն հասակի խոզերը, իսկ առանձնապես տրամադիր են դիզենտերիային մինչև 6—7 ամսական մատղաշները :

Խոզերը դիզենտերիայով կարող են հիվանդանալ տարվա բուրք եղանակներին, ընդ որում ամառը, մանավանդ խոզերին ճամբարներում պահելիս և ճիշտ կերակրելիս դիզենտերիան դգալիորեն նվազում է և երբեմն բուրուվին անհետանում : Երբեմն այդ հիվանդությամբ վարակվում են ամեն հասակի խոզերը :

Դիզենտերիայի բռնկմանը նպաստում են պահվածքի, կերակրման ու խնամքի պայմանները, այն է՝ խոզանոցի նեղվածքությունը, կեղտոտությունը, խոնավությունը, խոզերին կուշտ կերակրելը, վատ մարսը՝ վոլ և անորսակ կերեր կերցնելը, հանքային և վիտամինային կերերի պակասությունը, ոչ բավարար տեղությամբ դրոսանքները կամ զրոսանքի բուրուվին բացակայությունը; որոնց հետևանքով դոջիների բարձրանկումներ են լինում :

Խոզերը դիզենտերիայով վարակվում են թրիքով կեղտոտված կերերի և ջրի միջոցով : Կարող են վարակվել նաև առողջները հիվանդների հետ միասին պահելիս կամ երբ առողջ կենդանիներին ողահում են այն շենքերում, որտեղ եղել են դիզենտերիայով հիվանդ խոզեր, որովհետև այդ հիվանդության վարակը կարող է պահպանվել բավական երկար ժամանակ :

Մի անդամ գիզենտերիայով հիվանդացած գոջիները նորից կարող են հիվանդանալ տարբեր ժամկետներում:

Դիզենտերիա հիվանդությունը անտեսություն մեջ կարող է մուտք գործել ուղիւշ տնտեսությունից բերված խողերի մեջոցով:

Խողերի գիզենտերիայի գեպքում վարակվելուց մինչեւ հիվանդանալը տևում է 4-ից մինչեւ 20 օր, իսկ որոշ գեպքերում՝ ավելի երկար:

Հիվանդության նշանները: Հիվանդության սկզբանը ջերմությունը բարձրանում է մինչեւ 41° և ավելի, մի քանիսը, առանձնապես ծծկեր գոյցիները, վսիսում են: Դրա հետ միաժամանակ, կամ գրանից անմիջապես հետո սկսվում է փորլուծ: Հետագայում ջերմությունը մնում է նորմալից սահմաններում, երբեմն բարձրանալով մինչեւ 40,2-40,7 աստիճան: Նայած հիվանդության տելողությանն ու բնթացքին, լորձախառն արտաթորանքը լինում է տարբեր գույնի—մոխրագույն, սև, կրանքավուն, սուրճի գույնի, գեղին և այլն: Երբեմն արտաթօրանքի մեջ արյուն է նկատվում:

Հիվանդ կենդանիները կորցնում են նորմալ ճաշակը և սկսում են ուտել կեղտոտ ծղոտացամքարը, կղղղանք, գոմալբահյութ: Երբեմն գոյցիների աչքի թարթիչներն իրավունք են կալչում, կաշվի վրա (այնի հաճախ ձմեռը և գաբնանը) Աարմիր բծեր են երևան գալիս, իսկ հետո դարչնադույն թեփուկներ ու կեղանքներ (էկղեմա):

Հիվանդության սուր ձևի գեպքում կենդանու ջերմությունը զգալիորեն բարձրանում է (մինչեւ 41 աստիճան և ավելի), նա կերից բոլորովին հրաժարվում է; սուքի կանգնել չի կարողանում: Եթե այդպիսի հիվանդ կինդամանիներին չեն բուժում, նրանք 1-2 օրից հետո ստուկում են:

Դիզենտերիան կարող է բնթանայ միաժամանակ ժանտախոտի ու պարատիֆի հետ, այդ պատճառով չափազանց գժվար է ուղուել գլխավոր հիվանդությունը:

Այլպիսի գեղքերում պետք է հրավիրել անասնաբուժին, որովհետև ժամանակին և ճիշտ կերպով հիվանդության պատճառը պարզելուց է կախված նրա դեմքինող պայքարի հաջողությունը:

Դիզենտիրիան կանխելու համար անհրաժեշտ է խովերի կերպերումը և խնամքը լավացնել, չենքում և բակում մաքրություն պահպանել ու ախտահանում կատարել: Ծծկեր գոջիների զրոսանքի համար հատկացնել առանձին մաքրութեղ, ուր չթողնելով հասուն խովերին ու մատղաշներին: Խոզերի կացոցներում պատրաստում են տաք տեղ՝ պառկելու համար, որպեսզի նրանց փորբ տաք մնա:

Դիզենտիրիայով հիվանդ խոզերին բուժում են «օսարսոր» պրեպարատով, անասնաբուժի զեկավարությամբ:

ԽՈԶԵՐԻ ՃԻՃԱՅՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍԼԱՐԲԻԴՈՎ

Ասկարբիզովը ճիճվային հիվանդություն է, որն առաջացնում են ասկարիդ կոչվող ճիճուները:

Ասկարիդ ճիճուներով վարակվում են առավելապես 3—9 ամսական մատղաշները, իսկ հասուն խոզերը՝ հազվագեց:

Խոզերի մոտ ասկարիզները գտնվում են բարակ աղիքներում, որտեղ էդ ասկարիզները ձու են դնում: Օրվա ընթացքում յուրաքանչյուր էդ ասկարիդ կարող է դնել 200 հազար ձու, որոնք թրեքի հետ գուբա են զալիս, ընկնում են հողի, ջրի մեջ և այլն: Ասկարիզի ձվերը վարակիչ են դառնում 15—25 օր հետո:

Խոզերը ասկարիզով վարակվում են, երբ ուտում են ասկարիդի հասուն ձիերով վարակված կերեր: Կերերի հետ մեկտեղ կուլ տված հասուն ձիերից բարակ աղիքներում դուբա են զալիս թրթուններ, որոնք թրթանցում են աղիքի պատերի մեջ և անցնում արյան մեջ, ապա թոքերը, իսկ այլտեղից չնչափողի ու կուրդի միջոցով անցնում են բերանը:

Բերանից կերի կամ թքի հետ թրթուրները նորից կուլ են գնում և ընկնում են բարակ աղիքները, որտեղ նրանք մեծանում են և նորից սկսում են ձու դնել:

Խոզերի աղիքներում ասկարիդներն արտադրում են թունավոր նյութեր (տոկսիններ), որոնք առաջացնում են կենդանու խրոնիկ թունավորում: Դրա հետևանքով խանդարվում է կենդանու մարսողությունը, նրա ուժերը թուլանում են, նիշարում է, առաջանում է արյան պակասություն ու երբեմն էլ մահ:

Եթե ասկարիդների թրթուրները մեծ թվով թափանցում են թոքերը, կարող է առաջանալ թոքերի բորբոքում, իսկ եթե նրանք լեղատար անոթի միջով անցնում են լյարդի մեջ, առաջանում է լյարդի բորբոքում:

Կենդանու առողջ ժամանակ այդ հիվանդությունը կարելի է ճանաչել թրիքի մեջ միկրոսկոպով ձվեր հայտաբերելու դեպքում:

Ասկարիդով կանխելու հիմնական միջոցառումները: Անհրաժեշտ է ամեն օր և խնամքով գոմաղբը հավաքել և կույտ կազմել՝ ինքնատաքացման համար: Հետեւ, որ ջուրը, կերերը, կերատաշտերը չկեղտույն խոզերի թրիքով: անտեսությունը նոր բերկած խոզերին կարանտինում գտնված ժամանակ հետազոտել ասկարիդների նկատմամբ, իսկ եթե այդ հնարավոր չէ, բուժել սանտոնինով: Ամսական 1—2 անդամ խոզանցի հատակը լվալ եռացրած ջրով: Արոտավայրում խոզերի վարակումը կանխելու համար ամեն 10—30 օրը փոփոխել արածելու տեղերը և օգտագործված արոտակտորում երկբորդ անդամ արածեցնել միայն 12 ամիս հետո:

Խոզերի աղիքներից ասկարիդները հեռացնելու համար գործադրում են սանտոնին և կալոմել (սանտոնինի գոզան՝ 0,05 գրամ 1 կգ. կենդանի քաշին, կալոմելի դոզան՝ 0,03 գրամ 1 կգ. կենդանի քաշին): Սանտոնին տրվում է կերի նվազագույն քանակի հետ:

Սանտոնին տալուց առաջ խոզերին քաղցած են պա-

Հում ոչ պակաս, քան մեկ օր և դեղը տալուց հետո՝
3—4 ժամ։

Սանտոնին տալուց հետո դուրս եկած ասկարիդ-
ները հավաքում ու ոչնչացնում են (եռացրած ջրով)։
Այն կացոցներում, որտեղ գտնվում էին ասկարի-
դոզով հիվանդ խոզերը, խնամքով մաքրում են աղբը,
նրանց հատակը և միջապատերը հատակից 0,5 մետր
բարձրությամբ թրջում են եռման ջրով և լավ լվա-
նում։ Տաս օր խոզերին կացոցից դուրս չեն թողնում։
Երկու շաբաթ հետո խոզերի զբաղեցրած կացոցները
նույն ձևով մշակում են, իսկ խոզերի մաշկը լվանում
են տաք ջրով և օճառով՝ խոզանակի միջոցով։

ՖԻՆՆՈՅ

Խոզերի Փիննոզը ճիճվային հիվանդություն է, որն
առաջացնում են ժաղավենածել ճիճվիստերի սաղ-
մերը։

Սոլիտերը մի երկար (ժապավենի նման) ճիճու է.
Նա բաղկացած է առանձին մասնիկներից և ապրում է
որպես պարագիտ մարդու աղիքներում։ Սոլիտերի
մասնիկները պարունակում են ձվեր։ Հասած մասնիկ-
ները անջատվում են և կղկղանքի հետ դուրս են գալիս։

Խոզը Փիննոզով հիվանդանում է, երբ ուտում է
սոլիտերի ձվեր պարունակող մարդկային կղկղանք։
Այդ ձվերից խոզի աղիքներում զարգանում են սաղ-
մեր, որոնք աղիքի պատերով թափանցում են մկանների
(մսի) մեջ և այնտեղ առաջացնում բշտիկներ — ֆին-
ներ։

Եթե մարդն օդտապործում է Փիննոզ խոզամիսը
ոչ լավ եփած կամ վատ տապակած վիճակում, այդ
դեպքում նրա աղիքներում այդ Փիններից զարգանում
է հասուն ճիճու — սոլիտեր։

Ֆիննոզը ճանաչելը շատ գժվար է, որովհետև Փին-
նոզով վարակված կենդանին մեծ մասամբ հիվանդու-
թյան խիստ նշաններ ցույց չի տալիս։ Սովորաբար

այլ հիվանդությունը ձանաչում են կենդանուն մորթել-
լուց հետո (ծամելու մկանների, սրտի, լեզվի կտրված-
քը) :

Խողերի ֆիննոգի բուժման համար ոչ մի միջոց
չկա, ամբողջ պայքարը նրա գեմ վարակումը կանխելի
է:

Հիմնական կանխիչ միջոցները: Հետեւ, որ խողա-
բուժական ֆերմայի տերիտորիան մարդկային կղկը-
զանքով չկեղառավի: Դրա համար խողաբուժական
ֆերման խողերի զրասանքի և արոտի տեղից տուանձնա-
ցած վայրերում պետք է ունենա բաժարար քանակու-
թյամբ և կարդին արտաքնոցներ մարդկանց համար:

Խողերին առանց հսկողության չթողնել կոլխոզի
տերիտորիայում:

Խողերի խնամքը չհանձնարարել սովորով հի-
վանոց մարդկանց:

Խողերի միսը պետք է պարագագիր կերպով անսո-
նարութական զննման ենթարկվի:

Թեթև կերպով ֆիննոգով վարակված միսն ուտելու
համար պիտանի է միայն խնամքով երկու ժամ եփելուց
հետո:

Ֆիննոգով խիստ վարակված խողամիսը խոտանում
են և ուղարկում ուտիլիզացիոն կետը:

ԽՈԶԵՐԻ ՄԱՇԿԱՅԻՆ ԵՎ ՊԱՐԱԳԻՏԱՅԻՆ
ՀԻՎԱՆԴԱՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քոս

Խողերի քոսն առաջանում է քոսի տիպերի միջոցով:
Քոսի տիպերը բնակվում են գլխի մաշկի արտաքին
չերտերում (էպիգերմիս), առանձնապես աչքերի ու ա-
կանջների շուրջը, մեջքի, իրանի, կողքերի և ազդրերի
ներքին մակերեսների մաշկի վրա. Երբեմն նրանք բնա-
կալվում են ամբողջ մաշկի մակերեսի վրա:

Էզ տիզը թափանցելով մաշկի արտաքին չերտը,

այնտեղ ձու է զնում (օրական 2—3 հատ, երբեմն 4 հատ, իսկ ամբողջ կյանքում 20—40 ձու)։ Զովերից մոռավոքապէս 48 ժամ հետո գուրս են գալիս թրթուրներ։ Այդ թրթուրները, նպաստավոր պայմաններում, 2—3 շաբաթում դառնում են հասուն տիզեր։

Կենդանու մարմնի վրա էկ տիզերն աղբում են 3—6 շաբաթ, իսկ արուները՝ 5—6 շաբաթ։ Կենդանու մարմնից դուրս (հատակին, պատերի վրա և այլն) տիզերն ապրում են 10—19 օր։

Խոզերը քոսով վարակվում են գլխավորապէս հեփանզների հետ անմիջականորեն շվման մեջ լինելով, մտնավանդ երբ նրանք մի տեղում խռնվոծ են պահպում։

Քոսը կարող է տարածվել նաև խոզերի խնամքի իրերի և ցամքաչի միջոցով։

Քոսը կարող են իրենց հաղուստի և ձեռների միջոցով տարածել խոզերին սպասարկողները։

Քոսով վարակվելու ավելի տքամարդիր են վատ սննդի կամ հիվանդության հետևանքով թուլացած խոզերը։

Քոսի դեպքում կենդանու մաշկի վարակված տեղերը խիստ քոր են գալիս։ Քոսով վարակված խոզերի մաշկի վրա առաջանում են չոր թեփանման եեղեններ, ապա մազը թափիղում է, առաջանում են մոխրակույն սպիտակ կեղեններ, այդ կեղենները, կեղտոսվելու հետեւանքով, մեծ մասամբ գորշուե գույն են առանում։ Վարակված տեղում մաշկը աստիճանաբար հասուանում է, առաջացնելով հաստ ծալքեր, որոնց արանքում առաջանում են մակերեսային խոցեր և պինդ ուռուցքներ։ Հիվանդությունը զանդաղ է զարգանում և ծանր դեպքերում կենդանին հյուծվում է, նույնիսկ ստակում։

Հասուն խոզերի մուս, բացի քորաքոսից, առաջանում է նույն ականջի քոս, որի դեպքում վարակվում է արտաքին լսակողը։ Ականջի խեցիների ներքին մակերեսի վրա այդպիսի դեպքերում առաջանում են հաստ, չերտափոր, խմորանման զեղնագույն կուտակումներ։

Խողի քոսի տիզերն ապրում են նաև ուրիշ կենդա-
նիների, նույնիսկ մարդու մաշկի վրա, առաջացնելով
տեղային թեթև, չուտ անցնող քոս:

Քոսի ճանաչման ամենավստահելի եղանակը կաշ-
վի վարակված տեղերից վերցրած կեղևները միկրոսկո-
պով ուսումնառիթելին է՝ տիզեր հայտնաբերելու հա-
մար:

Քոսի դեմ պայքարելու միջոցները: 1. Քոսով հի-
վանդ խողերին առանձնացնել առողջներից:

2. Շենքերը և խողերի խնամքի բոլոր իրերը խր-
նամքով մաքրել ու ախտահանել:

3. Հիվանդների հետ շփման մեջ եղած խողերին
լվալ կրեոլինի 2 առևտուսանի լուծույթով և ապա նրանց
տեղավորել ախտահանված կացոցներում:

4. Քոսով վարակված խողերին բուժել (մեկուսա-
րանում) հակաքոսային օծանելիքներով:

ՈՉՈՏՈՒԹՅՈՒՆ

Խողերի ոջիլը մուգ դարչնագույն մի միջատ է:
Էդերը ձու են ածում մաղերի վրա: Բարենպաստ պայ-
մաններում (+30—32 աստիճան տաքություն) 10—20,
Էրեմն 30 օրվա ընթացքում զարգանում են սաղմեր
(թրթուրներ), որոնք 2 շաբաթ հետո դառնում են հա-
սուն ձու ածելու ընդունակ ոջիլներ: Զերմաստիճանը
+ 16-ից ցածր լինելու դեպքում ձվից թրթուր չի զար-
գանում: Չորությունը և խոնավությունը նրանց հա-
մար վնասակար են:

Ոջիլներն ու նրանց սաղմերը կարող են առանց
սննդի ապրել 39 օր: Խողի ոջիլը ուրիշ ընտանի կենդա-
նիների վրա չի զարգանում: Ոջիլները կուտակվում են
ականջների մեջ, թիակների վրա, աղջրերի ներքին
մակերեսի վրա, մաշկի ծալքերում, կողերին, գոջինե-
րի մարմնի բոլոր մասերում: Մարմնի վրա շարժվելով
և արյունը ծծելով, ոջիլները խիստ գրգռում են մաշկը
և քոր են առաջացնում: Կենդանիները մշտապես ան-
հանգստանում են և քորվում են զանազան առարկանե-
րին:

Ոջիլներով վարակված խոզերը թուլանում են և հեշտությամբ ենթարկվում զանազան հիվանդությունների: Ոջիլոտությունը սովորաբար սկսում է զարդանալաշնանը և ձմեռվա ընթացքում մեծ ծավալ է ստանում:

Ոջիլներն առանձնապես խիստ զարգանում են վատ սնված կենդանիների վրա:

Առողջ խոզերը սովորաբար ոջիլներով վարակվում են հիվանդ խոզերի հետ միասին պահելիս, այլև ոջիլներով վարակված շենքում և խնամքի իրերի միջոցով:

Ոջիլների դեմ պետք է պայքար սկսել նրանց հայտնաբերումից անմիջապես հետո և այն շարունակել ու հասցնել մինչև վերջը, այն հաշվով, որ խոզերը ձմեռային պահվածքին անցնելու մոմենտին ոջիլներից միանգումայն ազատված լինեն: Թեկուզ և մի վարակված խոզ հայտաբերելիս, ամբողջ հոտը ենթարկվում է բուժման:

Ամառը տաք եղանակին, եթե ուժեղ քամիներ չըկան, խոզերին լողացնում են ավազանների (վաննա) մեջ և լվանում հետեւյալ ախտահանիչ նյութերով 1) կրեոլինի 1-2 տոկոսանի լուծույթով, 29 ծխախոտի 3 տոկոսանի լուծույթով, 3) նավթի 2 տոկոսանի լուծույթով, 4) օճառանավթի 10 տոկոսանի էմուլսիայով (5 մաս կանաչ օճառ, 10 մաս նավթ և 85 մաս ջուր): Խոզերին լվանում են այն հաշվով, որ արելի մայր մըտնելու ժամանակ նրանք արգեն չորացած լինեն:

Ամառվա արելոտ օրերին կրեոլինի, նավթի և ուրիշ նյութերի լուծույթներով մշակելուց հետո խոզերին միքսունի ժամով տեղափորում են շվաք տեղ, որպեսզի արելի ճառադայթները մաշկի վրա վնասակար աղդեցություն չգործեն:

Յուրա եղանակին խոզերի մաշկին քսում են օծանելիք, հատկապես այն տեղերում, որտեղ ոջիլներն ավելի շատ են կուտակվում: Քսելու համար գործադրում են հետեւյալ օծանելիքներից մեկն ու մեկը. 1) նավթ ձեթի հետ (1 մաս նավթ, 2 մաս ձեթ), 2) ծծմբասրնդիկային օծանելիք: Օծանելիքների փոխարեն կարելի է

գործադրել Փոշի ողերիտրումի և նավթալինի խոսնութեց, որը շաղ են աւալիս մաշկի ոջլոտ աեղերը:

Խոզերին մշակում են 2 անդամ, 13 օրվա ընդուժումով, ոբովհետեւ ոջիլների գեմ գործադրվող միջոցները պարագիտների ձվերի վրա չեն ազդում:

Ոջիլների գեմ մշակված խոզերը խոզանոց տեղափոխվելուց առաջ, խոզանոցը խողերի խնամքի հետ կապված իրերի հետ միասին, խնամքով մաքրում ու ախտահանում են, ապա սպիտակացնում են նոր հանգսրած կրի 20 տոկոսանի բուծույթով:

Ոջլոտության գեմ հիմնական պրոֆիլակտիկ միջոցները հանդիսանում են լրավ խնամքը, խոզերին մաքուր պահելը և շենքը պարբերաբար ախտահանելը:

ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռախիտ

Ոչ ճիշտ պահպածքն ու կերակրումը (մութ, խոնալ, վատ օդափոխվող շենքերը, տեղի նեղվածությունը, թարմ օդում զբոսանքի բացակայությունը, հանքային կերերի պակասը և այլն) սովորաբար հանդիսանում են գոջիների մեծ թվով անկման հիմնական պատճառը, իսկ կենդանի մնացած գոջիների աճը ըգգալիորեն ետք մնում և նրանք չատ հաճախ հիվանդանում են ռախիտով: Գոջիները ռախիտով հիվանդանում են 3—8 ամսական հասակում: Հիվանդությունը երկար ժամանակ է տևում, ըստ որում գոջիներն ունենում են նորմալ ջերմաստիճան:

Հիվանդության սկզբին գոջիները ավելի շատ են պառկում, ցանկության չունեն վեր կենալու և դժվարությամբ են շարժվում, լարված քայլք են ունենում, տեղում կանոնած ժամանակ հաճախ ուները բարձրացնում-իջեցնում են: Նրանք նորմալ ճաշակը կորցնում են—կրծում են կերատաշտերը, հատակը, միջապատճերը, խմում են գոմաղբահյութը: Աստիճանաբար ուների ցավերը շարժման ժամանակ ուժեղանում են, որի

Հետեանքով հիվանդները տեղից վերկենալիս ուժեղ նը գում են և սողում հատակի վրա՝ հենվելով առջեք ստքերին և քաշ տալով կարծես կաթվածահար եղած հետույքը, կամ ընդհակառակը, հենվելով կիսածալած հետին ստքերին, առաջ են շարժում առջեկի ոտները։ Հիվանդության այդ ստադիայում գոջիների ոսկորները փափկանում են, որի հետեանքով ոտները ծռվում են և թրի ձեւ են ստանում։

Թախիտով հիվանդ գոջիների մկանները թույլ են զարգացած, ոտների հողակապերը թուլացած են լինում։ Երբեմն նկատվում է մեջքի ծովածություն դեպի կողքերը, դեպի վեր կամ ներքեւ։ Կողերը փոս են ընկնում կամ չափից շատ դուրս են ընկնում, որի հետեւ վանքով փոխվում է կրծքի ձևը։ Կրծքի վանդակի անբավարար ճկունության հետեանքով դժվարանում է չնչառությունը։ Շնչառությունն էլ ավելի է դժվարանում գլխի ոսկորների ուռչելու և ծովելու հետեանքով։ Իրը տեղի է ունենում մեծ մասամբ հիվանդության ընթացքի վերջում։ Գոջիները ամենից հաճախ սատկում են հյուծվելուց, երբեմն էլ չնչահեղձ լինելուց։

Թախիտի կանխումը։ Մսուրային շրջանում հղի մերուններին ծնից 15 օր առաջ կերի հետ միասին տալիս են ձկան յուղ, օրական երեք անգամ մեկական ճաշի զգալ։ Գոջիները ծնվելու հենց առաջին օրվանից ապահովվում են հանքային կերերով (կավիճ, ածուխ, կարմիր կավ, ոսկրալյուր)։ 20—30 օրական հասակից գոջիներին տալիս են թիթեռնածաղկավոր խոտի տերեաներ (երեքնուկ, առվույտ), ամառը ապահովում են առոտով, իսկ ձմեռը՝ արեսոտ օրերին, զրոսանք թարմ օգում։

Թախիտի բուժումը։ Թախիտով հիվանդ գոջիներին տալիս են ձկան յուղ, որը պարունակում է հակառախիտային վիտամին (D)- Ձկան յուղը տրվում է հիվանդ գոջիներին կերի հետ միասին, օրական 2—3 անգամ մեկական թեյի կամ ճաշի գդալ, նայած կենդա-

Նու հասակին ու քաշին։ Լուծի դեպքում ձկան յուղ չպետք է տալ։

Բուժման հետ միաժամանակ ռախիտով հիվանդի խոզերի համար ստեղծում են կերակրման, պահվածքի ու խնամքի նորմալ պայմաններ։

ԹՈՒՆԱՎՈՐ ՆՑՈՒԹԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԿԵՐԵՐԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կասկածելի որակ ունեցող բոլոր կերերը նախքան խոզերին կերցնելը, անհրաժեշտ է ստուգել դրա համար յուրաքանչյուր կերից պետք է վերցնել միջին նըմուշ 1 կգ։ չափ և ուղարկել լաբորատորիա՝ անալիզ կատարելու։

Խոզերին կերցվող ամենատարածված կերերը, որոնք պարունակում են թունավոր նյութեր, հետեւյալ ներն են։

Ծլած կարտոֆիլ։ Զհասած կարտոֆիլի և առանձնապես կարտոֆիլի ծլերի մեջ պարունակվում է մեծ քանակությամբ թունավոր նյութ-սոլյանին (մինչև 0,5 տոկոս)։ Խոզերին այդպիսի կարտոֆիլ կերցնելիս մարսողական օրգանների ծանր հիվանդություն կարող է առաջանալ։

Ծլած կարտոֆիլը խոզերին կերցնելուց առաջ պետք է ծիլերը կտրել-հեռացնել, իսկ կարտոֆիլը եփել և խոզերին կերցնել քիչ քանակությամբ։ Ծլած կարտոֆիլի եփելուց հետո մնացած ջուրը չպետք է տալ խոզերին, որովհետեւ դրա մեջ մեծ քանակությամբ սոլանին կա։ Խոզերին չպետք է կերցնել նաև կարտոֆիլի թփեր։ Առողջ և հասուն կարտոֆիլը նույնպես պետք է կերցնել եփած վիճակում, բայց եփելուց առաջ լավ լվալ ջրով, որ կեղտից մաքրվի։ Եփած կարտոֆիլը չուտ է թթվում, այդ պատճառով պետք է այն կերցնել գույնակում և կերատաշտերը մաքուր պահել։

Բամբակի քուսպ։ Բամբակի քուսպի մեջ պարունակվում է թունավոր նյութ-գոսսիպոլ։ Բամբակի

քուսպ չի կարելի կերցնել հղի, ծծմայր խոզերին և գործիներին: Բտվող խոզերի ռացիոնի մեջ կարելի է մտցը նել բամբակի քուսպ նրա սննդարժեքի 10 տոկոսից ոչ ավելի կամ մոտավորապես օրական կես կիլո ամեն մի գլխին, նախապես լաբորատորիայում որոշելով նրա մեջ գոսսիպով տոկոսը:

Բամբակի քուսպի թունավոր հատկությունը կարելի է վերացնել այն լավ եփելով կամ երկաթե արջասպի 1 տոկոսանի լուծույթով մշակելով:

ՍՆԿԵՐՈՎ ՎԱՐԱԿՎԱԾ ԿԵՐԵՐ.

Եղջերասունկ: Սա եղջյուրի ձև ունեցող մի սունկէ է, որ հատիկի փոխարեն զարդանում է աշորայի հասկերի մեջ, իսկ անձրևային եղանակին նաև ուրիշ հացազգի բույսերի վրա—վարսակի, գարու և այլն:

Եթե կենդանուն կերցվում է 0,2 տոկոս եղջերասունկ պարունակող լին, նա կարող է թունավորվել, նույնիսկ սատկել:

Թունավորման նշանները—փսխում, ծակոցներ, փորլուծ, երերուն քայլվածք, վերջավորությունների անըդդայցում, աչքի բիբերի լայնացում, քնկոտություն, ջղաձղություններ:

Հղի մերուններին կերցնելիս, բացի հիշյալ նշաններից, կարող է տեղի ունենալ վիժում, արզանդի և ուղիղ աղիքի իջվածք:

Բուժումը: Կերը փոխել. փորը թուլացնող (գլաւուքերյան աղ) և մեզ առաջացնող միջոցներ (գինուպտուղների խաշու), ջրալի կերեր:

Մրիկ: Մրիկը լինում է բոլոր հացահատիկների վրա: Լինում են մի քանի տեսակ մրիկներ. մի տեսակը վարակում է բույսի բոլոր մասերը և առաջացնում սև փոշանման անհոտ զանգված, մյուս տեսակը վարակում է միայն հացազդիների հատիկները, որոնք սեանում են և սելյողկայի աղաջրի հոտ արձակում:

Կենդանիներին մրիկով վարակված կերեր կերցնե-

Այս նրանց չնչառությունն արագանում է և առատ թուք
է հոսում բերանից: Ապա առաջ է դալիս թուլություն,
երերում քայլվածք, վերջապես, կենդանիներն ընկնում
են գետին ընդհանուր կաթվածի վիճակում, առանց
շարժման նշաններ ցույց տալու: Ուրիշ դեպքերում մը-
րիկով վարակվելիս նկատվում են արտաթորելու և մի-
զելու հաճախակի փորձեր, ապա փորլուծ, թքահոսու-
թյուն, կոպերի ուռուցք. կենդանին դժվար է չնչում:

Բորբոսասնկեր: Պատահում են շատ բազմազան կե-
րերի վրա: Բորբոսնած կերերն ունենում են նեխահոտ,
դառն համ և հաճախ նեխում են՝ առաջացնելով թունա-
վոր նյութեր: Այդպիսի կերեր կենդանիներին կերցնե-
լիս առաջանում է ստամոքսի և աղիքների բորբոքում:
Բորբոսնած կերեր կերցնելիս կենդանիների մոտ կարող
են առաջանալ նյարդային խանդարումներ, կաթված,
երիկամների բորբոքում, վիժում և այլն:

Ժանգասնկեր: Մրանք լինում են գլխավորապես
զանգան կերաբույսերի տերևների և ցողունների վրա
ժանդակարմիր բծերի ձեռվ, որոնք ամառվա վերջում
մուգ գույն են ստանում: Ժանդով վարակված կերեր
կերցնելիս խոզերը կարող են թունավորվել: Թունավոր-
ման նշաններն են՝ արնախառն փորլուծ, կաշմիր մեղ,
ամբողջ մարմնի վրա եղինջաբծեր, երբեմն կաթված և
վիժում:

Ց Ա. Ն Կ


Հեղինակի կրդմից		3
Խոզաբուծության նշանակությունը		4
Խոզերի ցեղերը		6
Խոզերի բուժումը		8
ա) Տոհմական վարագի ընտրությունը		8
բ) (Նորոգման բեմոնտի) մատղաշների ընտրությունը		10
գ) Մերումների ու վարազների ընտրությունը զուգավորման համար		10
Ֆերմայի արտադրական պլանը		11
ա) Խոզերի գլխաքանակի աճի ու շարժման պլանը		12
բ) Զուգավորումների ու ծիների պլանը		13
գ) Խոզերի բաման, պետությանը միս հանձնելու ու վաճառքի պլանը		15
դ) Կերի ծախսման պլանը		16
ե) Արտադրական առաջադրանքը և աշխօրերի հաշվումը ֆերմայի առանձին աշխատողների համար		18
Խոզերի կերակրման կազմակերպումը		18
Խոզերի կերակրումը նորմայով		21
Կերերի նախապատրաստումը կերակրելուց առաջ		27
ա) Կոպիտ կերերի նախապատրաստումը		27
բ) Հյութալի կերերի նախապատրաստումը		28
գ) Հատիկային կերերի նախապատրաստումը		28
դ) Քուապերի նախապատրաստումը		28
Վարազների կերակրումն ու պահվածքը		29
Մերումների կերակրումը՝ նրանց զուգավորման համար նախապատրաստելու շրջանում		31
Հղի մերումների կերակրումը		32
Մերումների նախապատրաստումը ծննդաբերության համար և ծնի ընդունումը		34

Մոր տակ թողնելիք գոջիների թիվը և պտուկների բաշխումը նրանց միջև	37
Ծծմայր մերունների կերակրումն ու խնամքը	38
Ծծկեր գոճիների աճեցումը	41
Ծծից կտրած գոջիների աճեցումը	43
Խողերի ամառային պահվածքը	45
Արոտների կազմակերպումը	46
Արոտների օգտագործումը	46
Ճամբարների կառուցումը	47
 Խողերի բառում	48
 Խողերի բուման տիպերը	50
Բեկոնային բուռմ	51
Մսալին բուռմ	53
Կիսաճարպային կամ մսաճարպային բուռմ	54
Ճարպային բուռմ	54
Խողերի կերակրման ընդհանուր կանոնները ամեն տեսակ բուռմների դեպքում	57
 Արտադրական-զռոտեխնիկական հաշվառում	59
Խողերի համարակալումը	64
Գոջիների ականչի կտրվածքներով համարակալելը	66
 Աշխատանքի կազմակերպումը և վարձատրումը	68
Մշտական խողաբուծական բրիգադաների կազմակերպումը	69
Աշխատանքի կարգը ֆերմայում	70
Գործավարձի կազմակերպումը	73
Աշխատանքի հաշվառումը	78
Ֆերմայի շինարարությունը	79
 Խողերի գլխավոր հիվանդությունները և նրանց դեմ պայքարելու միջոցները	
Հիվանդությունները կանխելու հիմնական միջոցառումները	81
Ամենից ավելի շատ գործածական ախտահանիչ միջոցները	82

Պըոֆիլակտիկ միջոցառումներ խոզերի հիվանդությունները	83
կանխելու համար	
Խոզանոցները ձմեռվա պահպաժքի համար նախապատրաս- տելը	85
Խոզերի զննումը	86
Ինչպես պաշտպանել խոզաբուծական ֆերման վարակիչ հիվանդություններից	86
Մանիստարական կանոններ կենդանիներին խնամողների համար	87
Ինչպես ճանաչել հիվանդ խոզերին	88
Ո՞րտեղ պահել վարակիչ հիվանդությամբ հիվանդ խոզերին	89
Խոզերի անկման պատճառը գտնելը	90
Դիակները հավաքելը	90

Խոզերի վարակիչ նիվանդությունները

Խոզերի ժանտախտը	91
Խոզերի արյունահոս սեպտիցիէմիա	95
Խոզերի պարատիֆը	98
Գոշիների պարատիֆի դեմ պարբարելու միջոցները	101
Գոշիների շնչառական ուլիների բորբոքում	101
Խոզերի դիզենտիրիա	103
Խոզերի նիճվային նիվանդությունները	105
Ֆիննող	107
Խոզերի մաշկային և պարազիտային հիվանդությունները	108
Քոս	108
Ոչլոտություն	110
Ոչ վարակիչ հիվանդություններ	112
Ռախիտ	112
Թունավոր նյութեր պարունակող կերերից առաջացող հի- վանդություններ	114
Մնկերով վարակված կերեր	115



Պատ. խմբագիր՝ Հ. Գ. ԹՈՒՄԱՆՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ի. ՎՈՐԴԻԱՆՅԱՆ

ՎՃ 01544 Պատվեր 493, այլաժ 1500, տպագր. 7,3 մ., հեղ. 5 մ.
Սոսորագրված է տպագրության 25-Լ-1947 թ.

ՀԱՅՈ ՄՍ-ին կից Պոլիգր. և Հրատ. Վարչ. № 1 տպարան, Ենիքնի № 65-
Երևան, 1947 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008020

ԳԻՆԸ 6 Ռ.

658

A II
19094